

# ՄԻՈՆ



ՅՈՒՂԻՍ

ՕԴՈՍՏՈՍ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԹԻՒՆ 7-8-9

1999



# ՄԻՈՒՆ

ԱՄՍԱԳԻՐ  
ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՍՄԱԽՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԽՈՒԹԵԱՆ  
ՀԳ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

1999	ՅՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ	ԹԻՒ 7 - 8 - 9
1999	July - August - September	No. 7 - 8 - 9

## SION

VOL. 73

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY  
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

*Proprietor : His Beatitude The Armenian Patriarch Of Jerusalem*




St. James Press, Jerusalem





ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ (1982-1999)

**ՇԱՅՐԱՎՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՍԵՒՆ**



**SUPREME PATRIARCH  
CATHOLICOS  
OF ALL ARMENIANS  
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN**

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՕՍԲ**

**Ի ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՍԵՒՆՈՒՄ**

**ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԱՂՕԹԻՑ ՅԵՏՈՑ**

Մի անգամ ևս ծունկի եմ գալիս Իշման սրբազնասուրբ Սեղանի առաջ, և ողջ գոյութեամբս փառք և գոհութիւն եմ ընծայում Բարձրեալն Աստուծոյ որ շնորհեց ինձ ողջամբ վերադառնալ ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին վեց ամիսների բացակայութիւնից յետոյ, գուտ առողջական պատճառներով. որոնց դուք արդէն ծանօթ էք և կարիք չկայ անելին ասելու:

Այսօր Աւագ երկուշաբթի օր է: Ահա մտել եմք մեր Հայց. Առաքելական Սուրբ եկեղեցու ամէնէն հոգելից շարաքույլ մէջ, յառաջիկայ Կիրակի տօնախմբելու համար մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի յարութեան հրաշագան դէպքը, որ սիրտն է քրիստոնէական մեր հաւատքին:

Թէև բժշկական տեսակետից դիտուած առողջական վիճակս չի վերականգնուել, բայց ամենախոր իղզս էր լինել իմ ու ամբողջ հայ ժողովրդի Հոգևոր Տան մէջ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և այստեղ անցկացնել ապաքինման ընթացքը, միասին տօնելով մահուան վրայ Քրիստոսի տարած յաղթանակը՝ Սուրբ Յարութեան տօնը:

\*\*\*

Առաջին հերթին, ցանկանում եմ այս առաջին պահին իմ ջերմ շնորհակալութիւնները և բարձրագոյն աստիճանի գնահատանքը յայտնել Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միաբանութեան ուխտեալ անդամներին՝ արքեպիսկոպոսներին, եպիսկոպոսներին, վարդապետներին, արքեղաներին, քահանաներին, սարկաւազներին, իմ բացակայութեան շրջանին ձեր ցոյց տուած նախանձախնդիր ոգուն և նուիրեալ աշխատանքին համար ի պայծառութիւն աստուածակառոյց Սուրբ Աթոռոյս: Շնորհակալութիւններս նաև Հոգևոր Գերագոյն Խորհրդին և Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ներքոյ գործող պաշտօնէութեան կամ անձնակազմի աւագ և կրտսեր անդամներին և Վանական Խորհրդին: Հայրական ջերմ գնահատանքս նաև Այրարատեան Հայրապետական Թեմի Առաջնորդական Փոխանորդ՝ Գերաշնորհ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսեանին, որ անցնող չորս ամիսների ընթացքում՝ 1 Դեկտեմբեր 1998-էն այս կողմ, վարեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդի պաշտօնը Մեր տնօրինութեամբ և աչալուրջ և եռանդուն ջանասիրութեամբ: Մեր ապաքինման այս շրջանին երբ տակաւին լիովին ի վիճակի չեմք կատարելու Մեր բոլոր պարտաւորութիւնները նա կշարունակէ իր պաշտօնը:



\*\*

Սիրելիք, շատ դժուար օրերի միջին անցալ և էլի անցնում եմ առողջական տեսակետից: Խորհրդածելու պահեր ունեցալ: Աւելի պայծառ դարձաւ ինձ համար այն սկզբունքը որ մարդ էակը, քրիստոնեայ մարդը, կամ հոգեւորական անձը իր իսկական բարձրագոյն արժէքը կը գտնի *պարտականութեան կատարման մէջ*, կրկնում եմ՝ *պարտականութեան կատարում*: Պարտականութիւն չունեցող, պարտաւորութիւն չգզացող, պատասխանատուութեան պարտաստականութիւն չունեցող անձին կեանքը երկրի վրայ խոտի կը նմանի, ըստ Սաղմոսերգոյն քառերուն:

Լինի եկեղեցու մէջ, լինի պետութեան մէջ, լինի հասարակական ու եկ կազմակերպութեան կամ հաստատութեան մէջ մարդու կարողութիւնից աւելի թանկ է այդ կարողութիւնը պարկեշտ ձևով, ամբողջական գործադրմամբ գործի վերածելու պարտաճանաչութիւնը: Կեանքին *էրկար* տեղողութիւնից աւելի արժէք ունի կեանքի *քովանդակալից* լինելու հանգամանքը, ինչպէս շեշտակի կերպով ասել է Օրմանեան հոշակաւոր գիտնական հոգեւորականը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր ուխտեալ որդւոց պարտաճանաչ ու ամբողջանուէր ծառայութեամբ պիտի լինի *"լոյսի փարոս", "լոյսի խորան", "սիրոյ օճախ",* "արի արանց (արութեան գործոց) քաջ գործերու" շինը հանգիստարան»: Եկէ՛ք բոլորս վերանորոգուա՛ծ ոգիով նայինք կեանքին: Կեանքը ճիշդ տուրքն է Աստծուն: Բայց մի տուրք որի հետ եմ կապուած պարտականութիւններ: Զմտաճանաչ Աւետարանի խօսքը. *«Ծառայք անպիտանք էմք, զոր ինչ պարտն էր առնել՝ արարաք»*: (Մենք անպէտք ծառաներ ենք. արժէք կ'ունենանք երբ անեմք այն ինչ որ *պարտաւոր ենք* անել): Առողջութիւնը արժեւորել գիտնանք: Ամենից մեծ արժանիքն է դա:

Եկէ՛ք շէնացնենք մեր Տունը՝ Մայր Աթոռը մեր պարտականութիւնների գիտակցական առողջ կատարումով:

\*\*

Միաբանութեան Մեր խօսքը ուղղել ետք, կը ցանկանայի իմ եղբայրական սիրոյ և շնորհակալութեան խօսքը ուղղել մեր Ս. Եկեղեցու Նուիրապետական Աթոռների գահակալներին՝ Կաթողիկոսին Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատրիարքներին Երուսաղէմի Առաքելական Աթոռոյն և Կ. Պոլսոյ պատմական Աթոռոյն իրենց ցոյց տուած անկեղծօրէն և շերմօրէն եղբայրական վերաբերումին՝ հեռախօսային, թղթակցային և անձնական այցելութեամբ ի Նիւ Եորք արտայայտած բարեմաղթութիւններին և կատարած աղօթքներին համար: Թող Ամենակալն Աստուած առողջութեան բարիքները առատօրէն ցանէ նրանց կեանքին մէջ:

Շնորհակալութեան Մեր խօսքը նաև մեր բոլոր Թեմերին և Թեմակալ Առաջնորդներին, Թեմական մարմիններին ու հաւատացեալ ժողովրդի զաւակներին և համայնքային կազմակերպութիւններին որոնց աղօթքների և բարեմաղթութեանց ոյժը զգացիմ միշտ այս նեղութեան ծանր օրերին:

Շնորհակալութեան այս խօսքում ձգտում ենք առանձնապէս յիշել Ամերիկահայոց Արևելեան Թեմը ի Նիւ Եորք, իր Թեմակալ Սրբազան Առաջնորդով և Թեմական Խորհրդով ու Առաջնորդարանի պաշտօնէութեամբ, որոնք Նիւ Եորքում օրինակելի վերաբերում ցոյց

տունին Մեր նկատմամբ:

Շնորհակալութեան մասնաւոր խօսքս բոլոր բժիշկներին, օտար և հայ, որոնք իրենց գերագոյն կարելին ի գործ դրին Մեր հիւանդութեան դարմանումին համար: Թող Աստուած առատօրէն վարձահատոյց ըլլայ բոլորին:

Շնորհակալութեան անչափելի և անտարազելի խօսքս ուղղում եմ այն բարեկամ անձերին, որոնք, աշխարհի չորս ծագերից իրենց զգացումները արտայայտեցին անձնական այցելութեամբ, հեռաձայնային խօսակցութեամբ և նամակներով, ծաղկեփուլերով: Ինձ համար նրանց սիրազեղ արտայայտութիւնը սխալ չէր փաստն է իրենց սիրոյն հանդէպ մեր սուրբ եկեղեցիին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

\* \*

Եւ ահա, փա՛ռք Աստուծոյ, Մայր Հայրենիքի հողի վրայ եմ: Մեր ազգային գոյութեան խարխիսն է այս հողը, քրիստոնէական հաւատով ոռոգուած, սուրբերու և հերոսներու արեամբ նուիրագործուած:

Իմ ամենախոր աղօթքն է որ ամուր, ապահով և զարգացողական ընթացքի մէջ մնայ մեր հայրենիքը իր պետութեամբ, եկեղեցիով և ժողովրդով: Ցատուկ շնորհակալութիւններս եմ յայտնում Հանրապետութեան Նախագահին՝ Վսեմաշուք Տիար Ռոպէրթ Քոչարեանին և պետական այն բարձրաստիճան անձերին որոնք յաճախ իրենց բարեմաղթութիւնները յայտնեցին Մեզի բազում եղանակներով: Մասնաւոր շնորհակալութիւններ նաև Արցախի Նախագահ՝ Վսեմաշուք Տիար Արկադի Ղուկասեանին որ ի Միացեալ Նահանգներ տուած իր այցելութեան ընթացքին անձամբ այցելեց Մեզ և իր բարեմաղթութեանց հետ միասին իր սէրը յայտնեց հանդէպ Հայց. Առաքելական եկեղեցւոյ:

Կոչ եմ անում մեր ժողովրդին որ իր աչքի բիրի նման մաքուր և առողջ պահի իր հայրենիքը: Հայց. Առաքելական եկեղեցին իր բոլոր միջոցներով կանգնած է կողքին մեր հայրենիքի պետական իշխանութեանց: Քրիստոնէական հաւատքը՝ մեր հայրերի աւանդութեամբ մեզի փոխանցուած, մեր հայրենիքի առողջութեան հիմնական տուեալներուն առաջիններէն է և վստահ եմ որ մեր հայրենիքի առողջութիւնը ընդհանրական արժէք է, վեր՝ բոլոր մասնակի և ժամանակաւոր նկատումներէ:

Թող Աստուծոյ ամենատես Աչքը և ամենագոր Աչքը հովանի և պահապան լինեն մեր ժողովրդին ի Մայր Հայաստան, յԱրցախ և ի սփիւռս աշխարհի. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ի Մայր Տաճար Ս. Էջմիածին

29 Մարտ 1999

## ՀԱՆԳԻՍ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Նոր վշտով յայտնում ենք, որ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Վեհարանում Յունիսի 29ին, Նրեմշաբթի, ժամը 17:50ին, անժամանակ, կեանքի 67րդ տարում ի Տէր հանգաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ երկարատեւ եւ ծանր հիւանդութիւնից յետոյ:

Ամենայն Հայոց 131րդ Հայրապետը Լուսաւորչի Աթոռին բազմեց 1995թ. Ապրիլի 4ի ազգային-եկեղեցական սրբազուար ժողովի ընտրութեամբ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան 18ամեայ գահակալի հարուստ փորձառութեամբ: Նորին Սրբութիւն Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում քառամեայ հովուապետութեան տարիներին իմաստութեամբ ու անսակարկ նուիրումով հովուեց Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին: Նորին Սրբութիւնը Մայր Հայրենիքի, Արցախի եւ աշխրհսփիւռ մեր ժողովրդի հոգեւոր վերագարթօմէքի, հօգորութեան եւ միասնութեան սրբազան առաքելութեանը ծառայացրեց իր եռամդն ու անխոնջ ջանքերը, խօսքն ու գործը:

«Հարկ ի վերայ մեր կայ» պարտքի զգացումով իր հայեացքը յառած քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակման 1700ամեայ դարակազմիկ յոբելեանին, Հայոց Հայրապետն արդիւնաւորեց հովուապետութեան կարճատեւ իր շրջանի իւրաքանչիւր օրն ու ժամը: Վերակազմուեցին Հայ Եկեղեցու Թեմերը Հայաստանում եւ ԱՊՀ երկրներում: Ընդարձակուեց եկեղեցաշինութիւնը՝ վերահորդուեցին եւ քարեգարդուեցին խոհարհուած եկեղեցիներ ու վանքեր, կառուցուեցին մոլորքը: Գեորգեան Ճեմարանի մոլորգեալ յարկից մերս հասունացաւ

հոգեւոր սպասաւորների մեր սերունդ: Աշխուժացաւ եւ ընդարձակուեց Քրիստոնէական Դաստիարակութեան ու Քարոզչութեան Կենտրոնի գործունէութիւնը: Գործել սկսեց Օշականի «Սբ. Մեսրոպ Մաշտոց» մորաբաց դպրատունը: Արգասաբեր եղաւ Մայր Աթոռի հրատարակչական գործունէութիւնը՝ հրատարակութեամբ աստուածաբանական եւ հայագիտական աշխատութիւնների, որոնց շարքում՝ Վեհափառ հայրապետի մեծաթիւ գրքեր ու գրութեմքեր: 1700 ամեակի շրջագծում Մոսկուայի Կրեմլում, Վատիկանում եւ աշխարհի այլ քաղաքներում բացուեցին եկեղեցական արուեստի ցուցահանդէսներ, կազմակերպուեցին գիտաժողովներ եւ ուխտագնացութիւններ՝ դէպի հայրենի սրբավայրեր: Կեանքի կոչուեցին սոցիալական զարգացման ծրագրեր՝ ուղղուած տնտեսական դժուարութիւնների յաղթահարմանը Հայաստանում եւ Արցախում: Իր քարծր հեղինակութեամբ Վեհափառ Հայրապետն առաւել ամրապնդեց Եկումէնիկ կապերը Բոյր եկեղեցիների հետ, հովուապետական յանձնարարիկ կապերով միութեամբ եւ օրհնութիւն բաշխեց հաւատաւոր մեր ժողովրդին ի հայրենիս եւ սփիւռս: Նորին Սրբութիւնը ՀՀ Գիտութիւնների Ազգային ակադեմիայի պատուաւոր անդամ է: Վեհափառ Հայրապետը, որպէս խոշոր մտաւորական արժանացել է աշխարհի մի շարք ակադեմիաների եւ համալսարանների պատուաւոր դոկտորի կոչմանը:

Մայր Աթոռի սգաւոր միաբանութիւնը՝ Սուրբ Հոգու միութարութիւնն է հայցում համայն հայրութեանը, խորագգաց հաւատաւոր մեր ժողովրդի եւ Հայրենի պետութեան առ Վեհափառ Հայրապետը ցուցաբերած որդիական սիրոյ եւ

սրտակցութեամբ դրսևորումից, Մայր Աթոռ Սիմիոնապոլիսում և Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը յայտարարում են քառասունհինգ տարեկան:

Աղօթք, խումկ և բիւր օրհնութիւն Վեհափառ Հայրապետի անմեռ յիշատակին: Թող Բարին Աստուած Իր Փառաց Պսակին արժանացնի և երկնային երանաւտ

խաղաղութեամբ մէջ ընդունի սիրեցեալ Հայրապետի լոյս հոգին՝ ընդ դասս աստուածագգեաց Հայոց երանեալ հայրապետաց:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

ԳԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՍ  
ՍՈՒՐԱ ԷԶՄԻԱՄՆԻ

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԻՒՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը (աւագանի անուամբ Նշան Սարգսեան) ծնունդ է 1932 թ. Օգոստոս 27ին Քեսապում (Սիրիա): Նախնական կրթութիւնը ստացել է հայրենի գիւղի Ուսումնասիրաց միացեալ վարժարանում, որից յետոյ ուսումնառութիւնը շարունակել է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքում (1946թ.): Այստեղ էլ, 1949թ. Մայիսի 29ին ձեռնադրուել է սարկաւագ: 1952թ. աւարտել է ուսումնառութիւնը Դպրեվանքի Ընծայարանի բաժնում:

1952թ. Սեպտեմբերի 28ին, ձեռնադրուելով կուսակոմ քահանայ, ի յիշատակ մորոգ վախճանեալ Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսի (Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն), վերակոչւում է Գարեգին արեղայ և դառնում Կիլիկիոյ Միաբանութեամբ ուխտի անդամ: Պաշտպանելով վարդապետական աւարտաճառը՝ «Հայաստանեայց եկեղեցւոյ աստուածաբանութիւնը ըստ Հայ Տարականնորում» քեմայով, 1955թ. Յունիսի 5ին ստանում է վարդապետական աստիճան: Նոյն թուականին պաշտօնավարում է Դպրեվանքում որպէս ուսուցիչ և վերակացու: Որոշ ժամանակ անց (1956թ.)

ստանձնում է Դպրեվանքի տեսուչի պաշտօնը:

1957-1959թթ. Գարեգին վարդապետն ուսումնառութիւնը շարունակում է Օսֆորդի համալսարանում, որտեղ հետեւում է աստուածաբանական բարձրագոյն ուսման և ստանում է գրականութեան բակալոթիայի աստիճան՝ որպէս աւարտաճառ մերկայացնելով «Քաղկեդոնի ժողովը և Հայ եկեղեցին» խորագիրը կրող աշխատասիրութիւնը (1965թ. հրատարակուել է Լոնդոնի S.P.C.K. հրատարակչատան կողմից, վերահրատարակուել է Նիւ Եորքում, 1976թ.):

1960թ. Օսֆորդում աւարտելուց վարդապետը գործում մասնակցութիւն է ունենում միջեկեղեցական մի շարք համագումարների ու ժողովների՝ որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մերկայացուցիչ: Խորէն Ա. Կաթողիկոսի ընտրութիւնից յետոյ (1963թ. Մայիսի 5) Գարեգին վարդապետը կարեւոր դեր է կատարում մորընտիր կաթողիկոսի պաշտօնական այցելութիւններին կազմակերպման գործում: Միաժամանակ մասնակցում է ԵՃԽ միջեկեղեցական կարեւոր համաժողովների:

Դիտորդի կարգավիճակով

մասնակցում է Վատիկանի երկրորդ ժողովի երեք յաջորդական միսսերին (1963-1965թթ.) եւ Անկլիկան եկեղեցու Լամբեթի համաժողովին (1968թ.): Նշանակալից է նրա դերը Ադիս Աբեբայում արեւելեան ուղղափառ դաւանակից ինչը եկեղեցիների հոգեւոր առաջնորդների համագումարի կազմակերպման գործում:

Այս շրջանում աստուածաբանութեան, գրականութեան, պատմութեան եւ մշակույթի թեմաներով դասախօսել է ՀԲԸՄ Դարուհի Յակոբեան Երկրորդական վարժարանում, Պէյրուքի «Համագգայինի» Նշան Փալանջեան ճեմարանում, Beirut College for Women-ում (ներկայումս՝ Beirut University College) եւ Պէյրուքի Ամերիկեան համալսարանում (A.U.B.), դասախօսութիւններով հանդէս է եկել մի շարք եկեղեցիներում:

1968թ. Յունիսի 16ին, ի գնահատութիւն մուրիսալ ծառայութեան, Խորէն Ա. Կաթողիկոսի օրհնութեամբ նրան շնորհւում է Մայրագոյն վարդապետի աստիճան:

1964թ. Յունուարի 19ին ձեռնադրուել է եպիսկոպոս, 1973թ. Ապրիլի 26ին արժանացել է արքեպիսկոպոսի տիտղոսի:

1971-1973թթ. Գարեգին Եպիսկոպոսը հոգեւոր պատասխանատու ծառայութեան է անցնում Իրանում (Նոր Զուլա):

1978-1977թ. Գարեգին արքեպիսկոպոսը հոգեւոր ծառայութեան է մեկնում ԱՄՆ (Նիւ Եորկ):

1978-1977թթ. Լիբանանում բռնկուած քաղաքացիական պատերազմի տարիներին վնասները դեր է ունենում Լիբանանահայութեան օժանդակութեան կենսական գործում:

1977թ. Մայիսի 22ին, Խորէն Ա. Կաթողիկոսի Հայրապետութեան շրջանում ընտրուում է Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռակից Կաթողիկոս: 1983ին, Խորէն Ա.

Կաթողիկոսի վախճանելուց յետոյ հռչակոււմ է Իբրեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոս:

Անթիպատի Աթոռում 18 տարիների գահակալութեան ընթացքում Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսը զարկ է տալիս ազգային-կրօնական մշակութային եւ շինարարական աշխատանքներին: Գարեգին Բ. Կաթողիկոսը հաստատում է քրիստոնէական դաստիարակութեան քաժանմունքը: Նրա յատուկ ուշադրութեան առարկան է դառնում Դպրեվանքը (1977թ. Անթիպատից այն փոխադրում է Բիկֆայա), որն ընդարձակուելով ու արդիականացնելով՝ մայաստում է աստուածաբանական ուսուցման բարելաւմը: Գարեգին Բ. Կաթողիկոսը առանձնապէս տուկ ուշադրութիւն է դարձնում հրաշարակչական գործին, հիմք է դրւում թանգարան-մատենադարանի շէնքի շինութեանը:

Կաթողիկոսութեան շրջանում ձեռնարկում է հովուապետական այցելութիւններ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմեր: Միջեկեղեցական շրջանակներում այցելութիւններ է տալիս Յովհաննէս-Պօղոս Բ. Պապին (Վատիկան), Անկլիկան եկեղեցու պետ Քենթրքերիի արքեպիսկոպոս Դր. Ռոքերտ Ռանսիին (Լոնտոն), Շվեյցարիայի Աւետարանական եկեղեցիների միութեանը, Դանիայի եւ Գերմանիայի Լութերական եկեղեցիներին, Աւստրալիայի եկեղեցիների խորհրդին եւ Ղպտի եկեղեցու պետ Նորին Արքեպիսկոպոս Գ. Պատրիարքին (Եգիպտոս):

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տարիներին քաղաքիւ անգամներ այցելել է Մայր Աթոռ Սբ. Էջիածին՝ թէ խորհրդային եւ թէ նորանկախ շրջանում: 1988թ. Դեկտեմբերի 7ի երկրաշարժից յետոյ Գարեգին Բ. Կաթողիկոսը կամգմեց երջանկայիշատակ վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմի՝ բերելով իր

եղբայրական սերն ու զօրակցութիւնը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է:

Վազգէն Ա. Կաթողիկոսի վախճանութից յետոյ, 1995թ. Ապրիլի 4ին Ազգային-եկեղեցական սրբազուսմար ժողովը Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսին ընտրում է Մայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս (գահակալութեան հանդիսութիւնը տեղի ունեցաւ Ապրիլի 9ին՝ Մաղկազարդի տօնին Մայր Տաճարում):

Ընտրութիւնից ի վեր Նորին Սրբութիւնն իր ողջ եռանդը եւ ջանքերն ուղղեց եկեղեցական կեանքի ներքին կարգաւորմանն ու կազմակերպմանը, մասնաւորապէս Ս. Էջմիածնի Հոգեւոր ձեռնարանի գործունէութեան վերաշխուսթացմանը, Բրիտանիական Դաստիարակութեան եւ Քարոզչութեան Կենտրոնի զօրացմանն ու քարգաւաճմանը, Բրիտանիական Դաստիարակութեան համալսարանի ծրագրերի մշակմանը, եկեղեցիների ու վանքերի վերանորոգմանը, սոցիալական բնոյթի կառոյցների ստեղծմանը, աստուածաբանական, հոգեւոր եւ հայագիտական հրատարակութիւնների աւելացմանը:

Եկեղեցու աշխատամբը առաւել մպատակաւորուած դարձնելու եւ ժողովրդի կեանքում Բրիտանիական աւանդոյթները ամրացնելու միտման խնդրութեամբ Վեհափառ Հայրապետը վերատեսութեան ենթարկեց Հայաստանի թեմական կառուցուածքը. 1996թ. Հայաստանեան մարտի 4 թեմերի կողմէն ստեղծուեց եւս 4 նոր թեմ: Ստեղծուեցին նաեւ Ուկրաինայի եւ Հարաւային Ռուսաստանի թեմերը:

Վերաշխուսթացաւ Հոգեւոր ձեռնարանի կեանքը: 1997թ. Սեպտեմբերին, 80ամեայ ընդմիջումից յետոյ վերաբացուեց Գեորգեան Հոգեւոր ձեռնարանի հիմնովին նորոգուած շէնքը: Հիմք դրուեց նաեւ

ուսանողների համար նոր կացարանային համալիրի շինարարութեանը: Այս շրջանում քաղաքատիրոջ նաեւ նեմարանի սաների թիւը՝ հասնելով շուրջ 120-ի:

Վեհափառ Հայրապետի հովանաւորութեամբ կեանքի կոչուեց երանկայիշատակ Վազգէն Ա. Կաթողիկոսի ծրագրերը. Օշականում՝ Սր. Մեսրոպ Մաշտոցի նուիրական շիրիմի կողքին՝ վերակառուցուած շէնքում հաստատուեց Սր. Մեսրոպ Մաշտոցի անուան Դպրատունը, որն այսօր դարձել է գիտական եւ մշակութային կարեւոր կենտրոն:

Գահակալութեան համեմատաբար կարճ ժամանակահատուածում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսը հովուապետական այցելութիւններ տուեց Հայ Առաքելական եկեղեցու Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի (1995թ.), Վրաստանի (1995թ.), Ուկրաինայի, Ռումանիայի (1995թ.), Գանատայի (1995թ.), Ամերիկայի Միացեալ Նահանգների (1996թ.), Ֆրանսայի (1997թ.), Սինգապուրի, Թայլանդի, Աւստրալիայի (1997թ.), Աւստրիայի (1997թ.), Անգլիայի (1997թ.), Եգիպտոսի (1998թ.) Գերմանիայի (1998թ.), թեմերին եւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանին: Մեծ ուրախութեամբ եւ հայրական սիրով Վեհափառ Հայրապետը մախագահեց Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի նորընտիր Կաթողիկոս Արամ Առաքինի ձեռնադրութեանն ու օծման արարողութեանը 1995թ. Յուլիսի 1ին:

Վեհափառ Հայրապետը նոր թափ հաղորդեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Էկումենիկ գործունէութեանը եւ ծառայութեանը: Գահակալութեան տարիներին Վեհափառ Հայրապետը պաշտօնական այցելութիւններ է տուել Մոսկուայի եւ համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբութիւն Ալեքսի երկրորդին (1995թ.), Ռումանիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբութիւն Թեոկտիստին (1995թ.), Վրաց Ուղղափառ Եկեղեցու



Կաթողիկոս-պատրիարք Նորին Սրբութիւն Իլյա Երկրորդին (1995թ.), Հռոմի Սրբազան Քահանայապետ եւ Կաթոլիկ եկեղեցու պետ Նորին Սրբութիւն Յովհաննէս-Պօղոս Երկրորդ պապին (1996թ.), Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Սրբութիւն Բարթողղիմէոս Առաջինին (1996թ.), Քիմքրքերիի արքեպիսկոպոս Դր. Ջորջ Քերիին (1997թ.), Ղպտի Ուղղափառ եկեղեցու պատրիարք Նորին Սրբութիւն Շնուղա Երկրորդին (1998թ.): Այցելել է նաեւ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոն ժնեւում:

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունել եւ հիւրընկալել է մի շարք եկեղեցական ու էկումենիկ պատուիրակութիւնների, մասնաւորապէս Նորին Սրբութիւն Բարդուղիմէոս Ա. Տիեզերական Պատրիարքին, Նորի Սրբութիւն Ալեքսի Բ. Պատրիարքին, Նորին Սրբութիւն Թեոկտիստ Պատրիարքին, Նորին Սրբութիւն Իլյա Բ. Կաթողիկոս-Պատրիարքին եւ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխաւոր քարտուղար Դր. Կոնրադ Ռայգերին: Վեհափառ Հայրապետին այցելել են նաեւ պետական քաղաքիւ քարձրաստիճան այրեր, մշամաւոր քաղաքական գործիչներ, գիտութեան եւ մշակոյթի ականաւոր դէմեր:

Վեհափառ Հայրապետը հեղինակ է աստուածաբանական, հայագիտական, փիլիսոփայական, քարոյագիտական եւ գրական քաղում ուսումնասիրութիւնների եւ յօդումների, ինչպէս նաեւ Հայերէն, Անգերէն, Ֆրանսերէն եւ այլ լեզուներով երկու տասնեակից աւելի գրերի: Նորին Սրբութիւնը ՀՀ Գիտութիւնների Ազգային ակադեմիայի պատուաւոր անդամ է: Վեհափառ Հայրապետը, որպէս խոշոր մտաւորական արժանացել է աշխարհի մի շարք կրօնական եւ գիտական հաստատութիւնների եւ համալսարանների պատուաւոր դոկտորի կոչմանը:

1998թ. Ապրիլին Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Միացեալ Նահանգներ՝ Ամերիկայի հայոց թեմի 100-ամեայ յորելիմական հանդիսութիւններին մախագահելու մատակարար: Այցելութեան ընթացում Վեհափառ Հայրապետը ենթարկուեց նաեւ թշկական ընտրութեան, որին հետեւեց տեւական բուժման շրջանը:

1998թ. Հոկտեմբեր եւ 1999թ. Փետրուար ամիսներին Վեհափառ Հայրապետը երկու ծանր վիրահատութիւններ կրեց:

1999թ. Մարտին, Մայր Աթոռ վերադարձից առաջ, Վեհափառ Հայրապետը Վատիկանում Հռոմի Պապի հետ մեկտեղ կատարեց «Հռոմ-Հայաստան» ցուցահանդէսի քացումը՝ մուրրում Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակման 1700-ամեակին: Վեհափառ Հայրապետի Վատիկան կատարած այցի ընթացում Յովհաննէս-Պօղոս Բ. Պապը ընդունեց Հայոց Հայրապետի հրաւերը՝ Յուլիսի 2-4ը այցելել Մայր Աթոռ Սբ. Էջմիածին: Վեհափառ Հայրապետի առողջական վիճակի վատթարացման հետեւանումով մախատեսուած այցելութիւնը չկայացաւ:

1999թ. Յունիսի 29ին ժամը 17:50ին Ամենայն Հայոց Հայրապետը երկարատեւ եւ ծանր հիւանդութիւնից յետոյ ի Տէր հանգեաւ:

Նորին Սրբութիւն Գարեգին Ա. Կաթողիկոսի գործունէութեան հիմնական ուղղութիւնը եղաւ եկեղեցական կեանքի վերամորոգումը եւ վերաշխուժացումը: Վեհափառ Հայրապետը Հայ Առաքելական եկեղեցու պաշտօնական հիմնադրման 1700ամեակը համարելով որպէս մի նոր Հոգեգալուստ հայ ժողովրդի կեանքում, այն դիտում էր իրրեւ Հայ եկեղեցու քրիստոնէական աւանդութի վերամորոգման եզակի հմարաւորութիւն՝ յատկապէս մորանկախ ու ազատ Հայաստանի Հանրապետութիւնում:

ԴԻԻԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՄ Ա. ԷՋՄԻԱՄԻ

**ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏ**  
**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ**  
**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ**  
**ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ**

«Նրա անունը ինչպես որ հող էր,  
հող պիտի դառնայ, եւ հողին, որ Աստուած  
էր տուել, պիտի վերստին Նրա մօտ գնա»  
(Ժող., ԺԲ, 7)

Ի սկզբանէ մարդ արարածը ջանացել է ճանաչել մահ կոչուող առեղծուածը, սակայն մարդկութեան պատմութիւնը վկայում է, որ աղամորդին մահուան ճանաչողութեանը երբեք չի հասել: Զի Բարձրեալը Աստուած, որ անչափ շատ է սիրում իր իսկ ստեղծած մարդուն, թոյլ չի տուել, որ մեղսալից աղամորդին այդ մեղանչական վիճակով ըմբռնի այն առեղծուածը, որն սկիզբն է նոր, դեռ անվերջ երկնային մշտնջենաւոր կեանքի...

Իսկ երբ աշխարհում ծագել է Արդարութեան Արեգակ Յիսուս Քրիստոս, եւ երբ Նրա անճառելի Լոյսը հեղուել է ի հոգիս համայն մարդկութեան, ահա այդ իսկ ժամանակակից լուսաւորեալ մարդ արարածն այլեւս չի սարսափել, չի փորձել իր ֆիզիքական մարմնի անմահութիւնն ապահովել, զի այլեւս լաւ էր ըմբռնել Տէրունի պատգամը. «Ով սիրում է իր անձը, կը կորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն առնում է, այն կը պահի յաւիտեանական կեանքի համար» (Յովհ. ԺԲ. 25):

Արդ, եթէ պարզ բրիտոնեան սոյն պատգամն ընկալել էր իր ամբողջ էութեամբ եւ դրանով իսկ պայմանաւորուել ու արժեւորել էր երկրաւոր կեանքը, ապա որքան առաւել՝ հոգեւորականը, մա, որ իր անձը ուրանալով՝ իրեն անմնացորդ ու անսակարկ Տիրոջն ու Նրա Ս. Եկեղեցուն է ընծայում...

Ահաւասիկ «Հայրապետ սուրբ եւ անբիծ, որն իր երկրաւոր կեանքում իսկ համտեսում է երկնային անանց քարիքների քաղցրահամ պտուղը՝ հոգու խաղաղութեամբ հաւաստելով, որ Նա, որ ջանք չի խնայի Աստծոյ փրկագործական ծրագրին մասնակից դառնալու համար, թեւ մարմնապէս անասելի տառապանքներ կրի, սակայն, այնուհանդերձ, Ամենասուրբ Երրորդութեան շնորհիւ ու ողորմութեամբ միայն ու միայն երկմէի Արքայութեան համար իր հոգին կ'աւանդի...

**Յուլիսի 5**

Վաղ առաւօտից սգացող Մայր Աթոռի Վեհաբանում հոգեւոր դասը, կաթողիկոսական տեղապահ Գերաշնորհ Տ. Ներսէս Արքեպս. Պապականի գլխաւորութեամբ, կատարում էր Տան Կարգ: ...Մոռագուրկ հայ հոգեւորականը Տիրոջն աղերսում էր. «...Դասաւորեա՛ գիտցի հանգուցելոյս Հայրապետի ի Քեզ նշմարիտ հաւատով ընդ ամենայն սուրբս Քո՛ յառաջագահ դասուն ի միւս անգամ Քո գալստեանդ. զի եւ սա արժանաւոր եղիցի՝ գոհանալով փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ»:

Յաւարտ այս սրբաշունչ կարգի՝ սգաթափօրը հանդիսաւոր կերպով Վեհափառ Հայրապետի դիմ տանում է քաղաքամայր Երեւան՝ Արարատեան հայրապետական թեմի առաքնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցի: Այստեղ կատարուում

է հոգեհամգստեան պաշտօն, որին ներկայ էին Ամենայն Հայոց Կաթողիկոսի յուղարկաւորութեան կազմակերպման պետական յանձնաժողովի անդամները, Վեհափառի հարազատները, սփռնափայ գործիչներ, մտաւորականներ, հասարակական տարրեր կազմակերպութիւնների ներկայացուցիչներ:

Հոգեհամգստից յետոյ աստիճանաբար սկսուեւ է հաւատացեալների հոսքը սուրբ եկեղեցի: Գէթ մի քանի րոպէներ, կենցաղային հոգսերն ու անձնական խնդիրները մոռանալով, հաւատացեալ հայկազուններն իրենց որդիական ակնածամբն ու վշտակցութիւնն էին եկել յայտնելու Վեհափառ Հայրապետին ու իրենց Մայր եկեղեցուն:

Նոյն օրը երեկոյեան ժամը 18ին, մախազահութեամբ կաթողիկոսական տեղապահ Տ. Ներսէս Արքեպս. Պողոսեպիւսի եւ մասնակցութեամբ Երուսաղէմի ու Կ. Պոլսոյ Հայոց Ամենապատիւ Պատրիարք Հայրեր Տ. Թորգոմ Արքեպս. Մամուկեանի եւ Տ. Մեսրոպ Արքեպս. Մութաֆեանի, ինչպէս մասն Հայոց Եկեղեցու գրեթէ ողջ հոգեւոր դասի, տեղի ունեցաւ հոգեհամգստեան պաշտօն: Յընթաց արարողութեան՝ Մայր Աթոռի միաբանութեանն է միանում մասն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան պատուիրակութիւնը՝ Արամ Ա. ի գլխավորութեամբ:

Հոգեհամգստեան վերջաւորութեանը, յանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանութեան, միխթարող խօսքով հանդէս է գալիս Կենտրոնական Եւրոպայում, Աւստրիայում ու Շուեյտլայում հայրապետական պատուիրակ Տ. Մեսրոպ Արքեպս. Գրիգորեանը: Սրբազան հայրն իր խօսքում հիմնադրամալից կերպով անդրադառնում է երջանկայիշատակ Հայրապետի կարճատեւ, սակայն քեղում գործունէութեանը: Նա մասն վեր է հանում

Գարեգին Ա. ին քննորոշ այն յատկանիշները, որոնք մեր հեղինակութեան ու արժանապատուութեան գրաւականներն էին:

«Թէեւ մենք կորցրինք Վեհափառը, – ասում էր Մեսրոպ Սրբազանը, – սակայն մեզ հետ մնացին մեր անկատար ծրագրերը, ուստի ջանամք իրագործել դրանք եւ այդպէս վառ պահենք մեր յիշատակը մեր եւ գալիք սերունդների սրտերում»:

Առաւօտից մինչեւ երեկոյ Վեհափառ Հայրապետի դագաղի մօտ չորս քահանայ Աւետարան էր ընթերցում Հայրապետի հոգու հանգստի ու խաղաղութեան համար Երկմաւոր Թագաւորին աղօթելով:

*Յուլիսի 6*

Ժամը 10ին քաղաքամայր Երեւանի Ս. Սարգիս եկեղեցում, մախազահութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. ի եւ աղօթական ներկայութեամբ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսէս Արքեպիսկոպոսի, Երուսաղէմի ու Կ. Պոլսոյ Հայոց Սրբազան Պատրիարքներ Տ. Թորգոմ ու Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոսների, ու Հայաստանեայց Ս. Եկեղեցու թեմակալ առաջնորդների, ինչպէս մասն մասնակցութեամբ ՀՀ Նախագահի, ՀՀ վարչապետի, ՀՀ ԱԺ մախազահի, պետական աւագանու այլ ներկայացուցիչների եւ ՀՀ-ում օտարերկրեայ դիւանագէտների, Վեհափառ Հայրապետի ազգականների ու սգակիր հայորդիների, տեղի ունեցաւ հոգեհամգստեան պաշտօն, որով րովաւնալ Հայաստանեայց Ս. Եկեղեցին հայցում էր Աստծոյ գութն ու ողորմութիւնը՝ իր հանգուցեալ ծառայի համար:

Հոգեհամգստեան պաշտօնից յետոյ, ի դէմս Հայոց եկեղեցու նուիրապետական աթոռների գահակալների, հոգեւոր դասի ու համայն հայ ժողովրդի, իրաժեշտի խօսք է ասում Արարատեան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ

Տ. Գարեգին Արքեպս. Ներսիսեանը:

Սրբազան Հօր խօսքից անմիջապէս յետոյ, Վեհափառ Հայրապետի մարմինը դուրս է բերուում Ս. Սարգիս Եկեղեցուց եւ «Աշխարհ ամենայնի» երգեցողութեամբ, սգաթափօրով տարւում է մինչեւ ատոմեֆեմաների շարասիւն: Այնուհետեւ մեֆեմաներից կազմուած սգաթափօրը համըմբաց ուղեւորւում է Միածնաէջ Մայր Աթոռ:

Տակաւին մի քանի օրեր անց սգաւոր Ս. Էջմիածինը պատրաստւում էր իր երջանկայիշատակ գահակալին արժանաւորապէս դիմաւորելու:

Մայր Աթոռի կենտրոնական դարպասի մօտ վաղ առաւօտից խոնուել էր Մայրավանքի պաշտօնէութիւնը, հոգեւոր դասը, Մայր Աթոռին ենթակայ միւս հաստատութիւնների աշխատակազմերի անդամներն ու մի քանի տասնեակ հաւատացեալներ:

Կենտրոնական դարպասի մօտից, «Այսօր գտով ի Բեթանիա» շարականի երգեցողութեամբ, սգաթափօրը Վեհափառ Հայրապետի դիմ առաջնորդում է Մայր տաճար:

Նշեմք, որ նախքան Եկեղեցի մուտք գործելը, Հայոց Եկեղեցու երանելի հայրերի իմաստուն տնօրինութեամբ, հանգուցեալ Հայրապետի մարմինը «ի չորս տեղուդ հանգիստ» է առնում: Այդ դադար հանգստեան պահերին ընթերցւում են սուրբգրային հատուածներ, երգւում են շարականներ, քարոզ է ասւում, ապա կարդացւում է աղօթք. «Համգո՛ զհոգի ծառայիս Քո ի տեղուդ լուսոյ եւ ի տեղուդ հանգստեան՝ ուստի փախուցեալ եմ ամենայն ցաւ եւ տրտմութիւնք եւ հեծութիւնք...»:

Այնուհետեւ, երբ Վեհափառ Հայրապետի մարմինը բերւում է սուրբ Եկեղեցու դրան մօտ, նախ եւ անց ընթերցւում են սուրբգրային պատշաճ

հատուածներ, երգւում են շարականներ, կարդացւում է յատուկ աղօթք, ապա «Ջողորմութեան Քո զոռում քաց մեզ Տէր» շարականի երգեցողութեամբ թափօրը մուտք է գործում Եկեղեցի: Տաճարում ընթերցւում են սուրբգրային հատուածներ, այնուհետեւ «Հոգւոյն հանգուցելոյն...» մաղթամեղով եւ «Հայր մերով» աւարտւում է «Քահանայաթաղ առնելոյ» տաճար տանելու կարգը. «Եւ ապա արծակին խաղաղութեամբ եւ երթիցն ի տեղիս իրեանց»:

Ինչպէս Ս. Սարգիս Եկեղեցւում, Մայր տաճարում եւս Վեհափառ Հայրապետի դազաղի մօտ չորս քահանաներ սկսում են Ս. Աւետարանի ընթերցումը:

Թ՛ Ծուլիսի 6-ին եւ Թ՛ Ծուլիսի 7-ին վաղ առաւօտից սկսեալ մինչեւ ուշ երեկոյ, չէր դադարում հաւատացեալ հայորդիների հոսքը Մայր տաճար՝ վերջին հրաժեշտ տալու եւ վերջին աջիւղոյն ստանալու իրենց հանգուցեալ Հովուապետից:

Հայոց Եկեղեցու հնաւանդ կանոնների համաձայն՝ Թ՛ առաւօտեան, Թ՛ երեկոյեան ժամերգութիւններից յետոյ կատարւում էր հոգեհանգստեան պաշտօն (եւ այսպէս շարունակ 40 օր զի ողջերի անկեղծ ու սրտարուխ աղօթքները մեծ օգնութիւն են մեղեցեալին՝ երկմէի եւ երկրի միջեւ ծուարած չարի այսերի միջով խաղաղ ու անվրդով դէպի յաւիտեանական կայաններ ընթանալիս):

Ծուլիսի 8

Հինգշաբթի ժամը 10-ին, սկսւում է Սուրբ եւ Ամմահ Պատարագի արարողութիւնը: Ս. Պատարագին ներկայ էին ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարեանը, ՀՀ Վարչապետ Վազգէն Սարգսեանը, ՀՀ ԱԺ Նախագահ Կարէն Դեմիրճեանը, ՀՀ Սահմանադրական Դատարանի Նախագահ Գագիկ Յարութիւնեանը, ՀՀ իշխանութիւնների այլ ներկայացուցիչներ, ՀՀ-ում հաւատարմագրուած օտարերկրեայ

դիւանագէտներ, սփիւռֆահայ գործիչներ, հասարակական ֆաղափական կազմակերպութիւնների ու կուսակցութիւնների ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ իրենց յարգամբն էին բերել Վրաստանի Հանրապետութեան Աժ մայիսգահ Ջուրաք ժվանեան, Արցախի Հանրապետութեան վարչապետ Անուշահան Դանիէլեանը եւ ուրիշներ: Հայոց եկեղեցու սրբազան արարողութեանը ներկայ էին նաեւ Վեհափառ Հայրապետի յուղարկաւորութեանը մասնակցելու նպատակով Ս. Էջմիածնում գտնուող Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլյա Բ. Ռուս Ուղղափառ եկեղեցու պատուիրակութիւնը՝ միտրոպոլիտ Պիտիրիմի գլխաւորութեամբ, Ղալտի Ուղղափառ եկեղեցու միտրոպոլիտներ Յովհաննէսը եւ Ամբա Բիշոյը, Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարքութիւնից՝ միտրոպոլիտ Գեմադիոս Լիմուրիոսը, Ասորի Ուղղափառ եկեղեցուց՝ Հալէպի միտրոպոլիտ Իբրահիմը, Վատիկանից՝ կարդինալ Կասիդին, Քենթրքերիի արքեպիսկոպոսութիւնից՝ Բեսիմֆաթի եպիսկոպոս Ջեֆրի Ռոուսը, Հալէպի շէյխ Ալ Շամը եւ այլք:

Երեւոյց «Ահեղ Խորհուրդի» պէտք է կատարուեն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի վերջին օծման կարգը. «Եւ մինչ մատչիցի Սուրբ Պատարագն, ի ժամ ողորմին առաջի բեմին այս կարգ կատարի», այսինքն՝ սարկաւազի ճարտգից յետոյ հանդիսապետը կարդալու է «Օրհնեալ ես, Տէր Աստուած Ամենակալ» աղօթքը, որից յետոյ Վեհափառ Հայրապետի դին ճրատման ֆահանայքն եւ հանեն ի բեմն առաջի Սրբոյ Սեղանոյն»: Այնուհետեւ, ձեռամբ կաթողիկոսական տեղապահ Տ. Ներսէս Արեւաք. Պապապետին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա-ի, կատարուել է Գարեգին Ա-ի վերջին օծման կարգը. «Եւ առեալ զՍուրբ Մշտունն, օծել մաք գեակաւն եւ ապա զաջոյ ձեռն»:

Ս. եկեղեցու վարդապետութեան համաձայն՝ վերջին օծման կարգը ննջեցեալին օծուել է այնպիսի զօրութեամբ, որը հանգուցեալին երկմէի ու երկրի միջեւ եղող դեկերիմ յաղթահարելու եւ աստուածային իմանալի շնորհով սպառազինուած իր ընթացքը դէպի իսկաղոսութեան մաւահանգիստ շարունակելու ուժ եւ կարողութիւն է տալիս. «Քի... ընկալցին սուրբ մշխարհս ոսկերաց սորա զօրութիւն թշկուութեանց. եւ զհալածումն սեւագունդ դիւաց. եւ մեծ պարծանս կենաց. եւ յոյս մեծապէս սուրբ խոստովանութեամբ, որ ի Հայր եւ յորդիգ եւ ի Հոգիոյ Սուրբ...»:

Օծման կարգից յետոյ, խորհրդանշօրէն, Վեհափառ Հայրապետն իր վերջին ողորմն է տալիս Ս. եկեղեցուն, Ս. Սեղանին, հոգեւոր դասին, Ս. եկեղեցու մանկտեաց եւ ի Քրիստոս իր բոլոր եղբայրներին, զի «ես ճանապարհորդեցի առ Արարիչն իմ, ...ես ճանապարհորդեցի առ Քրիստոս յոյսն ամենեցուն»:

Այնուհետեւ, շարականներից ողբաձայն երգեցողութեամբ, Վեհափառ Հայրապետի մարմինը երեք անգամ պտտեցնում են Ս. Սեղանի շուրջ, «որ մշանակէ՝ զհամբուրեմն մորին զսեղանն եւ զբոլոր եկեղեցին եւ զարքութիւնն ամենայն, եւ զհրաժարական ողորմն տալն...»:

Սրբազան այս արարողութիւններից յետոյ դամբանական խօսքով հանդէս են գալիս կաթողիկոսական տեղապահը, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսը, Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ պատրիարքները: Դամբանականներից յետոյ երբ սարկաւազը Ս. Սեղանից ներկաներին յորդորում է միմեանց Սուրբ համբոյրով ողորմն տալ, «ամենայն ժողովուրդն համբուրեմն զաջ հանգուցելոյն» որպէս եւ ֆահանայքն. եւ դնեն ի մէջ տաճարին եւ մատչի Պատարագն»:

Յաւարտ Ս. Պատարագի, շարականների երգեցողութեամբ, Գարեգին

Ա-ի մարմինը տանարի արեւմտեան դռնից դուրս է հանում եւ թափորով հիւսիսային կողմից պտտուելով, համապատասխան դադարեցնելով, սաղմոսների, աղօթքներին ու աւետարանական ընթերցումներով տարում է արեւմտեան կողմ եւ դուրս «յափն գերեզմանին»։ Գերեզմանափոսի մօտ սուրբգրային ընթերցումաժամերից, քաղաքներից, աղօթքներից ու շարականների երգեցողություններից յետոյ «առեալ քահանային երիցս անգամ գողոյ ի յափն, խաչակնէ՛լ» ասելով. «Օրհնեա՛, Տէ՛ր, ողորմութեամբ Քով գողոյ ծառայիս Քոյ, եւ յիշեա՛ զսա, զի հող էր եւ ըստ հրամանի Քում՛ ի հող դարձաւ»։ Եւ մինչեւ Վեհափառ Հայրապետի անկենդան մարմինը գերեզմանափոս իջեցնելը, յանուն ՀՀ իշխանութիւններին որդիական

խոնարհութեան ու Մայր Աթոռին վշտակցութեան, դամբանական խօսքով հանդէս է գալիս ՀՀ. Նախագահ Ռ. Քոչարեանը։ Նախագահի խօսքից յետոյ Վրաց եկեղեցու եւ ողջ ժողովրդի անունից հրաժեշտի ու սփոփանքի խօսք է ասում նաեւ Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Իլյա Բ-ն։

Դամբանականներից յետոյ, «Տէր հովուեսցէ զիս» սաղմոսի ընթերցումով, Վեհափառ Հայրապետի դին իջեցնում են դամբարան, որից յետոյ հոգեւոր հայրերն օրհնում ու կնքում են «դամբարան եւ ոսկերի ծառայիս Աստուծոյ»։

«Յիշեա՛, Տէր, զհոգի հանգուցեալ Հայրապետին մերոյ եւ հանգո՛ զմա ի լոյս երեսաց Աստուածութեան Քոյ»։ ամեն, եղիցի, եղիցի։

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ

Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐԲ. ՆԵՐՍԻՍԵԱՆԻ ՀՐԱԺԵՇՏԻ ԽՕՍԲԸ

Սուգ է հայոց։ Մեզ հետ չէ այլեւս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ Սգաւոր է Մայր Աթոռ Ա. Էջմիածինը, սգաւոր է Հայոց պետութիւնը։ Խոր վշտով եւ գլխահակ՝ վերջին հրաժեշտն ենք տալիս եւ հայրենեաց սուրբ հողին յանձնում սիրելի Վեհափառ Հայրապետին։ Վերջին հրաժեշտն ու խոնարհումն ենք մատուցում մեր իրականութեան իմֆօրմակ եւ քացառիկ անհատականութիւններից մէկին, որն իր անձով ու գործով դիրին, խանդավառօրէն սիրելի դարձրեց դժուարին առաջնությունը հայ հոգեւորականի, որն իր արիւնը չի խնայել «վասն հաւատի» ըմբռնելով այն որպէս «վասն հայրենեաց»։

Հանգամանքների բերմամբ՝ Նորին Արքուքին Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը կեանքի մեծ մասն ապրեց Հայաստանից դուրս, հայրենիքից հեռու։ Հեռաւոր Քեսապում ծնուել էր «Աւարբ հոգով եւ հայուքեամբ իմֆնամալու» ու ողջ կեանքն անսակարկ սպասաւորութեամբ մատուցակելու Տիրոջ զոհաբերութեան Սուրբ Սեղանին եւ սիրեցեալ հարազատ իր ժողովրդին։

Էջմիածնի սուրբ խորհրդի մերժոյ, ազատն Մասեաց հայեացքի դիմաց, երբ վերջին հանգրուանն ենք ուղեկցում Հայոց Վեհափառ Հայրապետին, ամենախորն ապրումով վերլիշում եմ Նորին Արքութեան խօսքերը. «Ահա այսօր եկած եմ հայրենիք»։



որպես հարազատ տուն, ուր կը զգամ այնպես, որ կարծես երբեք անկէ բաժանուած չէի...»: Հայրենիքից երբեք բաժանուած չլինելը Վեհափառի էութիւնն ու ապրուած կեանքն է: Հայրենիքից երբեք բաժանուած չլինելը նրա՝ ի լուր աշխարհի խոստովանութիւնը, թողած դասը, յանձնարարականը, սրբազան աւանդը՝ մեզ եւ սերունդներին:

Հայ հոգեւորականի քերու ուղի է անցել Նորին Սրբութիւնը: Կեանքը նրա սէր էր, գործը անձնուիրում: Նա ապրեց՝ Աստուծոյ եւ հայրենեաց սէրը սրտում, գործը՝ հայրենիքին ու ժողովրդին եւ իր ազգի միջոցով՝ մարդկութեանը ծառայեցնելով: «Յարդը զմաց, ցորենը՝ մնաց» գաղափարականը ոգի դարձրած՝ շուրջ կէս դար քարդ ու դժուարին հոլովոյթում հոգեւորականի իր կեանքի երկմատուր իմաստութեան շնորհիւ բաժանեց ցորենը յարդից եւ ցորենաբոյր իր խօսքը կենսահաղորդ նշխարի պէս բաշխեց իր ժողովրդին՝ նոր կեանքով նորոգելով հայ հոգիները: Շուրջ կէս դար, որպէս բացվաւ քարոզիչ, ուսուցանեց ողջ աշխարհում սփռուած հայութեանը՝ հաւատարիմ մնալ մախնեաց սուրբ հաւատին, առաջնորդեց ստեղծագործ, ազգաշահ կեանքի, համազգային միութեան եւ հայոց անկախութեան արծեւորման: Անուրանալի աւանդ ունի Նորին Սրբութիւնը որպէս լայնածիր մտաւորական, որի գիտական եւ աստուածաբանական մանկավարժական, գրական-հրապարակախօսական վաստակը համամարդկային բովանդակութեամբ մնայուն արժէք է հայ հոգեւոր մշակոյթի հարուստ անդամատուն: Հանգուցեալի լուսաւոր կերպարը, իր նպատակների եւ ձեռք գործերի մեծութեամբ, առաւել յստակ է գծազրուում մեր առջեւ անժամանակ բաժանման այս տխուր պահին:

Երջանկայիշատակ Հայրապետը

կեանքի վերջին 4-ամեան իր կոչման եւ առաքելութեան մէջ ապրեց ու գործեց իր մախնեաց սատուածապարգեւ երկրում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Վեհափառի նուիրական իղձն էր նոր գարթօնքի մէջ տեսնել 2000ամեայ Հայոց եկեղեցին, որպէս զի ուրախութեամբ ու հպարտութեամբ հռչակէր դարերի մէջ վաստակած իրաւունքն իր ժողովրդի ասելով. «Մենք հաւատարմօրէն պահեցինք ժամադրութիւնը Յիսուսի հետ»: Վեհափառի անկասելի ձգտումն էր հայութեան մէջ վերաթմաքած տեսնել ոսկեդարեան ստեղծարար շունչը եւ ազատատենչ յաղթական ոգին «Հայակերտումի» արդիւնաւորուած հաւատի գործերով, կոչուած զօրացնելու հայրենին եւ քարօրութիւն քերելու մեր ժողովրդին, հաւատարմօրէն պահելու «Ժամադրութիւնը Յիսուսին հետ» 2001թ. Հայ եկեղեցու դարակազմիկ յոբեյեանին: Յիրաւի, հայոց դարձին համարժէք նպատակ այդ դարձից 1700 տարինք յետոյ:

Վեհափառը նաեւ Հայ եկեղեցու միութեան տաճարի հիմքերը դնելու նուիրական առաքելութեամբ եկաւ Հայաստան՝ Մայր Աթոռ, եւ քազմեց Լուսաւորչի գահին: Եկաւ, որպէս զի ամբողջական միութեան մէջ յիարին կեանքով ապրի Հայ Առաքելական եկեղեցին: Երկրային ձեռք կեանքում, Վեհափառ, ականատեսը չեղավ նուիրական այդ տեսիլի ամբողջական մարմնաւորմանը: Սակայն Ձեր օծեալ ժրաջան աջով սերմանուած են պողպարեւ հունտերը, որոնք անտարակոյս պիտի ծիլ տան եւ արգասաւորունն մէկ եկեղեցի, մէկ հայրենիք, ազգային գերակայ գիտակցութեան մէջ:

Դուք Հայրապետ Հայոց արդիւնաւորեցիք հայրապետութեան Ձեր ամեն օրն ու ժամը: Հայրենեաց եւ Ձեր

հաւատի հիմքերի վրայ բարձրացուել են պատերը քաղում խոնարհուած եկեղեցիների, հոյակերտ սլացով վեր են յառնում մոռերը Հայաստանում ու Արցախում, լայնահուն ընթացքով կենսամատուրում է քրիստոնէական կրթութիւնն ու հոգեւոր դաստիարակութիւնը, Հայ եկեղեցու եւ ազգային արժէքների բուրայութիւնը կերտում է հոգեւոր սպասարկների վերածննդի սերունդը,

որը Ձեր բնորոշմամբ «ազգի մարմնին մէջ սիրտն արիւն առնող եւ սիրտին արիւն դրկող» զարկերակը պիտի լինի: Այսօր Հայ եկեղեցին ճանաչելի եւ գնահատուած է միջեկեղեցական եւ քրիստոնէական համադաշնութեան մէջ մանաւանդ Ձեր աշխատութիւններով: Լոյս դառնայ հոգիդ Վեհափառ Հայրապետ:

«Յիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի:» Ամեն:

### ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՆ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱՆԵԱՆԻ ԽՕՍԲԸ

«Ոչ ոք արկանէ ձեռն զմանով եւ հայեցի յետս,  
եթէ յաշուեալ իցէ արքայութեան  
Աստուծոյ»

(Ղուկ. Թ, 62)

Մեծարգոյ տիար Ռոբերտ Քոչարեան՝ Նախագահ Հայաստանի Հանրապետութեան, Մեծարգոյ տիար Կարեն Դեմիրճեան՝ Նախագահ Ազգային ժողովի,

Մեծարգոյ տիար Վազգէն Սարգսեան՝ Վարչապետ Հայաստանի Հանրապետութեան,

Վեհափառ Տէր Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Առաջին, Պատրիարք Սրբազան Հայրեր՝ Ամենապատիւ Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, Տ. Մեսրոպ Արք. Մուսաֆեան, գերաշնորհ, հոգեշնորհ հայրեր, հիւրեր:

Վշտակիր հայ ժողովուրդ Հայոց.

Տասն օր առաջ Հայաստանեայց եկեղեցին եւ ողջ հայ ժողովուրդը մեծ եւ ամծամանակ կորուստ կրեցին: Նրկարատես ծանր հիւանդութիւնից յետոյ ի Տէր հանգեաւ ազգիս Վեհափառ Հայրապետը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Մայրաքոյն Պատրիարք Տ. Տ. Գարեգին Առաջինը, որի անշնչացեալ մարմինը շրջապատել ենք մեմք այժմ խոր վշտով համակուած սրտերով՝ աղօթելու մրա արդար հոգու

համար, քաղման կարգ եւ Ս. Պատարագ մատուցելու, վերջին օծումը կատարելու, ապա՝ քիչ յետոյ սրբազան Մայր Հոգին յանձնելու համար:

Սգում է հայ ժողովուրդը: Խոր վիշտն է պատել մեր սրտերը, որովհետեւ ահաւասիկ եւս մէկ անգամ, արդէն հարիւր երեսուն եւ մէկերորդ անգամ սգոյ ֆողով է ծածկուել առաքելահիմն եւ լուսաւորչա-հաստատ Ս. էջմիածնի Մայր Աթոռը՝ Գահը Ամենայն Հայոց Հայրապետական:

Մեզ հետ միասին սգալու եւ արտայայտելու համար այդ յիշտը, այստեղ՝ միաձմաէջ սրբազան այս տաճարի մէջ, համահաւաք այս ներկայութիւնը կայ մեր ողջ ժողովրդի, պետական իշխանութիւնների, մեր եկեղեցու նկատմամբ յարգամք ու համարում ունեցող Քրիստոնէական բոյր եկեղեցիների, մանաւանդ քրիստոնէայ կրօնների մուկրապետական իշխանութիւնների եւ մրանց քաղմամբ ի խոն հաւատացեալների:

Բուրվանքներից տարածուող կնդրուկի ու խնկի հոտաւետ ֆողը. կանթեղների եւ

մոմերի առկայծումն ու նրանց բուրմունքի համատարած սփռումը կրկնապատկել են տաճարի խորհրդաւոր աղօթքի հրաւիրող մթնոլորտը, որի մէջ, կարծեմ, զգալի է մաւ հրեշտակների եւ սրբերի ներկայութիւնը, որոնց քարեխօսութիւններն ու մաղթանաց ձայները, միախառնուած հաւատացեալների մօրմոռ հեծկտանքներով ընկերակից աղօթքներին ու հոգեւոր երգեցողութեան զմայլիչ շնչերին, իրենց զգուտութեան թելերին առած երանելի Հայրապետի արդար հոգին, Միածնի իշածնոյն ճանապարհով հեգօրէն առ Աստուած եմ առաջնորդոււմ նրան՝ վերին օթեւաններում քնակեցնելու եւ յաւիտեանական հանգստեան արժանացնելու համար:

Ահաւասիկ եւ մեր հոգիների աղերսոտ հայեացքը, որ զմայլուած հետեւում է այդ հանդարտ վերափոխումին:

Օհ, կանգ առնեմ սակայն մի պահ, չանապարեմ տակաւին, մի փոքր էլ բաժանման այդ ծանր պահը հեռացնեմ՝ առիթ տալու համար մեզ հետ մէկ անգամ անդրադառնալու մոտ, թէ ով եղաւ եւ ով էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսը, որին՝ բոլորի համար հաւասարազօր աստուածաշիր այդ օրէնքը՝ մահը, անողոքաբար խլում է մեզից:

Սակայն, որքան էլ որ այն լինի անողոք, պիտի չյաջողի Աստուծոյ ընտրեալ եւ մուրհեալ ծառայի ու Հայաստանեայց Եկեղեցւոյ քաջ հովուապետի յիշատակը պոկել մեր սրտերից, որովհետեւ մա իր կեանքով ու գործով արդէն իսկ յաղթել է մեռելութեանը: «Այլ յորժամ մահկանացւս այս զգեցցի զամառութիւն, եւ ապականութիւնս՝ զանապականութիւն, յայնժամ եղիցի բանն, որ գրեցաւ, եթէ ընկաւ մահ ի յաղութիւն: Ո՛ր է, մահ յաղութիւն քո, ո՛ր է դժոխք, խաթոց քո» (Ա. Կորնթ. ԺԵ. 54-55).

Այն՝ կեանքից յաւիտեանականութեանը,

զինուորեալ Եկեղեցւոյց յաղթական եկեղեցւուն անցնող Գարեգին Ա. Կաթողիկոսը, աշխարհի տուայտանքների միջից ամուր ու հաստատուն քայլուած քով ընթանալով, պատերազմեց իր բարոյք պատերազմը եւ այն շահեց: Մահեց իր հաւատացեալ հօտի համար, լուսն խորան աստուածակերտ Ս. Էջմիածնի համար, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ համար, հայ ժողովրդի համար եւ... իր հոգւոյ փրկութեան համար:

«Քաջալերեցարու՜մ զի ես յաղթեցի աշխարհի»:

67 տարի առաջ երբ սիրելի Վեհափառը առաջին քիչի հետ իր աշխարհ լոյսին քացեց, ճախրեմամբութիւնը օրինեց մեր եկեղեցւուն: Երկնքի իսկ ճախսահմամարմա նրազ ու լոյս դարձրեց Աստուծոյ պարգեւ այդ կեանքը՝ վասն բարօրութեան եկեղեցւոյ եւ ազգի: Աստուած օրինեց նրան եւ առատօրէն օծոնց բոլոր հմարաւոր շնորհներով, որ մարդկային բնութեան սահմանները ունակ են կրելու:

Ու տակաւ, ահելով ու գործնալով Ս. Հոգւոյ շնորհների մէջ՝ ի սպասաւորութիւն կոչուեց Տիրոջից՝ իր անձի շնորհաշատ անօթը բոլորամուկը ընծայելով Աստուծոյ եւ ազգի գոհաբերութեան Սուրբ Սեղանին:

Համգամանքների բերումով՝ Եկեղեցւում իր ծառայական գործունեութիւնը Նորին Սրբութիւնն սկսեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սահմանների մէջ արագաթռիչ վերելով բարձրանալով աթոռի ամենաբարձր պաշտօնի աստիճանին: Եղաւ գերազանց մակարդակի եւ որակի ուսուսիչ, դաստիարակ, քաղաքիչ, հովիւ, առաջնորդ: Այդ հանգամանքներից իւրաքանչիւրին փայլ հաղորդեց իր անձով: Ծանաչուեց եւ հեղինակութիւն դարձաւ որպէս եկեղեցական, ազգային եւ միջեկեղեցական գործիչ: Ամենուր ճանաչեցրեց Հայ Եկեղեցին ու ժողովուրդը: Ի մասնաւորի

եղաւ մշակոյթի, գիտութեան եւ դպրութեան նուիրեալ: Դարձաւ եւ հոչակեց աստուածաբանական գիտութիւնների հմուտ հեղինակութիւն:

Ամմանցորդ նուիրումն ու գործունէութիւնը, միացած քացառիկ անձնաւորութեան հետ, իր մէջ կերտեցին այն գերազանց վիճակը, որը իր մարմինը կազմող միւրի ընդմիջից ճանաչել տուեց մարդու էութեան նաեւ աստուածային սկիզբը՝ հոգին, որն այդ էութեան մէջ մերթափանցուած, իրենով համակած այն, պատռելով միւրի աւէն տեսակ կաշկանդումները, իր ազնիւ արտայայտութիւնն էր գտնում ի գործ մղելով նրան: Նա երբեք չիմացաւ թէ ինչ են անգործութիւնն ու կրատրականութիւնը:

Իր համրային եւ եկեղեցական ողջ գործունէութեան ընթացքում աշխոյժ ու ստեղծագործող այդ էութիւնը Վեհափառին քարձրացրեց, եւ չէր կարող չքարձրացնել այն սրբազան քեմահարթակին, որ իմքը ընկերութիւնն է: Ու նա շնորհներով պայմանաւորուած գործունէութեան մերթափամբ իր կնիքը տպաւորեց նոյն այդ ընկերութեան վրայ: Սթափ ու զգօմ պահելով նրան՝ խանգարեց ու թոյլ չտուեց ընդարմանալու: Յարատեւ շարժման մէջ դնելով առաջադիմութեան մղեց նրան: Նմանութիւն բերելով իր մերշնչարան Արարչին՝ մասնակից ու դերակատար դարձաւ այդ ընկերութեան մտաւոր ու հոգեկան վերելքին ու թռիչքին:

Ու երբ հասել էր ուժերի ու շնորհների քացայայտման գագաթնակէտին, դարձեալ ի վերուստ տնօրինութեամբ եւ կամօքն ազգի, քարձրացաւ Հայաստանեայց եկեղեցու նուիրապետութեան քարձրագոյն աստիճանին եւ պատուին արժանաւոր կերպով, որպէս առաջին սպասաւոր, բազմելով Ս. Գրիգոր Լուսաւորչի գահին՝ ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Էջմիածին: Նուիրական անուն: Այդ

ոգեղէն տեսլականը Հայոց Հայրապետը ի տղայ տիեզեր կրում իր հոգու մէջ արդէն: Ս. Էջմիածնի ու Հայ եկեղեցու հանդէպ սէրը, շաղախուած ու միախառնուած ժողովրդի ու հայրենիքի սիրոյ հետ, նա՝ որպէս ձեռք մանին ամբողջովն դրած մշակ ու գիտակից՝ Աւետարանի քարոզութեան իր առաքելութեանն ու կարողութեանը, Արքայութեան պատկերը հոգիների մէջ դրոշմելու ամբողջական վճռականութեամբ, այլեւս ետ չնայեց: Մարգարէաշունչ հայեացքը հորիզոնին յառած՝ առաջացաւ, առաջացաւ հայրենի անդաստանի մէջ լայնահուն ու քերքի ակօսմեր քաց անելով:

Դարձեալ իր գործունէութեան ուղղութիւնները եղան, այս անգամ աւելի մեծ չափերով. մանաւանդ անկախ պետականութիւն կերտած հայրենիքի լայն հնարաւորութիւններով եւ հարագատ իշխանութիւնների անվերապահ գործակցութեան ու իր հանդէպ ժողովրդի տածած անսահմանափակ սիրոյ պայմաններում, կրթութիւնը, դաստիարակութիւնը, գիրքն ու գրականութիւնը, շինարարութիւնը, որոնք մկատակադրեցին ու արդիւնաւորեցին մեր եկեղեցու վերելքը:

Մանաւանդ Բանին Կենաց քարոզութիւնը դարձաւ իր գէմքերից հզօրագոյնը, որով նա ուսուցանեց, հաղորդեց ու խրատեց իր բանաւոր հօտը: Շիկացեալ կրակը, որ Աստուած նրա շուրթերին էր հպել որպէս նրա էութիւնը մշտապէս քորքոռող հուր, մագնիսական հաղորդականութիւն էր փոխանցում ու իւրաքանչիւր ունկնդրի հոգում արծարծում ու քորքոռում էր կեանքի ու ճշմարտութեան այդ կրակը՝ հզօր թափով:

Այո՛, նա կարողացաւ հզօր խօսքով յուզել, համոզել ու դարձի բերել դէպի ճշմարտութեան ճանապարհ Հայաստանեայց եկեղեցու գաւթում համախմբուած իր մեծ լսարանն ու հօտը, որը միանգամայն

հանդիսանում էին Հայրենիքն ու Սփիւտը: Նա ընդելուզուեց եւ միաժողովեց Ս. Էջմիածնի Աթոռի կեանքին, աշխատանքին ու երազներին:

Ու երբ բազում էին այդ երազները ու իրագործման վնասակարությունը՝ մեծ, ահա ամսպասելի պատահականութեամբ ընդհատուում է այս մեծ կեանքի թելը՝ անաւարտ թողնելով բազմաթիւ իրականացումներ:

«Եւ դադարեաց Յակոբի պատուիրելոյ որդւոցն իւրոց, եւ առեալ զոտս իւր անդրէն ի մահիճսն՝ պակասեաց, եւ յաւելաւ առ ժողովուրդ իւր» (Մննդ., 49-53):

Այո՛, կորուստը ծանր է եւ մեծ: Անչափելի են վիշտը, ցաւն ու փստսամբը, սակայն խոնարհելով մեր գլուխը Աստուծոյ կամքի եւ Վեհափառի մեծութեան առաջ՝ յոյսի մեր հայեացքն ենք ուղղում առ քարին Աստուած՝ ակնկալելով Նրա մեծ ողորմութիւնը: Եւ չենք սխալուում: Այն Տէրը, որն օժտեց այժմ այլեւս համգուցեալ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Հայրապետին Ս. Հոգու բոլոր շնորհներով, պիտի չզլանայ նրան պարգեւելու հիմա՛, շնորհների աւեմանեծը՝ Աստուծոյ ողորմութեան եւ փրկութեան շնորհը: Հրաւիրում եմ միաձայն աղօթելու եւ ասելու, «Լուսաւորեա՛, Տէ՛ր, զհոգի Հայրապետի եւ հօրն մերոյ, Տեառն Գարեգնի Առաջնոյ, եւ հաւնդ զի ի լոյս երեսաց աստուածութեան քն»:

Շարունակելով աղօթի՝ ասեմք մանեւ. «Ողորմիր եւ մեզ, Տէ՛ր, պարգեւելով Գո մխիթարութիւնը եւ շարունակելով օրհնել եւ Գո Աչի գորութեան տակ պահպանել, պահել եւ առաջնորդել Հայ եկեղեցին եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Այդ մխիթարութիւնը եւ շարունակելու կամքը ստամայումն օգնում է մեզ ման իմքը՝ Վեհափառ Հայրապետը: Յարատեւօրէն իմքն իրեն հաւատարիմ՝ շարունակում է տակաւին այս քեմից,

անգամ անշնչացեալ իր մարմնի միջոցով պատգամել մեզ: Կարծէ՛ք դարձեալ նրա ախորժալուր ծայնն է հոսում մեր ակամջների մէջ թելադրելով եւ պահանջելով հաւատարիմ մնալ այդ պատգամներին: Եւ ինչպէս միշտ, անձամբ օրինակ է դառնում բոլորիս:

«Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ, որ առաքեացն զիս, մինչ աւուր կայ. գայ զիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել: Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի» (Յովհ. Թ. 4-5):

Այո՛, Վեհափառ, ունկնդիր ենք այդ ծայնին ու պատգամին եւ խոստանում ենք ահա Ձերդ Սրբութեան առաջ, որ ակնկալելով երկնային բարձունքից Ձեր աղօթքները եւ Աստուծոյ օրհնութիւնը՝ պիտի շարունակենք Ձեր ուղեւշած ճանապարհով առաջ ընթանալ:

Դու՛ք այժմ կենդանի աղօթք դարձած Ս. Էջմիածնի բարձունքից հրաւեր էք կարդում աշխարհի չորս ծագերին սփռուած Հայաստանեայց եկեղեցու Ձեր գաւակներին՝ ասելով. հաւատացէ՛ք, գործեցէ՛ք եւ համախմբուե՛ք Հայրենիքի ու Մայր Աթոռի շուրջ եւ այնտեղ պիտի գտնէ՛ք աւեմ ինչ, որ հնարաւոր է ակնկալել «զքարին, զպիտոյսն եւ զօգտակարն»:

Ձեր մեծութիւնը, Վեհափառ, արդէն կայանում էր մանեւ նրանում, որ Ձեր յիշատակն անգամ բոլորին պիտի մղի՝ ի գործ:

Արդ, այս բոլորից յետոյ հանգիստ խղճով կարելի է ասել. «Վեհափառ, դու՛ք կեանքում եւ այժմ երջանիկ էք մահուան մէջ, որովհետեւ այդ սիրոյ ու միաբանութեան վնասակարութեամբ Ձեզ եմ շրջապատել բոլոր Ձեր սիրելիները եւ խոստանում եմ կատարել Ձեր բոլոր պատգամները:

Հուսկ, յայտնում ենք ցաւակցութիւններ ամբողջ մեր ազգին եւ Վեհափառի հարազատներին:

Երջանիկ Հայրապետ, խունկ եւ աղօթք յիշատակիդ:

## ՄԵՄԻ ՏԱՆՆ ԿԻՆԿԻՈՅ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍՔԸ (Նոտացումով)

Հայ ժողովուրդի պատմահայր՝ Մովսես Խորենացին խօսելով հայութեան ու Հայաստանի մասին, թուղթին կը յամձնէ դարերէն եկող ու դարերուն գացող նշարտութիւն մը՝

«Թէեւ եւ եմք ածու փոքր ու թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ ... սակայն քաղումք գործք արութեան գտանին եւ ի մերումս աշխարհի եւ արժանի գրոց յիշատակի»:

Ժողովուրդներ կ'ապրին ու կը յանձնան «արութեան գործերով» միայն: Հայրենիքներ կը գոյատեւեն ու կը հզօրանան «արութեան գործերով» միայն:

Ու «արութեան գործը» սոսկ արեան վկայութիւն չէ «վասն հաւատոյ ու վասն հայրենեաց», այլ նաեւ մարդոջական ու յամձնառու ինքնընծայում է հոգեմտաւոր ստեղծագործութեան, հաւատքի առաքելութեան ու անամձնական ծառայութեան նամբով՝ Աստուծոյ, ազգին, հայրենիքին ու եկեղեցւոյ:

Արդ, հաւատով լեցուն, յոյսով թրծուած ու տեսիլով շողախուած «արութեան գործն» է աղբիւրը գօրութեան, երաշխիքը յանձնութեան: Եւ «արութեան գործին» ետին կեցողը՝ հաւատքի՝ մարդն է, յամձնառու ու արի մարդն է: Այլ խօսով՝ գործը կեանքի վերածողը մարդն է, գործին զսպանակը մարդն է՝ «մարդն է որ գործէ երկիր», կը հաստատէ Աստուածաշունչը:

Գարեգին Վեհափառին անձին հմայքը, ուսուցիչի տիպարն ու անոր հոգեմտաւոր արժանիքները առատօրէն նառագայթեցին իր պատրաստած սերունդներուն վրայ:

Գարեգին Վեհափառը եղաւ ու մնաց

մտաւորական՝ քառին լիիրաւ հասկացողութեամբ: Ինծի համար ան մտաւորական էր ոչ այնքան իր հեղինակած քաղմաքիւ ու քաղմալեզուեան հատորներով ու յօդուածներով, իր ունեցած պատմա-եկեղեցական լայն ծանօթութիւններով եւ կամ իր գեղեցիկ քեմքասացութեամբ, որքան պրպտելու իր անսպառ կորովով, կարդալու իր գօրեղ կիրքով ու մտածելու իր իւրայատուկ ռեզով ու մանաւանդ իր լայն աշխարհայեացքով:

Գիրքը եղաւ իր ամենէն մտերիմ ու հաւատարիմ քարեկամը: Միայն գիրքին ներքողը չհիւսեց: Միայն գիրք չտպեց: Պաշտամունքի հասնող յարգանք ու սէր ունեցաւ գիրքին նկատմամբ: Ապրեցաւ, կազմաւորուեցաւ ու հարստացաւ գիրքն ու գիրքին ամփջական մտերմութեան մէջ: Իր գրասեղանին վրայ, իր ննջասենեակին մէջ, իր ճամբորդական պայուսակին մէջ միշտ ներկայ եղաւ գիրքը: Միշտ կարդաց ու միշտ գրեց: Եւ հակառակ իր առաքելութեան պարտադրանքով զինք շրջապատող վարչական տաղտուկներուն ու իր սպառնիչ ժամանակացոյցին, գրիչը, թուղթը ու գիրքը իրեն համար միշտ մնացին մնայուն ու սիրելի ներկայութիւն:

Արդարեւ, իր ողջ կեանքը «արութեան գործերով» լեցուց եւ արժեւորեց մեր բոլորին սիրելի Վեհափառ Հայրապետը՝ երջանկայիշատակ Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Իր բովանդակ կեանքը եղաւ հաւատքի առաքելութիւն՝ ծառայական ոգիով, վառ տեսիլով ու անխոնջ աշխատանքով զսպանակուած:

Ու սա տխուր պահուն, խօսիլ Գարեգին Վեհափառի մասին, գէթ ինծի



համար, սոսկ «յաւուր պատշանի» դամբանական խօսիլ մը չէ, այլ էապէս վկայել է այն կենդանի վկայութեան մասին, որ իրը՝ Գարեգին Վեհափառինը եղաւ այն յանձնառու վկայութեան մասին, որուն ականատեսը, հետեւողը, հիացողը, այլ խօսքով՝ վկան եղայ եւ շուրջ 40 երկար տարիներ:

Գարեգին Վեհափառին մէջ առաջին հերթին եւ նաւցյալ ուսուցիչը: Սովորական ուսուցիչ չեղաւ ան՝ գիտելիք ջամբելու հիգով հետամուտ: Ոգի մերարկողը, հաւատք մերշմելող, հայուն մէջ մարդը, հայը եւ իրիստունեան կերտող առաքելատիպ ուսուցիչ եղաւ ու մնաց իր ողջ կեանքին ընթացքին, Սարկաւագութենէն մինչեւ Կաթողիկոսութիւն:

Արդարեւ, պատմութիւն չդասաւանդեց ան, որպէս անցած դէպքերու ու դէմքերու մէկ ամրոցութիւն մը այլ որպէս շարունակուող կենդանի իրականութիւն: Աստուածաբանութիւն չդասաւանդեց ան, որպէս փիլիսոփայական յղանգներու տրամաբանական դասաւորում մը, այլ՝ Աստուծոյ ու մարդու միջեւ հաւատքի փոխ յարաբերութիւն մը:

Մարդու պատրաստութիւնը Գարեգին Վեհափառին համար դարձաւ իր հոգեւորականի կեանքին ամենէն կենսական տարածքներէն ու իր սրբազան կոչումին ամենէն վաւերական արտայայտութիւններէն մէկը: Հաւատաց մարդու արժէքին: Հաւատաց մարդու աստուածատուր կոչումին: Հաւատաց մարդու վիճակուած վնասկան մերկայութեան եկեղեցւոյ ու ընկերութեան կեանքին մէջ: Ո՛հ այս անխախտ հաւատէն մեկնելով, ան ա՛յ միայն քարոզեց, խօսեցաւ ու գրեց մարդկայնութեան ու հայակերպութեան մասին, այլեւ այս մուրակն ու հրամայական գործին համար գոհեց նիւթ ու ժամանակ, շունչ ու համգիտս:

Հետեւաբար, «տիպար ուսուցիչ»

բացատրութիւնը պատիկ կու գայ մեր պատմութեան մտքի ու հոգիի հսկաներում հոգեմտաւոր աշխարհը, յոյզերն ու մաքառումները, տեսիլներն ու ձգտումները այնքան վաւերականօրէն ու կենդանիօրէն հայ աշակերտին փոխանցած այս մեծ ուսուցիչին համար: Իրեն աշակերտած իւրաքանչիւր ուսանող իրմէ անընչելի բան մը ունի, ոչ որպէս լոկ յիշատակ, այլ՝ հոգեկան ապրում, իւրայատուկ մտածելակերպ, կարողաւ ու պրպտելու:

Գարեգին Վեհափառին հոգեւոր սպասաւորութեան ամենէն ցայտուն երեսներէն մին եղաւ իր միջեկեղեցական գործունէութիւնը: Էփիմէիզմ անունով ծանօթ միջազգային միջեկեղեցական այս շարժումը իր ճշդորոշիչ դերը ունեցաւ Վեհափառին հոգեմտաւոր կազմաւորման մէջ՝ անընչելի կնիք ձգելով իր մտածելակերպին ու աշխարհայեացքին վրայ:

Իր արեղայութեան երիտասարդ տարիքէն սկսեալ անընդմիջաբար, կազմակերպ հետեւողականութեամբ, մտաւորական լրջութեամբ ու խոր հաւատով իր գործունէ մասնակցութիւնը բերաւ այս շարժումին թէ՛ տեղական, թէ՛ շրջանային եւ թէ՛ միջազգային մակարդակներու վրայ: Դարձաւ անդամ քազմաթիւ յանձնախումբերու ու նոյնիսկ պատասխանատու պաշտօններ ստանձնեց շարք մը մարմիններէ ներս: Էփիմէիզմ շարժումին մէջ Գարեգին Վեհափառը սոսկ դիտողի կամ հետեւողի կրաւորական դերին մէջ չեղաւ, այլ՝ մասնակցողի ու առաջնորդողի դիրքին վրայ: Խորապէս հաւատաց մամուսնող հայ եկեղեցւոյ համար այս շարժումին ունեցած կենսական կարեւորութեան: Յարգեց օտարը ու օտարինը՝ առանց դառնալու սակայն օտարամոլ: Ամբօրէն կապուած մնաց մեր եկեղեցւոյ դարաւոր հաւատքին, իմքնուրոյն նկարագրին ու իւրայատուկ աւանդութիւններուն եւ զանոնք օտարներում առջեւ

բացող ու մեկնաբանող ՁՕրդ դարու մեր եկեղեցւոյ պատմութեան ամենէն գորեղ դեպքանքներէն մին դարձաւ միջազգային գետնի վրայ:

Գարեգին Վեհափառին կեանքին ու գործին, իր իսկ նախասիրած քաջատրութեամբ «ծառայական այս կերպերը», այլ խօսքով՝ յանձնառու ուսուցիչը, իրաւ մտաւորական ու հաւատաւոր էֆիմէնիսթը նոյնացան իր անձին հետ ու անշեղօրէն փայեցին իր ծառայական կեանքին հետ: Սակայն, այս բոլորէն առաջ ու վեր Գարեգին Վեհափառը եղաւ ու մնաց Աստուծոյ, ժողովուրդին ու եկեղեցւոյ նուիրեալ ծառան, Քրիստոսի «քանաւոր հօտին» անձնորդի հովիւը:

Աւելի քան 40 տարիներ ան ծառայեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, ստանձնելով վանական ու թեմական կարեւոր պաշտօններ եւ ապա դառնալով անոր մեծագոյն հայրապետներէն մէկը: Իր կաթողիկոսական շրջանին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ապրեցաւ հոգեւոր ու մշակութային զարթոյն: Մեր Ս. Աթոռին միաբանութիւնը աճեցաւ, Դպրեվանքը զօրացաւ, կազմակերպուեցաւ, մշակութային կեանքը ծաղկեցաւ, թեմերը կազմակերպուեցան, միջեկեղեցական յարաբերութիւնները ծաւալեցան: Արդարեւ, մեր Ս. Աթոռին վերջին շուրջ կէս դարու պատմութեան մէջ իր անջնջելի կնիքն է ձգած Գարեգին Վեհափառը:

Զորս տարիներ առաջ, երբ Աստուծոյ ձայնը զինքը Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն կանչեց, որպէս Ամենայն Հայոց Հայրապետ աւելի լայն պատասխանատուութիւններով ծառայելու մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին, Գարեգին Վեհափառը վերանորոգ հաւատքով ու տեսիլքով շարունակեց իր հաւատքի նոյն առաքելութիւնը այս անգամ հայրենի հողին վրայ:

Հոգեւոր վերանորոգութեան նոր շունչ մը քերաւ ան Ս. Էջմիածնի Մայր Աթոռէն ներս: Գերեզեան ձեւաբանի վերակազմակերպում, կրօնական դաստիարակութեան կեդրոնի հիմնում, հրատարակչական աշխատանքներու ծաւալում, հովուապետական այցելութիւններու իրագործում ու միջեկեղեցական յարաբերութիւններու զարգացում եւ այլ կարեւոր նախաձեռնութիւններ ու իրագործումներ կազմեցին առանցքը Գարեգին Վեհափառին կարճ գահակալութեան:

Ահա՛ ամփոփ գիծերով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, այնպէս ինչպէս որ եւ զինք մանչցայ իր վարդապետութենէն մինչեւ կաթողիկոսութիւն:

Ահա՛ Գարեգին Վեհափառը, այնպէս ինչպէս որ ինքզինք եղաւ ու ինքզինք իրագործեց մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին հաւաքական կեանքէն ներս՝ բարձրագոյն աստիճանի նուիրութեամբ, սրբազան նախանձախնդրութեամբ ու գիտակից յանձնառութեամբ:

Ահա՛ իր կեանքը «արութեան գործերով» հարստացուցած ու մեր ազգին կեանքին անդաստանը «արութեան գործերով» պտղաւորած՝ Աւետարանի այս նուիրեալ ֆարոգիչը, Մեսրոպ Մաշտոցի այս քանիքուն աշակերտը, էֆիմէնիզմի այս անխոնջ նուիրեալը, Լուսաւորիչներու ու Շնորհալիներու այս արժանաւոր յաջորդը:

Սիրելի՛ Վեհափառ, Անցնող շուրջ 40 տարիներուն մեմք միասին եղանք միշտ: Դու առաջնորդեցիր իմ ֆայերս Հայց. Եկեղեցւոյ ծառայութեան դաշտէն ներս՝ աշակերտութենէն մինչեւ սարկաւագութիւն ու սարկաւագութենէն մինչեւ կաթողիկոսութիւն: Մեմք միասին ծրագրեցինք, միասին տալանապահեցինք,

միասին պայքարեցանք, միասին ծառայեցինք ու միասին ֆայեցինք հայ եկեղեցւոյ ծառայութեան ճամբով դէպի հայ ժողովուրդի պայծառ ապագան:

Ինչ որ ըսիք քու մասին, Սիրելի՛ Վեհափառ, որպէս անձնական վկայութիւն, ոչի՛նչ է այն մեծ անձին համար, որ դու եղար, այն մեծ ծառայութեան դիմաց, որ դու կատարեցիր մեր եկեղեցւոյ ու մեր ժողովուրդին:

Քիչ յետոյ քեզմէ հողին պիտի յանձնենք այն ինչ որ հողին կը պատկանի: Սակայն դու վեր պիտի մնաս գերեզմանի փոսէն: Պիտի մնաս մեր մէջ յաւերժօրէն քու ամուր հաւատով, վառ յոյսով ու պայծառ տեսիլով: Պիտի դառնաս ոգեղէն ու ոգեղինող ներկայութիւն: Պիտի դառնաս ճանապարհ եկեղեցաշէն ու ազգանուէր ծառայութեան եւ հրաւէր ազգային միասնութեան:

Քու ետիդ կը ձգես սերունդ մը, քու շունչովդ, ոգիովդ ու հաւատովդ պատրաստած սերունդ մը, որ վնաս է քեզի հաւատի առաքելութեան, ազգին ու հայրենիքին ծառայութեան նոյն ճանապարհին:

Քու ետիդ մամաւանդ կը թողու, Վեհափառ, նուիրական կտակ մը՝

- Վառ պահել կանթեղը Լուսաւորչի հայ ժողովուրդի կեանքէն ներս.

- Պայծառ պահել առաքելաւորման ու Լուսաւորչաշէն եկեղեցին Հայաստանեայց իր լոյսի եւ յոյսի առաքելութեամբ.

- Ամուր պահել հայրենիք մեր՝ իր պետականութեամբ ու ժողովուրդով:

- Զօրեղ պահել Ղարաբաղը մեր՝ իր ազատագրական պայքարով ու արդար իրաւունքներով.

- Միակամ ու ամբողջական պահել ժողովուրդը մեր՝ իր Հայրենիքով, Ղարաբաղով ու Սփիւռքով:

Օրինէ՛ մեզ, Կիլիկեան դարաւոր Ս. Աթոռին մեծագործ Վեհափառ ու վերանկախացեալ հայրենիքին առաջին ընտրեալ Վեհափառ: Օրինէ՛ մեզ, երբ կը պատրաստուինք որպէս մէկ եկեղեցի ու մէկ ազգ 1700ամեակը տօնելու մեր ազգին քրիստոնէացման, հայրենի աշխարհի պայծառակերպման:

Վստահ եղիր, սիրելի Վեհափառ, որ մենք Հայց. Եկեղեցւոյ ճամբով, Աստուծոյ, ազգին ու հայրենիքին ծառայութեան լծուած հոգեւոր սպասաւորներս, քու կտակին ու մեր պատմութեան ճայնին հաւատարմութեամբ, վերանորոգ կամով ու տեսիլով պիտի շարունակենք մեր հաւատի ու լոյսի առաքելութիւնը՝ վասն շինութեան հայրենեաց մերոյ ու վասն յաւերժութեան ազգիս մերոյ:

Թող Աստուած հաստատ ու պայծառ պահէ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Թող Աստուած ամուր ու զօրեղ պահէ մեր բոլորին սիրելի հայրենիքը:

Թող Աստուած անսասան ու անվթար պահէ մեր ազգը ի Հայաստան, Ղարաբաղ եւ ի Սփիւռք աշխարհի:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐԺ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Իբրև Պատրիարք Երուսաղեմի, ես կը բերեմ ցաւի կսկիծը, անխառն հիացմունքը, և Քրիստոսի յոյսն ու ապաւենը յուշող խոստումը, Սուրբ Երկրի Քրիստոսակոխ սրբավայրերու, և Հայ Պատրիարքութեան Սրբոց Յակոբեանց զինուորեալ Միաբանութեան, և Հայ ժողովուրդի զաւակներուն, որոնք ծուարած են, և ապաւեն գտած են, Իսրայէլի, Յորդանանի և Պաղեստինի պետական իշխանութեանց հովանիին ներքև:

Ես կը բերեմ նաև Երուսաղեմի բոլոր քրիստոնեայ համայնքներու և Միաբանութեանց պետերու, ցաւակցական արտայայտութեանց կողքին, անոնց զնահատական հիացմունքի և անձնական յիշատակներու շարանը՝ Գարեգին Սարգիսեան հայ հոգևորականէն: Անոնք կը յիշեն Հայաստանեայց Եկեղեցւոյ հարազատ զաւակին, հոգևոր սպասաւորին, նուիրեալ ճարտարաբանին հետ, և Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցիին Քրիստոսակեդրոն առաքելութեան անվարան ջատագովին հետ, իրենց ունեցած եղբայրական յարաբերութեանց, համատեղ ծրագրումներուն և գործակցութեանց ամոռանալի փորձառութիւնները:

Սեր բոլորին ցաւի կսկիծն այն էր, որ ֆիզիքական մարմինին տոկոսութիւնը քայքայող «զաղտնի խլիրդը» յաջողեցաւ այնքան շուտ իր սպունգային ճիրաններուն մէջ խեղդել առատահունչ ծայրն ու խօսքը պերճաբան Հայրապետին, հակառակ լաւագոյն բժիշկներու ճիգերուն, հակառակ մանաւանդ իրեն բարեկամ ու հոգատար երկու հայ բժիշկներու խնամքին և անմիջական հոգածութեան:

Ո՛վ կրնար մտածել, և ո՛վ կրնար «Կեանքի Գիրքը կարդալ», յայտնելու համար, որ կորովի Հայրապետը, միայն չորս տարի ունէր, իր ուխտի կեանքին, և իր ուխտաւորի ճանապարհորդութեան երկրային վախճանին հասնելու:

Ես կը հաւատամ որ միայն ինք ունէր այդ ինքնեկ ներհայեցողութիւնը և կանխագագումը:

Այլապէս ինչպէ՞ս բացատրել, ժամանակի այդ կարճ տևողութեան և հասակի հակադրաբար, իր լեռնադէզ իրագործումները, (ինչպէս որ, Սայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանի պատասխանատու վարիչը կը յայտնէր), 310 փոքր ու մեծ ծաւալով իրատարակութիւններուն. և ինչպէս որ, իր կենսագրական էջերուն մէջ յիշատակուած կը կարդանք, հոգևոր դաստիարակութեան նուիրուած, ազգային, կրթական, գիտական, և մշակութային նախաձեռնութեանց սատարող իր անխոնջ պատրաստակամութիւնը:

Նախախնամական պէտք է նկատել նաև մի այլ երևոյթ:

Սինչ մեր մարդկային կարճատես նկատումներով, մենք կը փորձուէինք ստորագնահատել Ամենայն Հայոց Հայրապետին Սայր Աթոռն դուրս հովուապետական այցելութիւնները (մենք զնեզ աւելի իմաստուն և նախանձախնդիր համարելով), այժմ կ'անդրադառնանք, որ

նախախնամական ներհայեցողութեան և կանխազգացումի ներքին ծայր մը զինք կը մղէր, (բացի Հայաստանի մեր թեմերուն իր տուած այցելութիւններէն), «Լուսոյ Խորան Սուրբ Էջմիածնի» անլուծելի ղօղանջը հնչեցնելու, և անսպառելի օրհնութիւնը բաշխելու աշխարհացոյի մեր գաւակներուն:

Ինչպէ՛ս նախախնամական չնկատել ներքին այդ մղումը, որ զինքը տարաւ վեց աշխարհամասերու մէջ հաստատուած, քսանէ աւելի թեմերու այցելութեան, և առաւել՝ Կոստանդնուպոլսոյ Հայ Պատրիարքութեան, և Անթիլիասի մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ նորընտիր Կաթողիկոսին՝ Նորին Սրբութիւն Արամ Առաջին Հայրապետին օծման արարողութեան, ամեն տեղ և անձամբոյթ պատգամելով, թէ՛ անբաժանելի է Հայոց Հայրենիքը իր ներկայ անկախացեալ պետականութեամբ. թէ՛ անբաժանելի է Հայոց Առաքելահաստատ Մայր Եկեղեցին իր ժողովուրդով, թէ՛ պատմական և հայրենական իր հողերուն կառչած. և թէ՛ սփիւրջեան անդաստաններուն մէջ իր ինքնութիւնը անխորտակ պահելու մարտահրաւիրով զինուած:

Եւ իբրեւ համաքրիստոնեական գործակցութեան հաւատարիմ բերանախօս, Հայոց Հայրապետը իր եղբայրական յարաբերութիւնը շարունակեց պահել բոլոր Եկեղեցիներու Կեդրոններուն և Սրբազան պետերուն հետ:

Եւ ի՛նչ խանդավառութեամբ կը սպասէինք, Քրիստոսի Ծննդեան 2000-ամեակին առիթով, Բեղեհեմի և Երուսաղէմի Հայկական և Համաքրիստոնեական Սրբավայրերու մէջ, տօնախմբելու նաև Հայ ժողովուրդի անմրցելի դափնեպսակը, 301 թուականին Քրիստոնէութիւնը Հայաստան Աշխարհի «պետական-կրօնը» յայտարարելու աստուածապարզ և շնորհին, Նուիրապետական մեր Աթոռներուն Գահակալներուն, և Անկախացեալ մեր Հայրենիքի Հանրապետութեան նախագահին մասնակցութեամբ:

Կը հաւատանք որ 1700-ամեակի բոլոր ծրագիրներուն խանդավառօրէն նուիրեալ մեր Հայրապետին հոգին մեզի հետ պիտի խնդակցի:

Եւ այժմ, ո՛վ անձնուէր և Վեհափառ Հայրապետ, կ'աղօթենք, որ Տէրը ընդունի Քու ընծայաբերած ցորեանի դէգերը և շտեմարանները, և զանոնք նաշիհի և հաղորդութեան հացի փոխակերպէ, հոգեպէս զինելու և զօրացնելու համար մեր ժողովուրդն համայն, մեր օրերու Վարդանանց պատերազմը պատերազմելու, «վասն հայրենեաց եւ վասն հաւատի», իբրեւ քաջամարտիկ զինուորները Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցւոյ Քրիստոսահաստատ հաւատքի վեմին:

Հայաստան աշխարհի և պետութեան, և Ղարապաղեան Արցախի հայրենական հողերու նուիրական պաշտպանութեան. և իբրեւ ռաիվիրաներ Սփիւռքի և Հայրենիքի անսասան միասնութեան:

Ուխտագնաց և Վեհափառ Հայրապետ. հոգիիդ ուխտը ընդունական, և դէպի յաւերժութիւն ճանապարհդ լուսառատ Քու ուղին մնայ միշտ, լսելով կոչը Քրիստոսի. «Եկայք, օրհնեալքք Հօր իմոյ. ժառանգեցէք զպատրաստեալն ձեզ զարքայութիւն»:

## Կ. ՊՈԼՍՈՑ ՊԱՏՐԻԱՐԺ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐԺ. ՄՈՒԹԱՖԵԱՆԻ ԽՕՍԲԸ

«Զգուշ կացէք անձանց եւ ամենայն  
հասիւղ, յորում ետ գտեալ Հոգիին Սուրբ  
տեսուչս, հովուիւ զժողովուրդը Տառն,  
զոր ապրեցոյց արեամբ իւրով»  
(Գործք Ի. 28)

Ահաւասիկ Սուրբ Պօղոս Առաքեալի  
սոյն խօսքերը կը յիշեմք այս պահուն, երբ  
կը պատրաստուինք Վեհափառ Տիրոջ  
անկենդան մարմինը հողին յանձնել  
Միածնաէջ սրբավայրի կողքին: Պօղոս  
երբք լման տարիներ, Եփեսոսի մէջ եւ  
շրջակայքը, Քրիստոսի Աւետարանը  
հարողելէ ետք, Միլետոսի մէջ հաւաքեց  
շրջանի եպիսկոպոսները եւ ըսաւ անոնց.

«Դուք անձամբ գիտէք, թէ առաջին  
օրէն ի վեր ինչպէս վարուեցաւ ձեզի հետ:  
Ամենայն խոնարհութեամբ եւ յամախ  
արցունեմով ծառայեցի Տիրոջ,  
փորձութիւններ կրելով: Գիտէք, թէ քնաւ  
չքաշուեցայ ձեզմէ, օգտակար քաներու  
մասին խօսեցայ եւ սորվեցուցի ձեզի,  
հրապարակաւ ըլլայ թէ տուններու մէջ:  
Բոլորին տուի միեւնոյն վկայութիւնը եւ  
պատգամը՝ ապաշխարութեամբ Աստուծոյ  
դառնալու մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի  
հաւատալու:

«Հիմա, ահաւասիկ... կ'երթամ:  
...Այսուհետեւ պիտի չտեսնէք զիս: Եկայ  
Ձեզի բոլորիդ, շրջեցայ եւ Աստուծոյ  
Արքայութիւնը հարողեցի, եւ ահաւասիկ  
կը յայտարարեմ այսօր՝ թէ խիղճս հանդարտ  
է, որովհետեւ առանց քաշուելու յայտնեցի  
ձեզի Աստուծոյ կամքը:

«Հսկեցէ՛ք ձեր անձներուն եւ ձեր  
ամբողջ հօտին, որուն տեսուչ կարգեց ձեզ  
Սուրբ Հոգին:

«Հովուեցէ՛ք Տիրոջ Եկեղեցին, որ Ան  
իր արեամբ գնեց:

«...Արթուն եղէ՛ք, յիշեցէ՛ք թէ ինչպէս

...անդադար, գիշեր ու ցերեկ, արցունեմով  
խրատեցի իւրաքանչիւրդ: Եւ հիմա ձեզ կը  
յանձնեմ Աստուծոյ եւ իր շնորհքի  
Աւետարանին, որ կրնայ ձեզ հոգեւորապէս  
անեցնել եւ իր բոլոր սուրբերուն  
ժառանգակից դարձնել»:

Կիլիկեցի Առաքեալի հրածելտի  
խօսքերը կարծես այսօր արձագանգ կը  
գտնեն Գարեգին Ա. Կիլիկեցի Հայրապետէն,  
երբ բոլորս կը մորմոխիմք անոր համար,  
որ այլեւս զինք պիտի չտեսնեմք, պիտի  
չկրնամք ունկնդրել իր մեղրածորան  
պատգամները, տեսնել իր քաղցր ժպիտը  
եւ վայելել իր հայրական մտերմութիւնը:

Պոլսահայութիւնը երբեք պիտի  
չմոռնայ Ամենայն Հայոց Գարեգին Ա.  
Հայրապետին շնորհաբեր այցելութիւնը  
1996ի գարնան, երբ Սուրբ Լուսաւորչի  
181րդ յաջորդը՝ առիմքնեց աւանդապահ  
ժողովուրդը որպէս ոսկեբերան հարողիչ  
եւ հայրախնամ հոգեւոր պետ, որ եկած էր  
իրենները գտնելու:

Համազգային սուգի այս պահուն,  
յանուն մեր Պատրիարքական Աթոռոյն  
միաբան հայրերուն, հոգեւոր դասուն,  
վարչական մարմիններուն ու մերազն  
հաւատացեալ ժողովուրդին, կը յայտնեմք  
մեր խորազգած վշտակցութիւնը Մայր  
Աթոռ Սուրբ Էջմիածնի մեր միաբանակից  
հայրերուն եւ եղբայրներուն, համգուցեալ  
Հայրապետի սիրեցեալ հարազատներուն  
եւ հայրենի մեր ժողովուրդին:

Ամալյալօրէն կը կիսեմք մեր սուրբ  
հայրերուն հաւատքը, քանի որ «Քրիստոսի



միանալով մկրտուեցանք» և «մկրտութեամբ Անդր մահուան հաղորդակից դարձանք»։ Առյուծապետ Գրիգորը փառքով յարութիւն առաւ մեռելներէն, առյուծապետ ալ մենք պիտի ապրինք մոռցուած կեանքով» (Հռոմ. 6.3-4)։

Գրեթէ Ա. Ամենայն Հայոց Հայրա-

պետը թէն մեռած է այժմ ըստ մարմնի, սակայն ան կենդանի է՝ Աստուծոյ համար, մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի միջոցաւ։

Հանգիստ իր տառապեալ հոգիին, որ իբրեւ անուշաբոյր խումկ կը միանայ մեր լուսահոգի հայրերու փաղանգին։

Խումկ և օրհնութիւն իր ամսահ յիշատակին։

## ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՌՈՐԵՐՏ ՔՈԶԱՐԵԱՆԻ ԽՕՍԲԸ

Սիրելի հայրենակիցներ,

Մեծաբոյլ հիւրեր։

Այսօր սգում է հայ ժողովուրդը։ Մենք մայր հողին ենք յանձնուած Առաքելական Սուրբ Եկեղեցու հովուապետ, Ամենայն Հայոց Թեմայի Կաթողիկոս Գրեթէ Առաջինի մարմինը, իսկ նրա լուսաւոր հոգին երկնային խաղաղութեան և ամսահոգեան ճանապարհին է։ Վեհափառ Հայրապետը մեր այն քաջադիկ բարտաւոր կաթողիկոսներից մէկն էր որ երկարածիգ դարերի ընդմիջումից յետոյ Գրիգոր Լուսաւորչի գահին բազմեց հայկական անկախ պետականութեան պայմաններում։ Այդ սրբազան առաքելութեանը մա լծուեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան գահակալի 18 տարուայ հարուստ փորձով, միջազգային լայն ճանաչմամբ և բարձր հեղինակութեամբ։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նրա հովուապետութեան տարիները թէն կարճատեւ եղան, բայց այդ կարճ ժամանակաշրջանի իւրաքանչիւր օրը եղաւ արգասաբեր։ Վեհափառ Հայրապետը մեծ իմաստութեամբ և ամսացորդ մոկրումով հովուեց Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին մեր երկրի համար պատմական ու պատասխանատու ժամանակահատուածում։ Նա համոզուած էր որ քաղաքական

անկախութեանը պէտք է յաջորդի հայ ժողովուրդի հոգեւոր վերակենտրոնումը։

Նա իր անսպառ եռանդը և ջանքերը ուղղեց հայ մարդու մէջ սիրոյ, յոյսի և հաւատի վերահաստատմանը և մեր երկրի հզօրացման համար մեծ նշանակութիւն ունեցող հոգեւոր գարթօմբին։ Հայրապետը ձեռնամուխ եղաւ այդ նպատակի իրագործմանը իմաստունի համբերատարութեամբ և հետեւողականութեամբ։ Վերաշխուծացաւ հոգեւոր ճեմարանների գործունեութիւնը, վերանորոգուեցին բազմաթիւ եկեղեցիներ ու վանքեր, կառուցուեցին նորերը, վերաբացուեցին մեր թեմեր։ Հովուապետական իր այցելութիւնների ժամանակ Վեհափառը մխիթարում էր օրհնութիւն քաջիկեց սպիւռճահայ մեր հաւատացեալ եղբայրներին աշխարհի ամենատարբեր անկիւններում գտնուող բոլոր թեմերում և մայր հայրենիքում։

Վեհափառ Հայրապետն իր մեծ հեղինակութեամբ մեր թափ հաղորդեց Ս. Էջմիածնի Էկումենիկ գործունեութեանը և ամրապնդեց կապերը Բոյր Եկեղեցիների, ինչպէս նաեւ եկեղեցիների համաշխարհային խորհրդի հետ։ Վեհափառ Հայրապետի հայագիտական, աստուածաբանական, փիլիսոփայական, քաղաքագիտական ուսումնասիրութիւնները, հայերէն և օտար

լեզուներով հրատարակուած քաղաքա-  
գրքերը, գրական ստեղծագործութիւնները  
ժամանակակից հայ հոգեւոր մշակոյթի  
ամրաժանելի մասն են կազմում եւ մեր  
հոգեւոր հայրենիքի մնայուն արժէքներն  
են: Ի գնահատումն նրա հոգեւոր եւ  
գիտական քաջադիկ ծառայութիւնների,  
որպէս միջազգային հեղինակութիւն վայելող  
խոշոր մտաւորականի, աշխարհի քաղաքա-  
համայնարանների, կրօնական ու գիտական  
հաստատութիւններ նրան շնորհել են  
պատուաւոր դոկտորի կոչում:

Վեհափառն իր գործունէութեան ողջ  
ընթացքում միջազգային ամենահեղինա-  
կաւոր ատենաներում պաշտպանեց իր  
ժողովրդի ազգային եւ մարդկային

իրաւունքները եւ ոչինչ չխնայեց նրա  
իղձերն ու նպատակներն իրականացած  
տեսնելու ճանապարհին:

Վրօնական եւ ազգային գործիչ, որ  
պատմական արդարութեան ճժարին դրեց  
իր կեանքի խօսքը եւ գործը: Վեհափառ  
Հայրապետը Հայ Առաքելական Եկեղեցու  
պաշտօնական հիմնադրման 1700ամեակը  
գիտում էր իրբեւ ողջ հայութեան մէջ եւ  
յատկապէս՝ Հայաստանի Հանրապետութիւ-  
նում քրիստոնէական աւանդոյթի վերանո-  
րոգման եզակի հնարաւորութիւն: Նորին  
Սրբութիւն Գարեգին առաջին կաթողիկոսի՝  
մեծ գիտնականի, աստուածաբանի,  
հայրենասէրի քարձր նկարագիրը յաւերժ  
կը մնայ հայ ժողովրդի յիշողութեան մէջ:

## ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐԻ ԻԼՅԱ Բ.Ի ՆՕՍԻՐ

Զերդ գերագանցութիւն Հայաստանի  
Նախագահ պարոն Ռոբերտ Քոչարեան,  
Հայ Առաքելական Եկեղեցու քարձրաշնորհ  
հայրեր, եղբայրներ եւ բոյրեր:

Մենք ժամանել ենք Վրաստանից,  
որպէս զի կիսնեմ հայ ժողովուրդի մեծ  
վիշտը՝ Նորին Սրբութիւն Մայրագոյն  
Պատրիարք, Ամենայն Հայոց Կաթողիկոս  
Գարեգին Ա-ի մահուան կապակցութեամբ:  
Դուք գրկուել էք իմաստուն հայրապետից  
եւ հոգեւոր հօրից, իսկ Վրաստանը եւ  
ամձամբ ես գրկուել ենք ընկերոջից եւ  
իմաստուն եղբորից:

Անցնելի ու անհասանելի է Աստու-  
ծոյ կամքը: Ես ուրախալի առիթ եմ  
ունեցել քաղմիցս հանդիպելու Նորին  
Սրբութիւն Գարեգին Ա-ին այն ժամանակ,  
երբ մեր երկրները դեռեւս գտնուում էին  
Խորհրդային Միութեան կազմում: Այն  
ժամանակ նա եռանդուն անդամ էր եւ  
ապա նաեւ կաթողիկոսը Մեծի Տանն  
Կիլիկիոյ հայոց կաթողիկոսութեան:  
Միջազգային տարբեր ժողովներին եւ

հաւաքներին նա միշտ հանդէս էր գալիս  
ի պաշտպանութիւն ողջ հայ ժողովրդի  
իրաւունքների: Աւելի քան քսան տարի նա  
կրեց ծանր խաչը՝ սկզբում որպէս Մեծի  
Տանն Կիլիկիոյ, ապա որպէս Ամենայն  
Հայոց կաթողիկոս: Նա լաւ գիտէր  
Վրաստանի պատմութիւնը եւ մեր  
մշակոյթը, միշտ աշխատում էր մեզ հետ  
քարեկամական յարաբերութիւններ  
պահպանել: Արժանայիշատակ է հետեւեալ  
օրինակը: Երբ Գարեգին Ա-ն ընտրուեց  
Ամենայն Հայոց Կաթողիկոս, իր առաջին  
արտասահմանեան ուղեւորութիւնը  
կատարեց Վրաստան: Նրա այցը Վրաստան  
եւ իմ այցը Հայաստան շատ մերձեցրին  
մեզ ու մեր ժողովուրդներին: Մենք կրկին  
զգացինք, որ միմեանց աւելի մօտ  
ժողովուրդներ չկան, ինչպէս հայ եւ վրաց  
ժողովուրդները: Մենք կրկին գիտակցե-  
ցինք, որ եւ փորձութիւնների, եւ  
ուրախութիւնների պահին մենք միշտ եղել  
ենք եւ կը լինենք միմեանց կողմին:  
Բնաւ պատահական չէ, որ մեր

ժողովուրդների հնագույն ժամանակագրութիւնները ասում են, որ մեր նախնիները՝ Հայտը եւ Գարթուը, եղբայրներ էին: Անմոռանալի կը մնայ մեր հանդիպումն անցեալ տարի Ամերիկայի Միացեալ Նահանգներում: Նա այնտեղ արդէն քուժում էր եւ իմանալով ԱՄՆ կատարած իմ այցի մասին՝ ցանկութիւն յայտնեց հանդիպելու ինձ: Մենք կլոր սեղան կազմակերպեցինք եւ ՄԱԿ-ի ներկայացուցիչների ներկայութեամբ գրուցեցինք այն հարցերի շուրջ, որոնք հետաքրքրում էին եւ Հայաստանին, եւ Վրաստանին: Մեր հանդիպումը կրկին փաստեց մեր հայեացքների միասնութիւնը:

Նորին Սրբութիւն Գարեգին Ա. Կաթողիկոս արժանաւոր յաջորդն էր մեծ կաթողիկոսներ Գեորգ Զ-ի, Վազգէն Ա-ի եւ այլոց: Նորին Սրբութիւն Գարեգին Ա. Կաթողիկոսի գործերն ու սիրամանկներն արժանաւորապէս կը գնահատուեն հայ ժողովրդի կողմից եւ քոյր նրանց, ովքեր անձամբ ճանաչում էին իրեն:

Մենք կրկին անգամ բերում ենք մեր անկեղծ ցաւակցութիւնները ողջ հայ ժողովրդին:

Մենք վեր ենք առաւում մեր աղօթքները, որպէս զի Տէրը հանգստութիւն պարգեւի նրա հոգուն՝ այնտեղ, որտեղ գտնուում են Հայ Առաքելական Եկեղեցու մեծ եւ փոքրամեծ Հայրապետները:

## ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

**Վաճական մը, իր հեզահամբոյր բարեպաշտութեամբ, կարճ ժամանակի մէջ նուաճեց հոգեւոր իշխանութեան բոլոր աստիճանները եւ եղաւ թեմակալ առաջնորդ նահանգի մը:**

**Ուրիշ բարեպաշտ վաճական մը, նկատելով իր միաբանակցին այս արագաւազ վերելքը եւ ամէն աստիճանի տուչութենէ ետք կրած նկարագրի փոփոխութիւնը, գրեց հետեւեալ երկտողը, այսպէս սկսելով.**

**- Հոգեւոր եղբօրս Տ. Գարեգինին, բոցավառ սարկաւագին, ջերմեռանդ աբեղային, երախտամոռաց վարդապետին, անորամադիր եպիսկոպոսին եւ սառնարիւն արքեպիսկոպոսին եւ շահադէտ առաջնորդին:**

«Մանրավէպեր»  
Էջ 68

ՎԱՊԻԱՆ Ա. ՔԶՆՅ. ՏԻՒԼԿԵՐԵԱՆ


## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ

ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՅՐ ԱԹՈՒՍ. ԷՋՄԻԱՇԵՆ



SUPREME PATRIARCH

CATHOLICOS

OF ALL ARMENIANS

MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

587

19 Մայիսի 1999

ԱՄԵՆԱՊԱՏԻ

Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱԳԷՄԻ

ԵՐՈՒՍԱԳԷՄ

Սիրելի Պատրիարք Եղբայր,

Յուլիսի 2-4-ը ինչպես գիտեք, Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածին պիտի այցելի Հռոմի Սրբազան Քահանայապետ Նորին Սրբութիւն Յովհաննէս-Պօղոս Բ Պապը՝ Մեր և Հայաստանի Հանրապետութեան Վսեմաշուք Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարեանի հրաւերով:

Նորին Սրբութեան՝ նախադէպը չունեցող այցելութիւնը Հայաստան՝ Կաթողիկէ եկեղեցու հովուապետի խորին յարգանքի մատուցումն է 2000-ամեայ քրիստոնէական կեանք ապրած մեր ժողովրդին և նրա Առաքելահաստատ եկեղեցուն, ի մասնաւորի՝ նրա հաւատքի պնտականօրէն ճանաչման 1700-ամեակի նախաշեմին: Այն ճշմանակալի իրադարձութիւն է նաև ողջ քրիստոնեայ աշխարհի համար՝ Էկլիմենիկ ոգու իր արտայայտութեամբ:

Սիրելի Պատրիարք, Պապի Հայաստան և Սուրբ Էջմիածին այցելութեան կապակցութեամբ, հրաւիրում ենք Ձեզ՝ ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին ընկերակցութեամբ Երուսաղէմի Պատրիարքական Աթոռէն մէկ եպիսկոպոսի:

Մեր հանապազօրեայ աղօթքով առ Աստուած հայցում ենք, որ Տէրը շարունակաբար պահի Ձեզ կորովամիտ և եռանդաշատ Երուսաղէմի Պատրիարքական գահին՝ զօրացնալ բազմամղտ միարարմութեամբ և ժողովրդով մեր հաւատացեալ: Անանձնական, բոլորանուէր Ձեր սպասաւորութեան մէջ մաղթում ենք եկեղեցաշէն ձեռնարկումների հաջողութիւններ և երջանկութեան բազում առիթներ:

Եղբայրական սիրտ ողջունիւ,

Աղօթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**ՅՈՎՀԱՆՆԵՍ-ՊՕՂՈՍ Բ. ՊԱՊԸ 1999Թ. ՅՈՒԼԻՍԻ Զ-ԻՑ 4-Ը  
ՆՈՐԻՆ ՍՐ. ՕՇՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՐԱԻԷՐՈՎ ԿՆՑՑԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆ**

Վատիկանը եւ Ս. Էջմիածինը հայնոյն ունեն յայտարարելու Նորին Սրբութիւն Յովհաննէս-Պօղոս Բ. Պապի Հայաստանի Հանրապետութիւն կատարելիք այցելութեան մասին:

Պապը կը ժամանի Հայաստան Ուրբաթ, Յուլիսի Զ-ին: Հայաստանում մա կը հիւրընկալուի Մայր Աթոռ Սր. Էջմիածնում Հայաստանեայց Առաքելական եկեղեցու գլխաւոր սրբավայրում: Շօրեայ այցի ընթացքում Պապը կ'այցելի Նոբան եւ աղետալ գօտի՝ Գիւմրի եւ Աշոց: Հոռի Պապը կը մեկնի Հայաստանից Կիրակի՝ Յուլիսի 4ի երեկոյեան:

Պապը Հայաստանում է ժամանում Նորին Սուրբ Օծուիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Մայրաքոյն Պատրիարք Գարեգին Առաջինի՝ աշխարհասփիւռ հայութեան հագետր առջնորդի հրաւերով: Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաթողիկոսը, որ մշմակալից գործունէութիւն է ծաւալել միջազգային եկումնեկի շրջա-մակնեքում, մախկնում՝ 1996թ. Մարտին, տարբեր առիթներով մոյմպէս այցելել է Պապին՝ Վատիկան:

Հայաստանեայց Առաքելական եկեղեցին մէկն է Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներից: Այս առումով Հայաստանը երկրորդ ոչ կաթոլիկ ուղղափառ երկիրն է, ուր այցելում է Հոռի Պապը: Առաջին այդելիսի այցը Հոռի Պապը կատարեց սոյն թուականի Մայիսին՝ Ռումանիա:

Զնայած Հոռի Կաթոլիկ եւ Հայոց եկեղեցիներին միջեւ 1500-ամեայ յարաբերութիւններին, Պապի այցը, որպէս Հոռի քահանայապետի առաջին այցելութիւն դէպի Հայաստան, պատմական է: Այցը ունի քաջադիկ առիթ եւ մախորդում

է երկու դարակազմիկ իրադարձութիւններին՝ Քրիստոսի ծննդեան 2000-ամեակին եւ Հայաստանի՝ դէպի քրիստոնէութեան դարձի 1700-ամեակին:

Քրիստոսի ծննդից յետոյ 301 թուականին Հայաստանը դարձաւ աշխարհի առաջին Քրիստոնէայ ազգը: Այս իրադարձութիւնը մարդոջ աշխարհում կը մշուի 2001 յոբինական թուականին: Յովհաննէս-Պօղոս Բ. Պապը, որ մախկնում մշել է Հայաստանի եզակի դերը քրիստոնէութեան պատմութեան մէջ, իր այցելութեան ընթացքում կը մեծարի այդ յոբեկեանը:

Որպէս ուխտագնաց Հոռի Պապը կ'այցելի մաեւ Հայոց եղեռնի զոհերի յուշահամալիր (ի ոգեկոյումն 1-5 միլիոն հայերի, որոնք 1915 թուականին մահատակուեցին Թուրքիայում՝ հայերի ցեղասպանութեան ընթացքում):

Այցելութեան ընթացքում Պապը կը հանդիպի Հայաստանի Հանրապետութեան մախագահ Ռոբերտ Քոչարեանին հետ: Գարեգին Ա. Կաթողիկոսի հետ Սրբազան Պապը կը մախագահի աղօթքի արարողութեանը Սուրբ Էջմիածնում, կ'այցելի Աշոցի հիւանդանոց, որը կառուցուել է 1988թ. երկրաշարժից յետոյ, Վատիկանի մուիրատուութիւններով:

**ՄԱՄՆՈՅ ԴԻԻԱՆ ՄԱՅՐ ԱՌՈՒԹԻ**

7 Յունիս, 1999

Ամենապատիւ  
Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան  
Պատրիարք Երուսաղէմի

Սիրելի Սրբազան Եղբայր  
Յայտնում ենք Ձեզ, որ Վեհափառ Հայրապետի որոշմամբ Հոռոմի Կաթողիկ եկեղեցու պետ  
Նորին Սրբութիւն Յովհաննէս – Պօղոս Բ Պապի այցը Հայաստան յետաձգում է՝ մինչև նոր  
տնօրինութիւն:

Վեհափառ Հայրապետը այս որոշումը կայացրել է նկատի առնելով բուժող բժիշկներին  
յանձնարարականը, որով Նորին Սրբութեանը խորհուրդը չի տրւում ծանրաքեռնուած աշխատել:  
Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը արտայայտել է համանման կարծիք Յունիսի 4ին Մայր Աթոռ  
Սրբ. Էջմիածնում գումարուած նիստում:

Վեհափառ Հայրապետի սոյն որոշման մասին Վատիկանին ծանուցել է Գերշ. Տ. Խաժակ  
Արք. Պարսամեանը:

Սիրելի Սրբազան, մեր եղբայրական սէրը եւ ջերմագին քարեմադրամեքները յղելով Ձեզ  
եւ պատրիարքութեանը քարեպաշտ հաւատացեալներին, խնդրում ենք Ձեր համապագօրեայ  
աղօթքներով Ամենակալ Տիրոջից շարունակել հայցել քարի ապաքինում եւ լիակատար առ  
ողորութիւն Վեհափառ Հայրապետին:

Աղօթակից  
Գարեգին Արք. Ներսիսեան  
Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ

14 Յունիս, 1999

Ամենապատիւ  
Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան  
Պատրիարք Երուսաղէմի

Սիրելի Պատրիարք Սրբազան Հայր,  
Ի գիտութիւն տեղեկացնում եմ, որ Նորին Սրբազնութիւն Յովհաննէս–Պօղոս Բ. Պապը  
Լեհաստանից Հոռոմ վերադարձի մանապարհին ս. ք. Յունիսի 18ին մի քանի ժամով զուտ  
անձնական, ոչ պաշտօնական այցելութիւն պիտի կատարի Ամենայն Հայոց Կաթողիկոս  
Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետին որպէս եղբայրական սիրոյ արտայայտութիւն  
Վեհափառի ծանր հիւանդութեան առիթով:

Նկատի առնելով, որ Պապի Հայաստան սոյն այցը չի փոխարինում Վեհափառ  
հայրապետի առողջութեան պատճառով յետաձգուած պաշտօնական այցին, հրապարակային–  
պաշտօնական բոլոր ընդունելութիւններն ու միջոցառումները չեն կայանալու:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութիւնը, Հայաստանի Թեմական առաջնորդները,  
Հանրապետութեան նախագահի հետ Նորին Սրբութեանը դիմաւորելու են օդանավակայանում  
եւ ուղեկցելու Սուրբ Էջմիածին, Վեհափառ Հայրապետի մօտ՝ մտերմիկ գրոյցի: Զրոյցից յետոյ՝  
Յովհաննէս–Պօղոս Բ. Պապը կ'առաջնորդուի Մայր Տաճար, մեկնումից առաջ իր աղօթքը առ  
Աստուած կատարելու:

Սիրելի Պատրիարք Սրբազան Հայր,  
Ընդունեցէ՛ք ջերմ քարեմադրամեքներս կենաց արեւշատութեան եւ գործոց յաջողութիւնների:

Աղօթակից՝  
Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսեան  
Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ

29 Յունիս 1999

Ամենապատիւ  
Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան  
Պատրիարք Երուսաղէմի

Սիրելի Սրբազան Պատրիարք,

Խոր վշտով յայտնում ենք, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհաբանութեան Յունիսի 29ին, Երեւանի օրը, ժամը 17.50ին անժամանակ, կեանքի 67րդ տարում հանգեաւ ի Տէր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ երկարատեւ եւ ծանր հիւանդութիւնից յետոյ:

Ազգացեալ մեր եկեղեցու ողջ հոգեւոր դասի եւ մեր քաղաքաշէտ ժողովրդի աղօթքներով հայցում ենք, որ Որդւմածն Աստուած զբայ երանաշնորհ սիրելի մեր Հայրապետին, եւ իր անխոնջ ծառայի հոգին ընդունի երկնային նուիրական հանգստարաններում: Մեր աղօթքն է նաեւ որ Տէրը պարգեւի մեր ժողովրդին եւ մեզ ամենիս Ա. Հոգու մխիթարութիւնը:

Սիրելի Սրբազան Պատրիարք, խնդրում ենք տեղեկացնել Մայր Աթոռ Ս. Էջմիածին Զեք շուտափոյթ ծաւանման մասին:

Վշտակից,

Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսեան  
Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ

### ԲԺԻՇԿՆԵՐՈՒ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

#### ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Առողջապահութեան Նախարարի 80 Յունիսի հրամանաւ ստեղծուած մասնագիտական յանձնաժողովը, ներկայացուցած է մասնագիտական եզրակացութիւն մը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանման մասին: Յանձնաժողովը, որում մաս կը կազմեն՝ Առողջապահութեան փոխ-նախարար՝ Ա. Աթաբեկեան (Նախագահ), մասնագէտ-բժիշկներ՝ Ս. Տիլանեան, Փրօֆ. Հ. Գալուստեան, Տօչ. Գ. Անժէլով, Փրօֆ. Ն. Վարդապարեան, Մ. Գալուստեան, Մ. Յարութիւնեան, Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետի անձնական բժիշկ Ռ. Յովհաննիսեան յայտարարեցին հետեւեալը. «Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը 1998էն ի վեր կը տառապէր լեզուի չարորակ նորագոյացութենէ: Ախտորոշումէն ետք, Ամենայն Հայոց Վեհափառը վիրահատուած եւ ճառագայթային դարմանումներ ստացած է Նիւ Եորքի ռուռուցքաբանական հիդիմակաւոր կեդրոններէն մէկուն մէջ:

Դարմանումէն ետք, Վեհափառ Հայրապետը միշտ գտնուած է բժիշկներու հսկողութեան ներքեւ:

Կաթողիկոսը կը տառապէր սրտի իշէմիկ հիւանդութենէ եւ շաքարախտէ: Վերջին երեք տարիներուն ընթացքին, հակառակ ձեռնարկուած միջոցներում, Ամենայն Հայոց Կաթողիկոսի առողջական վիճակը վատթարացաւ: 29 Յունիս 1999-ին ժամը 17.50ին, 67 տարեկան հասակին մէջ Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետը վախճանեցաւ՝ լեզուի չարորակ նորագոյացութեան հետեւեւումէն վախճանեցաւ ինտոքսիկացիայի (թունաւորման) եւ սիրտ-անոթային համակարգի անբաւարարութեան պատճառաւ»:

Յանձնաժողովի անդամներ՝

Ա. Աթաբեկեան (նախագահ), Ա. Սարգսեան, Ս. Տիլանեան, Հ. Գալուստեան, Գ. Անժէլով, Մ. Դուլուսեան, Մ. Յարութիւնեան, Ռ. Յովհաննիսեան (Անձնական Բժիշկ)

## ԿԱԹՈՂԻԿՈՍՍԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

1999 Յուլիս 4, Կիրակի երեկոյեան ժամը 8ին Ս. Էջմիածնի Վեհարանի շէնքին մէջ տեղի ունեցաւ, հանգուցեալ Գարեգին Ա. Վեհափառ Կաթողիկոսի Յունիս 29ին վախճանման պատճառաւ, Հայաստանեայց Եկեղեցւոյ Եպիսկոպոսաց եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի չորս աշխարհական անդամոց համագումարը, ընտրելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսական Տեղապահը: Հրաւիրուած էին եպիսկոպոսաց դասու 49 եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի աշխարհական չորս անդամներ: Ներկայ

էին 82 սրբազաններ եւ չորս աշխարհականներ:

Գաղտնի քուէարկութեամբ եւ երեք քուէախոյզներու ստուգումով Կաթողիկոսական Տեղապահ ընտրուեցաւ Գեր. Տ. Ներսէս Արք. Պօղոսեան 24 քուէով: Մնացեալ քուէները բաժնուած էին ըստ հետեւեալիմ.- Գեր. Տ. Գարեգին Արք. Ներսիսեան 10 քուէ, Գեր. Տ. Վիգէն Եպս. Այվազեան մէկ քուէ, եւ մէկ քուէ ձեռնադրուած:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄ  
ՄԱՅՐ ԱԹՈՒ ԱԲ. ԷՋՄԻԱՇՆՈՒՄ

Յուլիսի 9ին Մայր Աթոռ Սր. Էջմիածնում գումարուեց եպիսկոպոսական ժողովի հերթական նիստ՝ նախագահութեամբ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսէս Արք. Պօղոսեանի, ատենապետութեամբ Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ հայոց պատրիարքների: Նիստի սկզբում ընտրուեց եպիսկոպոսական ժողովի նոր դիւան: Ի պաշտօնէ դիւանը նախագահում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը կամ Կաթողիկոսական Տեղապահը, ատենապետում Երուսաղէմի

եւ Կ. Պոլսոյ պատրիարքները: Ատենապետներ ընտրուեցին Տ. Եզնիկ Եպս. Պետրոսեանը եւ Տ. Արքահաւ Եպս. Մկրտչեանը: Ժողովն ընտրեց նաեւ եպիսկոպոսական ժողովի օրակարգը կարգաւորող յանձնախումբ, որի կազմում ընդգրկուեցին Եգիպտոսի հայոց առաջնորդ Տ. Զաւէն Արք. Զինչիմեանը, Գերմանիայի հայոց Առաջնորդ Տ. Գարեգին Արք. Բեֆչեանը եւ Լիոնի եպիսկոպոս Տ. Նորվան Զափարեանը: Ժողովը քննարկեց Հայ Եկեղեցւոյ առջեւ դրուած մի շարք հարցեր:

ՄԱՄԼՈՅ ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ



**ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ  
ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ, ԱԺ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄՕՏ**

Յուլիսի 9-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եպիսկոպոսաց դասի ուղեկցությամբ, մախագահ Ռոբերտ Քոչարեանին այցելեցին Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Պողոսյանը, Յուսանդեմի Պատրիարք Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանը, Կոստանդնուպոլսի Պատրիարք Մեսրոպ Արքեպիսկոպոս Մուրաֆեանը: Նրանք շնորհակալություն յայտնեցին համրապետության մախագահին՝ այս տխուր օրերին եկեղեցուն սատարելու համար:

Կարեւորելով եկեղեցու դերը՝ Ռոբերտ Քոչարեանը նշեց. «Դարեր շարունակ չունենալով սեփական պետականություն՝ հայ ժողովուրդն ապաւինել է եկեղեցուն: Եկեղեցին պետութեան հիմնական մեղուկն է, ազգային այն կառոյցը, որը միաւորում է համայն հայութեանը Հայաստանում եւ Սփիւռքում»: Նրա խօսքերով՝ մեր պետութեան ու եկեղեցու համար սկսուել է շատ պատասխանատու ժամանակահատուած: Նոր հազարամեակի եւ Բրիտանոնեւրօնը Հայաստանում որպէս պետական կրօն հռչակելու 1700ամեակի մախաշնին պէտք է կարողանանք ըստ արժանւոյն դիմաւորել այդ նշանակալից իրադարձութիւնները: Նախագահը ցանկութիւն յայտնեց, որ մեր կաթողիկոսի ընտրութեամբ մենք աւելի միասնական դառնանք: Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Պողոսյանը շեշտեց, որ Հայաստանի Հանրապետութեան եւ Հայ եկեղեցու կապը միշտ էլ սերտ ու համերաշխ է եղել, իսկ ապագայում պէտք է աւելի ամրամալ յամուռ հայրենի պետականութեան ամրապնդման եւ Հայ

եկեղեցու շէնքամաս: Նախագահի առաջարկով՝ քարճաստիճան հոգեւորականներն իրենց նկատառումներն ու տեսակետները ներկայացրին պետութիւն-եկեղեցի փոխյարաբերութիւնների վերաբերեալ, ինչպէս նաեւ անդրադարձան կաթողիկոսական ընտրութիւնների հետ կապուած Կազմակերպչական հարցերի: Ռոբերտ Քոչարեանը նշեց, որ մշտապէս հետաքրքրուել է Հայ եկեղեցու գործերով՝ քացարձակ չմիջամտելու տրամադրութեամբ:

Նոյն օրը Ս. Էջմիածնի պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Կաթողիկոսական Տեղապահ Ներսես Արք. Պողոսյանի, այցելեց ՀՀ ԱԺ մախագահ Կարէն Դեմիրճեանին:

Մէկ ամբաս եւս ցաւակցելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի մահուան կապակցութեամբ՝ ԱԺ Նախագահը յոյս յայտնեց, որ մրան կը փոխարինի Հայ եկեղեցուն ու ժողովրդին արժանի հովուապետ:

Կարէն Դեմիրճեանն այնուհետեւ անդրադարձան Հայաստանի ներկայ իրադրութեանը՝ որպէս քաղաքական կարեւորագոյն իրադարձութիւն գնահատելով խորհրդարանական ընտրութիւնները: Նա ներկայացրեց օրէնսդիր մարմնում քաղաքական ուժերի յարաբերակցութիւնը, առաջիկայ անելիքները:

Առանձնացնելով եկեղեցու նշանակութիւնը երկրի եւ ժողովրդի կեանքում՝ Պրմ. Դեմիրճեանն ամիսածէշ համարեց մրա գործունէութեան ակտիւացումը, ընդգծեց մրա դերը հայեցի դաստիարակութեան, ազգապահպանութեան,

սփիւտահայութեան համախմբման գործում:

Նոյն օրը վարչապետ Վազգէն Սարգսեանն ընդունեց եպիսկոպոսաց դասի ներկայացուցիչներին:

Անկեղծ մթնոլորտում տեղի ունեցած գրոյցի ընթացքում կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսէս Արք. մէկ անգամ եւս անդրադարձաւ վերջին օրերին, եւ ասաց. «Վեհափառ Հայրապետի կորստեան առիթով մեր վեշտը խորն էր, սակայն այն կիսուեց՝ պետութեան բարձր իշխանութեան կողմից դրսևորած մեծագոյն օժանդակութեան շնորհիւ»:

Այնուհետեւ տեղապահը շնորհաւորեց Վազգէն Սարգսեանին՝ վարչապետի պաշտօնը ստանձնելու առնչութեամբ,

մաղթեց նրան ուժ ու կարողութիւն:

Իր պատասխան խօսքում Վազգէն Սարգսեանը մէկ անգամ եւս ցաւակցութիւն յայտնեց միաբաններին՝ անդառնալի կորստի առիթով եւ հաւաստիացրեց, որ Հայ Եկեղեցին այսուհետեւ եւս կը շարունակուի ոգեղենացնել հայոց կեանքը, իսկ կառավարութիւնն իր ուժերը ներածի չափով կ'աջակցի Եկեղեցուն, որպէս զի հայրենիքում տիրի ոգեղենութեան եւ ծաղկումի մթնոլորտ. «Եւ տնտեսութեան զարգացումը կարող է տեղի ունենալ միմիայն այդպիսի մթնոլորտում», – ասաց վարչապետը:

Հանդիպման ընթացքում կողմերը խօսեցին նաեւ ապագայ համագործակցութեան ծրագրերի եւ այլ խնդիրների մասին:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ

### ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐԿԸ ԳՆԱԼԸԻ ՄԷՋ ՀԻՒՐԸՆԿԱԼՈՒԵՑԱԻ

Երէկ պատմական օր մը ապրեցաւ Գնալը Կղզին: Իր կարն, բայց թանկագին ներկայութեամբ անջնջելի հետք մը թողուց Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Ա. Արք. Մանուկեան: Իր ազդեցիկ խօսքերով, ոգեւոր ռնով, դիրքահաղորդ քննադրութեամբ, տեղին թելադրանքներով Ամեն. Ս. Պատրիարք Հայրը առիժնեց շուրջիները: Այս անմոռանալի այցելութիւնը տակաւին երկար պիտի խօսուի եւ պիտի դրոշմուի Գնալը Կղզիի համալիրին ներս:

Ինչպէս հաղորդած էինք, իր Աթոռը վերադարձի ճամբու վրայ, երէկ, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Ա. Արք. Մանուկեան հանդիպեցաւ քաղաք, իր կողքին ունենալով Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Տնօրէն

Ժողովի Ատենապետ Գերշ. Տ. Սեւան Ս. Եպսկ. Ղարիպեանը: Ան, Եշիգիւղի Աթաթիւրք օգակայանի պատուոյ սրահին մէջ դիմաւորուեցաւ Պատկանելի Կրօնական Ժողովի Ատենապետ Հոգշ. Տ. Արամ Ծ. Վրդ. Աթէշեանի, Հոգշ. Տ. Զաքէոս Արքեպ. Օհանեանի, Պատրիարքարանի Դիւանապետ Արժ. Տ. Գրիգոր Ա. Գինյ. Տաւատեանի, «Լրաբեր»ի խմբագիր Արժ. Տ. Տրդատ Գինյ. Ուզունեանի, Իրկ. Ուրարակիր Դպիր Վաղարշակ Սերովքեանի, Ս. Փրկիչ Հիւանդանոցի Բ. Ատենապետ Մելքոն Գարաբէտէի եւ Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյ Թաղային Խորհուրդէն Գեորգ Օգնուի, Պատրիարքարանի բանբեր Իրաւագետ Լուիզ Պաֆարի կողմէ: Ապա Նորին Ամենապատուութիւնը համայնքիս համակրելի դէմքերէն Թանիա Շիրինօղլուի

գրօսամատով հասա Գնալը Կղզի: Այս առթիւ յուզումնալի պահեր ապրեցան կղզեցիները: Քարափին վրայ Ամեն. Ս. Պատրիարք Հօր ժամանման կը սպասէին Գերշ. Տ. Շահան Ս. Արք. Սվանեան, Կղզեաց Հոգեւոր Տեսուչ Հոգշ. Տ. Սահակ Արեղայ Մաշալեան, Կղզեաց Թաղային Խորհուրդը, գլխատրութեամբ Ատեմապետ Լեւոն Գուգիւօղլուի, Կազդուրման Կայանի վարիչները, տղաքը, գլխատրութեամբ Խմամատար Մարմին Ատեմապետ Միհրան Ուլիկեանի, Ս. Խաչ Դպրեվանքի Խմամակալութեան Ատեմապետ Մկրտիչ Թիմուրեւոսլու, մտաւորականներ եւ կղզեբնակ հայութիւնը:

Ապա Նորին Ամենապատուութիւնը առաջնորդուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի, ուր զանգակներու զուարթ ղողանջին ներքեւ Կազդուրման Կայանի երկսեռ պատանիները ծաղկեփունջով մը զինքն դիմաւորեցին: Տեղի ունեցաւ կարճ աղօթասացութիւն:

Այս առթիւ, Գերշ. Տ. Շահան Ս. Արք. Սվանեան քարի գալուստ մաղթեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր ու ըսաւ. «Ձեր Աթոռին վրայ երկար տարիներ կը մաղթեմ: Դու՛ր մեր ամենէն քանիքում հոգեւորականներէն մին է: Վերջին տասը տարիներում Նրուսաղէմի Աթոռը ունեցաւ արժեւոր գուլի մը եւ առաւել ծաղկեցաւ ամէն մարդէ մերս»: Սրբազան Հայրը շնչոնց, թէ այս մէկը եղբայրական հանդիպում մըն է, որ մեծ հրճումով պատճառած է Իսթանպուլահայութեան:

Աւելի վերջ արտայայտուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, որ ըսաւ, թէ չսպասուած այցելութիւն մըն էր այս մէկը: «Նրանաշնորհ Գրեգորի Ա. Հայրապետի մահուան առթիւ ուզեցինք ամենակարճ ժամանակի մէջ հասնիլ Ս. Էջմիածին: Այս առթիւ ընտրեցինք Իսթանպուլի վրայով Մեսրոպ Սրբազան Պատրիարք Հօր հետ միասին անցնիլ Նրեսուն», ըսաւ

Ամեն. Տ. Թորգոմ Ս. Արք. Մանուկեան ու անդրադարձաւ Վեհ. Հայրապետի մահուան: «Սպասուած մահ մըն էր: Այս անողորմ հիւանդութենէն ծագած լինէր անկարելի էր: Ան արժամապէս ծառայեց մեր եկեղեցւոյ: Իբրեւ քանիքում գրող եւ խօսող հոգեւորական, միջեկեղեցական սերտ կապերով ըրաւ իր կարելի մեր եկեղեցւոյ եւ հայրենիքին, ըսաւ Սրբազան Պատրիարք Հայրը եւ քացատրեց Սփիւտ քառը ու անդրադարձաւ Պոլսահայութեան: «Քանի որ հայրենիքէն հեռու կ'ապրինք մենք ալ սփիւտի ճիւղերն ենք եւ պէտք է առողջ ըլլանք, որպէս զի արմատն ալ հաստատ մնայ: Պոլիսը եղած է միշտ քարճր եւ լաւագոյն մակարդակի վրայ: Ձեզի կը մնայ ծաղկուն պահել զանոնք: Նրք կը խօսինք Պոլսահայերու մասին, կը խօսինք լաւագոյնը: Ես երբք անգամ ես եղած եմ հոս: 1953, 1960 եւ 1972 թուականներում: Վայելած եմ ժողովուրդն ու Գնալը Կղզին իբրեւ ամբարնոց», ըսաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը: Ընդգծեց, թէ իրեն ծանօթ էր Սահակ Հայր Սուրբը, բանի որ երբք տարի եղած էր Նրուսաղէմ: Ան յոյս յայտնեց, թէ Հայր Սուրբը հետաքրքրութեամբ պիտի զբաղի ժողովուրդին, մամաւանդ փոքրիկներում հետ: «Անոմք մեր հսկայ հարստութիւնն են», ըսաւ Նորին Ամենապատուութիւնը ու անդրադարձաւ մեր հարուստ մշակութիւն եւ թելադրեց այս հարստութեամբ ապրիլ հարուստի պէս: Իր խօսքերու վերջաւորութեան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ուրախութիւն յայտնեց այս քարեղէյ առիթին համար:

Կարճ աղօթէն վերջ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը միջոց մը հանգիստ առաւ թաղային խորհուրդի սեմեակին մէջ, ուր ստորագրեց խաչքար մը: Աւելի վերջ մերկայ հոգեւորական դասը, համայնքային մերկայացուցիչները, մտաւորականները մէկտեղուեցան եկեղեցւոյ

դարաւանդին վրայ պատրաստուած ճաշասեղանին շուրջ, որ սարժուած էր ի պատիւ Նորին Ամենապատուութեան: Եկեղեցւոյ Տիկնանց Կազմին կողմէ անթերիօրէն պատրաստուած ճաշին ընթացքին եղաւ հանելի գրոյց եւ ներկաները աւելի մօտէն վայելցեցին Քանկագին հիւրը: Այս առթիւ արտայայտուեցաւ Հոգշ. Տ. Սահակ Արեղայ Մաշալեան, որ Պատրիարք Հօր ներկայութիւնը որակեց Աստուծոյ նուէրը: Ան ըսաւ, թէ ինք ներկաներէն աւելի լաւ կը ճանչնար Պատրիարք Հայրը, քանի որ երեք տարի եղած էր իր մօտը: «Իր ամսին մէջ ճանչցայ այն հոգեւորականը, որ օրինակ կ'ըլլայ երիտասարդներուն: Մտաւ կանոնի կ'ելլէ եւ ուշ կը պառկի: Ես հիացած եմ իր կորովին: Իր ամսին մէջ կը տեսնեմ այն երիտասարդ եկեղեցականը, որ երբեք չի ծերամար», ըսաւ Հոգշ. Հայր Սուրբը, ու անդրադարձաւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Տնօրէն Ժողովի Ատենապետ Սեւան Եպս. Դարիպեանի ներկայութեան: Պատմեց անոնց տարած հերոսական աշխատանքը Ս. Քաղաքին մէջ եւ շնորհակալութիւն յայտնեց իրենց: Ան խօսեցաւ նաեւ Սփիւռքի մէջ գոյութեան պայքարի մասին ու մէքեքեք Արիսթոտէլի «Մարդը շարժման անցընող ամենէն մեծ ուժը հանդիմն է» խօսքը եւ ընդգծեց, թէ մենք ալ հանդիմն ունինք հոս հայ ապրելու եւ շարունակելու:

Աւելի վերջ խօսք առաւ Կղզեաց Թաղային Խորհուրդի Ատենապետ Լեւոն Գուրգիօղլու, որ քարի գալուստ մաղթեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ ներկաներուն ու անդրադարձաւ եկեղեցւոյ երդիքին տակ տարուած աշխատանքներուն, նաեւ պատմականը ըրաւ Գնալըի Ներսէսեան վարժարանին, որու շարունակութիւնը կը համարէին ներկայ Ներսէսեան Դպրաց Դասը ու ամէն ջանք կը թափէին այդ անունը ապրեցնելու համար: Ան իր

խօսքերուն վերջաւորութեան շնորհաւորեց Ամեն. Տ. Թորգոմ Ս. Արք. Մանուկեանի ծննդեան տօնը, որ մեծ զուգահէտութիւն մըն էր: Թաղային Խորհուրդը յուշանուէր մը յանձնեց Նորին Ամենապատուութեան, նաեւ Գերշ. Տ. Սեւան Եպսկ. Դարիպեանի:

Աւելի վերջ սեղանակիցները հաճոյքն ու բախտն ունեցան ունկնդրելու Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, որ արտայայտուեցաւ խօսելու մասին: «Ոտքի ելլել քանի մը խօսք ընելը քաջութիւն է: Մեր զգացումները պատշաճօրէն ըսելը լաւ է եւ օգտակար: Մեր գաւակները կը տեսնեն ու այդ օրինակին կը հետեւին», ըսաւ Երուսաղէմի Գահակալը ու գոհունակութիւն յայտնեց Գնալը Կղզիի վրայ ըլլալուն եւ եկեղեցւոյ համալիրը նախկին տարիներուն քաղաքամասը քարեգարդուած տեսնելուն համար: Պատրիարք Հայրը պատգամեց մեր նոր սերունդին համար աշխատիլ եւ անոնց տալ միշտ աւելի լաւ ու ըսաւ. «Քանի որ այս երդիքին տակ տղաքը կրնան ըլլալ միայն ամրան շրջանին, անոնց պէտք է տալ ամենալաւը, որպէս զի անոնք յոյս ունենան, թէ յառաջիկայ տարին եւս պիտի ըլլայ նոյնը: Պէտք է այս շարքը ապահովողները յարատեւ աշխատին»: Իր խօսքերուն ընթացքին Պատրիարք Հայրը շեշտեց, թէ Իսթանպուլահայերը աւանդապահ եւ աւանդապաշտ են: Բայց, ըսաւ ան, ոչ թէ պէտք է պահեմք, այլ պէտք է նոխացնեմք: Ամեն. Ս. պատրիարք Հայրը շատ գեղեցկօրէն վերլուծեց ազգապահպանման իմաստը: «Պահածոները շատ համեղ են, սակայն շուկայէն գնել ու եփել պէտք է համը առնելու համար: Ազգային արժէքներն ալ ոչ թէ պահել, այլ յայտարարել, տարածել պէտք է: Այս մէկը աւելի դժուար է, քան թէ պահելը: Մեր արժէքներուն տարածողը պէտք է ըլլամք, անշուշտ եթէ կը հաւատամք մեր արժէքներուն», ըսաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքը եւ ընդգծեց, թէ

Իսթանպուլահայությունը հաստատ գետնի վրայ է, ոչ թե կը պահէ, այլ կը զարգացնէ արժէքները:

Ուրախառիթ համարեց եկեղեցական դասուն ներկայությունը, քայց թելադրեց, որ անոնք նոր ուժերով եւս գործնան: «Եկեղեցին ժողովուրդն է՝ մենք ենք: Առանց ժողովուրդի եկեղեցի չըլլար: Եթէ կը խորհիմ, թէ եկեղեցին եկեղեցականն է, կը սխալիմ: Հայ եկեղեցին ունի հրաշալի ժառանգություններ, որոնց մասին կրնամք խօսիլ, մտածել, զարգացնել, տարածել», ըսաւ Սրբազան Պատրիարք Հայրը ու իր խօսքերուն վերջ տուաւ փառաբանելով մեր մայրենին ու զայն սորվեցնելու պարտաւորությունը նոր սերունդին:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ երդիքին տակ մեծարուել վերջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը առաջնորդուեցաւ Կազդուրման Կայան: Ան վարիչներուն հետ շրջեցաւ կայանի քոյր քաժինները, քացատրություններ առաւ պատասխանատուններէն: Այս առթիւ խօսք առին Կազդուրման Կայանի Տնօրէն Շահին Չընար, իր կողմէն ունենալով Հերմիէն Չընարը եւ Խնամատար Մարմնի Ատենապետ Միհրան Ուլիկեան: Անոնք մանրամասն տեղեկություններ տուին Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ իրեն յանձնեցին ծննդեան առթիւ յուշանուէր մը, ձեռամբ Միհրան Ուլիկեանի: Արտասանեցին երկու

սանուհիներ: Նորին Ամենապատուութիւնը ստորագրեց պատուոյ տոմարը եւ արտայայտուեցաւ կայան քառի իմաստին մասին: Աւելի վերջ Նորին Ամենապատուութիւնը անցաւ Ճամպագեան խաղավայր, ուր մանուկներու հետ թէ գրուեց եւ թէ խաղաց:

Ապա Ամեն. Ս. Թորգոմ Ս. Արք. Մանուկեան հրաժեշտ առաւ կղզիէն, դարձեալ Թանիա Շիրիմօղլուի գրասանաւով շրջեցաւ Վոսփորի ափը: Երեկոյեան հիւրասիրուեցաւ Նշիլգիւղի Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ երդիքին ներքեւ, տեղւոյն թաղային խորհուրդին կողմէ, զիստորութեամբ ատենապետ Յովհաննէս Կարապետեանի:

Այս պատմական մի քանի ժամերէն վերջ, Ամեն. Ս. պատրիարք Հայրը հասաւ Նշիլգիւղի օդակայանը, մեկնելու համար Ս. Բաղաթ, իր Աթոռը: Իրեն ողջերթ մաղթեցին Պատկառելի Կրօնական Ժողովի Ատենապետ Հոգշ. Տ. Արամ Ծ. Վրդ. Աթէշեան եւ Հոգշ. Տ. Զաքէոս Արեղայ Օհանեան:

Երէկի վայելքը անմոռանալի պիտի մնայ յիշողութիւններու մէջ եւ Իսթանպուլահայությունը պիտի ունենայ միշտ քանաստեղծ Ս. Պատրիարք Հայրը դարձեալ եւ երկար ատեն վայելելու սպասումը...:

ԺԱՄԱՆԱԿ

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐԿԻՆ ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ

Ինչպես յայտնի է, անցեալները Գնալըի մէջ քանի մը ժամուան համար հիւրասիրուած էր Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, որ Երեսմէն Երուսաղէմ կը վերադառնար: Նորին Ամենապատուութիւնը հետեւեալ շնորհակալութեան նամակը ուղարկած է Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեանին:

Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեան  
Պատրիարք Թուրքիոյ Հայոց  
Իսթանպուլ

Սիրելի Սրբազան Եղբայր,

Կ'ուզեմք մեր շնորհակալութիւնը յայտնել Ձեզի, բոլոր այն կարգադրութեանց համար, զորս հանեցաք կատարել եւ կատարել տալ, թէ 2 Յուլիսին եւ թէ 13 Յուլիսին, Երուսաղէմէն Պոլիս Երեսմ ոգնաւային երթեւեկութեան կապակցութեամբ, Ամենայն Հայոց հանգուցեալ Հայրապետին թաղման կարգադրութեան առիթով, երբ միասին պարտաւոր էինք Ս. Էջմիածին գտնուիլ: Տխուր եւ անապարտ եւ միօրեայ անցքը Պոլիսէն լեցուն եղաւ յիշատակելի պահերով, ապրումներով եւ հանդիպումներով:

Հանեցէք մեր եւ Մեւան Սրբազանի գնահատմանի զգացումները յայտնել Պատրիարքարանի, Եշիլգիւղի եւ Գնալը Կղզիի եւ Կազդուրման Կայանի Հոգեւորական եւ Թաղային Խորհուրդի պատասխանատու անդամներուն, մաղթելով որ Աստուած իրենց նուիրեալ եւ եռանդուն գործունէութիւնը աշխուժացնէ: Մասնատրապէս յիշատակելի են Տիկին Թանիա Շիրինեանը եւ իր հայրը՝ Պրմ. Կարայիս Էգմեանը, որոնք ազնուօրէն տրամադրեցին իրենց ընտանեկան նաւը, թէ փոխադրութեան եւ թէ ծովային շրջապտոյտի նպատակով:

Աստուած Ձեզ օգնական լինի, ձեր բոլոր գործոց յաջողութեան մէջ:

23 Յուլիս 1999  
Երուսաղէմ

Սիրոյ Ողջունիւ  
ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐԿ

ՄԱՐՄԱՐԱ

## *May we rediscover our full communion*

Text of the Holy Father's Message to the late Armenian Patriarch-Catholicos Karekin I

*Funeral services for His Holiness Karekin I, Catholicos and Supreme Patriarch of All Armenians, were held in Echmiadzin, Armenia, on Thursday, 8 July. The Holy See was represented by a delegation consisting of Cardinal Edward Idris Cassidy, President of the Pontifical Council for Promoting Christian Unity, Bishop Walter Kasper, Secretary of the same Council, Archbishop Peter Stephan Zurbriggen, Apostolic Nuncio in Armenia, and Mons. Claudio Gugerotti, Under secretary of the Congregation for the Oriental Churches. On 29 June the Holy Father had sent a Message to the Patriarch, expressing his esteem for the Armenian Church and his hopes for the restoration of full communion with the Catholic Church. Here is the English text of his Message.*



To His Holiness Karekin I  
Catholicos - Supreme Patriarch  
of All Armenians

1. Since my official visit to Armenia and to the Armenian Apostolic Church has had to be postponed and circumstances prevented me from meeting Your Holiness at the close of my pastoral visit to Poland, I am writing to assure you of my spiritual closeness at this difficult time of ill health, as you offer a moving witness to the suffering Christ.

I am entrusting this message to Cardinal Edward Idris Cassidy, President of the Pontifical Council for Promoting Christian Unity, who will personally convey to Your Holiness my sentiments of profound esteem and fraternal affection. I recall with gratitude the two visits which, as Catholicos and Supreme Patriarch of All Armenians, you made to me in Rome, and I cordially greet all the members of the Holy Synod and the entire Armenian Apostolic Church, to which I extend my very best wishes.

2. I have greatly desired to visit Armenia, where in the shadow of Mount Ararat the Christian faith has taken deep root and flourished. Brought by the Apostles Bartholomew and Thaddeus, and nourished also by the contribution of the Churches of Cappadocia, Edessa and Antioch, the Christian faith has shaped Armenian culture, just as Armenian culture has contributed to enriching the understanding of the Christian faith in new and unique ways. In these days, the Armenian liturgy is celebrating the memory of the holy translators, Sahak and Mashtots. The creation of a national alphabet by the monk Mashtots was a significant, step towards the formation of a new Christian culture in Armenia.

A few months ago I had the honour of joining Your Holiness in the Vatican to inaugurate an exhibition devoted to Armenian history and culture. What a magnificent heritage it is, so imbued with Christian spirituality! Those peoples who follow the teaching of Christ have no need to give up their own identity. On the contrary, Baptism provides them with a new source of sustenance for their genius as a nation. I look forward eagerly,

Your Holiness, to being able when circumstances permit to experience at first hand the remarkable creativity which has characterized and shaped the Armenian people down the centuries.

Living in the shadow of Mount Ararat, Armenians have always been a "frontier" people. Throughout their history, this geographical situation has left a profound mark on them. In fact, drawing on the missionary, spiritual, liturgical and cultural heritage of the entire Christian "*oikoumene*", the Armenian Apostolic Church developed its own identity in a spirit of great openness to the different ecclesial traditions around it. Over the centuries, it engaged in direct and fruitful exchanges with the Syriac, Byzantine and Latin traditions.

The same spirit of openness enabled it to help and support the neighbouring Churches when they had to face moments of trial and adversity. The Armenian Apostolic Church's present contribution to the ecumenical movement is part of a long tradition of openness and fraternal exchange.

3. Within Christianity, East and West have never been completely isolated from each other; there have always been moments of interaction and areas of mutual enrichment between them. Your Holiness, I join you in praying that the theological and spiritual heritage of our respective traditions will continue to enrich us mutually. May we be enabled to live in fidelity to St Paul's teaching: "There is a variety of gifts, but the same Spirit; and there are varieties of service, but the same Lord; and there are all kinds of works, but it is the same God who inspires them all in every one" (1 Cor 12:4-6).

While many ecumenical efforts down the centuries failed to produce results, the spirit and principles which inspired them have lost none of their value. How can we fail to recall here the efforts made by Catholicos Nerses Schnorhali to promote communion between the Armenian and Byzantine Churches? His letters to the Byzantine Emperor remain an ecumenical witness of the first rank, still able to inspire us as we move towards the establishment of full communion between the Catholic Church and the Armenian Apostolic Church. The one condition necessary for union, as Catholicos Nerses Schnorhali declared in one of his letters, is *the truth of faith in charity*. May we come to rediscover our full communion precisely in *the truth of faith in charity*!

Your Holiness, this is my desire and the desire of the entire Catholic Church. The visit of Cardinal Cassidy in my name, to bring you this message, is meant to be a confirmation of this hope.

4. Since the Second Vatican Council the Catholic Church and the Armenian Apostolic Church have fostered new and deeper bonds of communion. When Pope Paul VI and Catholicos Vazken I exchanged the kiss of peace, they sealed a new relationship between our Churches. That was on 9 May 1970". And since that memorable day, how many happy meetings and exchanges have brought us closer together! I wish to thank you in particular, Your Holiness, for all that you have done and are doing to ensure that the desire of Christians for full unity is realized. From the time that you took part as an observer in the Second Vatican Council, you have constantly worked for a fuller communion between our Churches. When you visited Rome in December 1996, we were able to sign a Joint Declaration in which we noted with joy that "the recent development of ecumenical relations and the theological discussions carried out in a spirit of Christian love and fellowship have dispelled many misunderstandings inherited from the controversies and dissensions of the past". May these happy developments inspire us to continue to seek the best ways to restore full communion between our Churches, so that we may be able to witness together to the love of God.



5. A crucial question on the path towards full communion concerns the ministry of the Bishop of Rome. Since my election to the See of Peter, I have sought to exercise this ministry as an effective service to the communion of all the Churches. Inspired by the mission of Peter, I have striven to be the servant of unity, and I shall continue to do so. But the exercise of this service of unity concerns us all. That is why, in my Encyclical Letter *Ut unum sint*, I asked the Holy Spirit "to shine his light upon us, enlightening all the Pastors and theologians of our Churches, that we may seek — together, of course — the forms in which this ministry may accomplish a service of love recognized by all concerned" (n. 95).

May the Holy Spirit help us now to concentrate our efforts so that, with the greatest tact, patience and love, we may restore the fabric of the undivided Church. Where we cannot at the present time find a way forward, the future will surely show us new paths. In view of this, it is desirable that there be a commitment to establish new forms of pastoral cooperation between the Armenian Apostolic Church and the Catholic Church. This cooperation could help us to find fresh ways of growing closer, and gradually lead to overcoming any remaining sources of tension.

6. Your Holiness, following the great social and political changes which Armenia has experienced in the last 10 years, you too have before you a vast field for the renewal of the Church.

The Armenian Apostolic Church is not alone in facing this great challenge.

The building in the centre of Yerevan of a new cathedral dedicated to St Gregory the Illuminator is a powerful symbol of the new energy which your Church is experiencing. May the Lord bless the many initiatives of the Armenian Apostolic Church and enable you to benefit from that solidarity of all the Churches urged by St Paul: "Bear one another's burdens, and so fulfil the law of Christ" (Gal 6:2).

7. On a number of occasions Your Holiness has spoken of fortitude and a spirit of endurance as special characteristics of the Armenian people and the Armenian Apostolic Church. It is most significant that everywhere in Armenia one finds "khatchkar", those massive stones representing the glorious Cross of the Saviour. Throughout your history they have been carved and placed wherever Armenians wished to acclaim or invoke their Redeemer. These "khatchkar" have become a special symbol of the trials and humiliations which the Armenian people have had to suffer. And how much they had to suffer, especially at the beginning of this century!

The Cross of Christ has been your daily experience. But like the Virgin Mary at the foot of the Cross, the Armenian people have remained faithful in the face of every adversity. The Cross of Christ has been your glory and your strength. I pray that throughout Armenia the dawn of a new day will give fresh meaning to the glorious symbols of the "khatchkar", making the peaceful and solemn power of the Redeemer shine forth ever more brightly. May the Virgin Mary, Mother of Christ and Mother of the Church, sustain all the faithful in their trust in God and in their commitment to Christian witness.

Your Holiness, I remain close to you in prayer and with you I give glory and praise to him who never ceases to gather his own into unity: our one Lord and Saviour Jesus Christ!

From Rome, 29 June 1999.

Solemnity of the Apostles Peter and Paul.

*Joannes Paulus II*

## ԽՈՐՀԷ՛ ԵՒ ՄՏԻՐ ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Շաբաթ օր մըն էր, այրող Օգոստոսի յետմիջօրէ մը: Գիւղը մոր կ'արթննար կէսօրուան թմրիւրէն: Զով ու բարակ հով մը սկսած էր լռիկ մնչիկ սահիլ պատուհաններէն ներս, երթալ հալի ու զգացնել ծառին եւ տերեւներուն իրենց կենդանութիւնը:

Հայրս ամենէն յարմար ժամանակն էր դատած արդեօք, չգիտեմ: Բայց յայտնապէս «կը փնտռուէի»...: Կուգէր հետս խօսիլ, առանձին: Դէմքին սովորական լրջութիւնը շեշտ գիծեր էր առեր, յայտնապէս մտատանջութեան մը պրկող ճնշումին տակ: Մտասեւեռումի վայրկեանները կ'երկարէին այդ պահուն, երբ պատշգամբին վրայ անհամգիստ նստած կը դիտէր հանդիպակաց դպրոցն ու կեկոյններն եւ անոնց մէջտեղէն բացուող հորիզոնի ծուկներ, որ աչքերը կ'ուղղէր աւելի հեռուն դէպի գիւղին դաշտերն ու այգիները:

– Եկուր հոս նստիր – ըսաւ զգացնելով որ շատ կարեւոր ըսելիք մ'ունէր ինծի: – Ի՞նչ է, կը լսեմ որ չես ուզեր յաջորդ տարի դպրոց երթալ. ի՞նչ կայ:

Տասնըջորս տարեկան պատանի մըն էի, մեր գիւղին Ուսումնասիրաց Միացեալ Վարժարանի նախակրթարանը աւարտած եւ միջնակարգի ալ առաջին տարին բոլորած: Դպրոցին մէջ շատ լաւ էի. դասերուն մէջ յաջող, ուսուցիչներէն սիրուած: Բայց... որոշքեր էի վերջնակաւնորէն թողուլ դպրոցը եւ արհեստի հետեւիլ: Արդէն իսկ վերջին երկու ամառները, շուրջ երեք ամիսներու արձակուրդի մեծ մասը անցուցեր էի գիւղի վարպետ դերձակին՝ գիւղացիներէն «Պապայիկիտ» անուամբ վերամկրտուած Սերոբ Այանեանի

խանութքը, այսպէս դպրոցին փայլուն աշակերտութիւնս վերածելով արհեստային աշակերտութեան...:

– Հայրիկ, ի՞նչ ընեմ, այս դպրոցը երկու տարիէն աւարտելու ետք ի՞նչ ընեմ ստացած ուսումս. այստեղ այդ ուսումը ի՞նչ կ'արծէ: Դպրոցն ալ սկսած է թուլնալ: Դպրոցի եւ գիւղի տղաքը ահա մէկ-մէկ Պէյրութ կ'երթան: Ես ալ, մտածեցի, արհեստ կը սորվիմ եւ գոնէ ապագային գործ մը կ'ունենամ:

Անկեղծ չէի: Հայրս, փորձառու մարդ, անմիջապէս նկատեց, որ ուրիշ բան մը կար մտքիս մէջ թաքնուած:

– Մէյ մը դուն սա դպրոցը աւարտէ, յետոյ կը նայիմք, – ըսաւ կտրուկ կերպով:

– Մի՛ պնդեր, անկարելի է որ ես դպրոց երթամ:

Հայրս անգործ էր: Հողամշակութիւն չէր ըրած կեանքին մէջ: Ակումբին՝ «գրադիսամա»ին սպասարկութիւնը ըրած էր եւ ապա թողած: Պատերազմի տարիներուն թողած էր գիւղը եւ Թրիփոլի կողմերը գացած՝ անգլիական բանակին մէջ շտեմարաններու պահակութեան գործով: Այդ ալ վերջ գտած էր պատերազմին հետ եւ հիմա գիւղին մէջ անգործութենէ կը տառապէր: Ընտանիքի տնտեսական կացութիւնը օրէ օր կը վատթարանար: Ինք չէր ուզեր զգացնել, բայց գիւղացի յատուկ արժանապատուութեամբ սուր զգայարանով եւ պատանիի յատուկ զգայնութեամբ կը զգայի որ կը տագնապէր: Սուրբն ու սիկարէթը, իրենց յաճախութեամբ, այնքան թափանցիկ կը դարձնէին իր ներքին տագնապը...: Կարճ խնդովս, կը կարծէի որ գիւղին մէջ արհեստ սորվելով եւ շաբաթը մէկ-երկու ոսկի շահելով պիտի յաջողէի ընտանիքին օգնել

և հորս բեռը թեթեւցնել:

– Նայէ՛, տղա՛ս, գիտեմ՝ թէ ինչու չես ուզեր դպրոց երթալ: Ճիշդ է, որ այս օրերում կացութիւննիս լաւ չէ: Կը զգամ որ կը զգաս ատիկա եւ ելերես ուսումդ կ'ուզես կեցնել ինձի օգնելու համար: Աստուծոյ սիրոյն, գիտաւելի մի տա՝ ռապեցնե՛ր...: Ուսումդ ինձի մէկ դրուշ չ'արժե՛ր: Դասարանիդ եւ դպրոցիդ առաջինն ես, աստոր համար այ դպրոցը ինձ քնք ցուէր կ'ընէ կրթաթոշակդ, գնահատելով յառաջդէմ աշակերտ ըլլալդ: Այ ի՞նչ կ'ուզես ինձմէ: Դպրոցականդ իմ վրաս չէ. դուն զայն կը շահիս արդէն: Աստուծոյ սիրոյն, վա՛գ անցիր արհեստի այդ հաւաստդ, դպրոցդ շարունակէ եւ սա ծանր քարն ալ վերցուր սրտիս վրայէն:

Միտես հաստատ էր, կապարի պէս մտածե՛ ուղեղիս մէջ: Իմաստ չէի տեսներ դպրոցական ուսումն շարունակելուն մէջ: Ճամբայ մըն էր, որուն ծայրը երբ հասնէի՝ հորիզոն մը չէր քացուեր աչքերուս դիմաց ապագայ հեռանկարի մը յոյսով: Տեսակ մը կոյր, աննկ ուրի մըն էր, որուն աւարտին երբ մարդ հասնի, հարց կու տայ թէ ինչո՞ւ հասաւ հոն, ո՞ր պիտի երթայ անկէ անդին: Հողի՞ն, պարտէզի՞ն, արհեստի՞ն: Կ'արժէ՞ր ասոնց հասնելու համար ուրք տարի քաջի դպրոցական դասարաններու մէջէն: Քիչ մը հողամշակութիւն, պարտէզի եւ անուի մէջ աշխատանք, քիչ մըն ալ գերձակութեան գործ – ահա՛ պարունակը կեանքիս, կը խորհէի: Աւելի լաւ էր ասոնց մէջ վարպետանալ քան դպրոցական ուսումի աւարտէն ետքը ինքզինքն անհարակ եւ անհաս զգալ կեանքի ա՛յդ շրջագծին մէջ յաջողելու համար:

Ամառները, օդափոխութեան համար գիւղ կու գային շատեր, մանաւանդ Լաթափայէն, Հալէպէն, Եգիպտոսէն, երբեմն ալ՝ Պէյրութէն: Լաւ հագուած զարգացած մարդիկ էին: Բայց անոնք

ֆաղափէն կու գային...: Այստեղ մեր գիւղին մէջ ուսումը ի՞նչ կ'արժէր: Կրնայի՞մք մեմք գիւղացիներս մամնիլ եւ հասնիլ անոնց: Ճակատագիր էր: Բնական բերումով, առանց յատուկ միտքի նիգ կատարելու, հաշտուած էի գուղացի տղու պայմաններու: Գիրքը շատ կը սիրէի, քայց գիրքով կեանքս չէի կրնար շահիլ: Հողն ու արհեստն էին որ կեանքիս կեդրոնը պիտի գրաւէին: Շատ հող չունէիմք արդէն: Քանի մը փոքր կտոր այգի-պարտէզներ՝ հոս-հոն մնտուած: Մէկ-երկու կտոր առնէ՛ քանդերանոցի սահմաններում մէջ պարփակուած եւ ջուրի կարօտութենէն տառապող: Արհեստ մըն ալ եթէ ձեռք ձգէի, կը խորհէի, որ գիւղի ապագաս ապահոված կ'ըլլայ:

Բայց այս բոլորը տրամաբանուած, կշռադատուած մտածում մը ըլլալէ աւելի – այժմ՝ կ'անդրադառնամ – օրումն ու միջավայրի թելադրական ազդեցութիւնն էր պատանի հոգիիս վրայ: Հայրս չէր սխալած: Անմիջական պատճառը կը մնար օր առաջ դրամ վաստակելու եւ ընտանիքի գօրավիգ կանգնելու պատանեկան մախանձախնդրութիւնս: Զէի անդրադարձած, սակայն, որ այսպիսի մտածումն իսկ կրնար հորս արժանապատուութեան վրայ այդպիսի վերք քանալ եւ արդէն իսկ զինք կրծող իր մեքիմ տագնապին վրայ մոր սրտանեղութիւն եւ մտատանջութիւն առաջացնել: Եւ անդադար կը պնդէի որոշումիս վրայ...:

Ճիշդ այդ պահում, միջն մեմք, հայր եւ որդի, տա՛մ ու դառն խօսակցութեան մէջ տարուած էինք, յանկարծ գիւղի ֆահանման՝ Տէր Մովսէսը անցաւ մեր տան պատշգամբ ու եկեղեցին իրարմէ անջատող մեղ ու քարախառն փտորցին մէջէն: Սիրուած եկեղեցական էր: Շատ մօտիկ՝ մեր ընտանիքին: Հայրս կանոնաւոր ու յանախակի եկեղեցի գացողներէն չէր. քայց բարեկամ էր Տէր Հօր: Կը սիրէր տան

մէջ լսել շարականները, մանաւանդ «Առաւօտ Լուսոյ»ն եւ եկեղեցւոյ մէջ առաւօտ եւ երեկոյ երգողող շարականները: Տունին դրացնութիւնը եկեղեցիին՝ կարծես թուցուցեր էր եկեղեցի յաճախելու գաղափարը: Բայց եւ, մօրս ամենօրեայ ֆաշայերամքով հօրս պարտականութիւնն ալ կը կատարէի...: Եկեղեցւոյ մէջ «փոխ կարդայ»ը, բուրվառ ընելը, շարական երգելը այնքան հաճելի էին ինծի, որ Տերհայրը յատուկ սէր եւ գուրգուրանք ցոյց կու տար ինծի հանդէպ: Ի վերջոյ, եկեղեցւոյ մէջ իր միակնութիւնը կը մեղմացնէի եւ գործն ալ կը դիրքացնէի...:

Կարծես, ալ յուսահատ զիս համոզելու իր վերջին ճիգին մէջ, հայրս յանկարծ երկինքէն «արագահաս Սուրբ Սարգիս»ի պէս հասնող Տերհօրը ձայն տուաւ պատշգամբէն:

– Տերհայր, վայրկեան մը եկուր, սուրճ մը առ:

Տերհայրը վեր բարձրացաւ: Հագիւ նստած՝ նշմարեց դէմքիս վրայ նստած տխրութեան ստուերը:

– Ի՞նչ կայ, Նշան, նեղուած ես, քա՞ն մը ռնկիս:

Լուռ մնացի: Ի՞նչ ըսէի մարդուն: «Հօրս հետ կը կոտի՞մք»: Ամօթ էր: Նախընտրելի էր լուռ մնալ, մանաւանդ հօրս ներկայութեան: Կը նախազգայի նաեւ, որ եթէ յայտնէի խօսակցութեան բովանդակութիւնը, Տերհայրը անպայման հօրս կողմը պիտի բռնէր:

Հայրս, դաշնակից մը ճարած ըլլալու գոհումակութեամբ, խօսք բացաւ.

– Տերպապ, սա տղուն խօսք մը հասկցուր: Որոշեր է յառաջիկայ տարի դպրոցը ձգել եւ «պապայիկիտ»ին ինքնուրուշակութիւն սորվիլ: Ըլլալիք քա՞ն է սա:

– Ի՞նչ է խնդիրը, Նշան, գո՞հ չես դպրոցէն. ուսումը ալ սրտիդ չի՞ խօսիր. ես ա՛լ կը զարմանամ այս տարօրինակ որոշումիդ վրայ: Լա՛ւ գիտցիր, դպրոցդ

անգամ կը նեղուի եթէ նման քան մը ընես:

Միտքիս բոլոր թելերը բացառիկ ճիգով մը հաւաքեցի եւ սկսայ փաստարանական, լաւ կառուցուած, պատճառարանաւ պատասխաններ տալ ամէն գնով արդարացնելու համար որոշումս: «Վասն ինչի՞, Տերհայր, – ըսի, – ի՞նչ նպատակի համար շարունակեմ ուսումս: Դուք լաւ գիտէք մեր գիւղի պայմանները: Դասընկերներէս ոմանք կը թողուն կ'երթան միջնի Պէյրութ եւ լաւ պայմաններու տակ արհեստներու տէր կը դառնան: Ես միջոց չունիմ երթալու: Գիւղն է իմ կեանքը եւ գիւղին մէջ ալ կարելի չէ ուսումնական դառնալ ապրուստ շահելու համար: Ուսուցիչներուս կացութիւնը դուք լաւ գիտէք: Ի՞նչ ընեմ ես դպրոցական կրթութիւնը երբ գիտեմ թէ թեւատ թոշունի մը պիտի նմանի ան: Խնդրեմ, Տերհայր, հօրս քացատրէ, թող չնեղուի, չտագնապի, իր սրդողումը զիս ալ կը տանջէ»:

Տերհայրը պահ մը ձեռքը մօրուքին տարաւ, մտածկոտ կերպար մը հագաւ եւ գիւտ մը ըրած ըլլալու ուրախութեամբ, հաստատ, համոզիչ շեշտով ըսաւ.

– Լաւ, քանի որ այս դպրոցը չես ուզեր շարունակել, ուրիշ դպրոց մը չընտրեմք քեզի:

– Ո՞ր, – ըսի փութկոտութեամբ:

– Անթիլիաս:

– Ո՞ր է Անթիլիասը:

– Պէյրութի մօտ տեղ մը:

– Ի՞նչ պիտի ուսանիմ:

– Լաւ ուսում կ'առնես, – ըսաւ, եւ անմիջապէս աւելցուց չփախցնելու համար յանկարծական հետաքրքրաշարժութեանս այդ առիթը – ուսում առնելէ ետք, եթէ ուզես՝ վարդապետ կ'ըլլաս, եթէ չ'ուզես ուսուցիչ, մտաւորական կը դառնաս եւ քարձր դպրոցներու մէջ ալ ապագային կը պաշտօնավարես:

– Լաւ, կ'երթամ, – ըսի ու անմիջապէս

մայեցայ հորս, որուն դէմքին գիծերը յամկարծ փոխուեցան եւ քիչ անգամ տեսնուող ժպիտը վերագարձաւ, զուլալ ջուր խմած մարդու գոհունակութեան զգացումը արեւու լոյսին պէս տարածելով ողջ մարմնին վրայ:

Ու մինչեւ այսօր չգիտցայ թէ «Լաւ, կ'երթա՞ւ» բառերը միտքէս ծնան թէ ներքին զգայարանէ մը, մտածումի, տրամաբանութեան ոյժէն աւելի խոր ու զօրաւոր, որ երբեմն մարդուն մէջ կը յայտնուի տեսակ մը համադարձ ու մեղմ հոսող աղբիւրէն յանկարծ դուրս եկող ուղիւի մը նման...:

Եւ հաւաքողապէս, պատահականութեան մէկ դարձումածէն՝ վ, նախախնամութեան խորհրդալի գրուագտ՝ մը – չեմ կրնար գիտնալ – թողուցի Գէսապ հայրենի գիւղս եւ եկայ Անթիլիաս...:

Դպրեկամբի շէմքի ճակտին, շատերու պէս ես ալ կարդացի մարմարին վրայ ոսկիի մման փայլող «ԽՈՐՀէ ԵՒ ՄՏԻՐ» բառերը:

Մտայ:

Բայց... չխորհեցայ:

Կրնայի՞ այդ տարիքին խորհիլ, այնպէս ինչպէս յետոյ, տարիներու ընթացքին սորվեցայ իմաստն այդ բառին. կրնայի՞ իմանալ թէ ի՞նչ կը սպասուէր ինձմէ եւ թէ ես ի՞նչ կը սպասէի ինձմէ ու Դպրեկամբէն:

Բայց՝ մտայ...:

Տարիները սահեցան: Տարուէ տարի աճող պայծառատեսութեամբ զգացի որ վեց ուսումնական տարեշրջաններու ուսանողական կեանքս վերածնունդ մը եղաւ ինձի համար: Մթնոլորտ մըն էր Դպրեկամբը, կեանքի եղանակ մը, աշխատելու ձև մը, հաղորդութեան ընթացք մը, ներքին լիցեաւորումի եւ հասունացումի կենսալի միջոց մը, ուր Աստուած, Դրիստոս, Աստուածաշունչ, Անտարան, շարական, սաղմոս, գրաբար,

աշխարհաբար, այլ լեզուներ, հայութիւն՝ գրականութեան ու պատմութեան էջերէն եւ արուեստի եւ մշակութի փարոսներէն լուսաբացուող, աստուածաբանութիւն, իմաստասիրութիւն իրենց այլազան միւլաւորումներով, աղօթք ու սերտողութիւն, մարգամբ ու աշխատանք, փորձ ու վարժութիւն եւ դեռ այս բոլորին աղբյուրած այլ իմացական եւ հոգեւոր գործօնութիւններ եկան, հոսեցան անձիս մէջ, բռնեցին գրաւեցին ողջ կեանքս եւ գիւղի տղան՝ մնալով իմ գիւղէ՞ մը խաւեր կապեց իր հոգեշառնութեան, դարձաւ հանդիսարան մըր տարածքներու, բացուեցաւ մըր ու լայն հորիզոններու եւ ուզեց որ այդ բոլորը առուակուին իր ժողովուրդի կեանքին մէջ գանձնէ ունեցողներու նորայրութեան՝ Կիլիկեան Միաբանութեան ուխտակիցներուն հետ միասին եւ զանոնք մուսգ ունեցողներու հարստացման ի խնդիր:

Արհեստի ցանկութիւնը ալ անգայտացաւ, վերածուեցաւ քաղցր յիշատակի...:

Գիւղին ածուն ու այգին մնացին իմ մէջ, բայց տարբեր ձեւ, տարողութիւն եւ տարածք զգեցան: Ածուն վերածուեցաւ հայոց «փոքր ածուն»ին: Այգին դարձաւ «հայրատունկ այգի», որոնց սպասաւորելը մշակի դերին մէջ, անձնական մեղ շրջանակէն վեր՝ անդրանձնական, համայնանձնական իմաստ ստացաւ, անձնական երջանկութեան որակը անհունօրէն բարձրացնելով:

Դպրեկամբը եղաւ – ու մնաց ողջ կեանքիս մէջ մինչեւ այսօր – մշակութեան արուեստի դպրոցը եւ հոգեւոր, եւ ազգային, եւ կրթական, եւ մշակութային, եւ ընկերային, անդաստաններուն մէջ: Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանի ռզնշնող անձնաւորութեան հմայքին տակ, Դերենիկ Շալսկապոսի մեթոդիկ աշխատանքի թելադրիչ «դասամեղութեամբ»,

Բիւզանդ եղիպեանի քազմահուտ ուսուցչութեան ներքեւ, Շահան Պէրպէրեանի առինձնող եւ վեհացնող գրաւորութեամբը, Սիմոն Սիմոնեանի մատենագրական սիրոյն խանդավառիչ ազդեցութեամբը եւ դեռ ուրիշ հոգեւորական եւ աշխարհական դասախօսներու եւ իմացական մենտորներու առաջնորդութեամբը գրաւուեցայ այնպիսի աշխարհով մը, որուն սպասաւորը ըլլալու գոյակերպս զգացի, ըմբռնեցի: Եւ նկատեցի կեանքիս իմաստն ու երջանկութեան աղբիւրը:

Եւ, ի վերջոյ, վեց տարիներու կրօնական, մտաւորական, նկարագրային եւ միանգամայն արժեքական կազմաւորումի հանգրուանին, «նորափետուր գարդարեալ» նոր անունով մը, նուիրականագոյն անունի մը կտակ-ժառանգութեամբը, մտայ եկեղեցական սպասաւորութեան դաշտին մէջ այս անգամ... խորհեցով:

Այ այդ օրէն ասդին, հոգեւորականի կեանքիս երեսուներկու լայն բաժինը ընծայուեցաւ Դպրեվանքին: Եղայ Հսկիչ, ուսանողներու, Տեսչի օգնական, Տեսուչ, դասախօս, ապրումներու, մտածումներու, հաւաքածու հմտութեան, ժամանակ-հարստութեան, մարդ-կարողութեան, ուսումնասիրական աշխատանքիս, դասախօսական, վարչական-կազմակերպչական գործունէութեան կարեւորագոյն մէկ մասը յատկացուեցաւ Դպրեվանքին:

Այդ բոլորը մասամբ արտայայտութիւն գտան նաեւ գիրի ճամբով:

Արեղայութեան սկզբնական օրերէն մինչեւ կաթողիկոսական այս ծանր լուծին օրերը, որոնք կ'անցնին ամենադժուարին պայմաններուն ներքեւ Լիբանանեան տասնամեայ տագնապի այս շրջանին, յաճախակի առիթներով եւ գիրի ճամբով արտայայտեցի զգացումներս, մտածումներս, ըմբռնումներս, սպասումներս,

հեռանկարներս, տեսիլներս Դպրեվանքի ոգիին, նկարագրին, նպատակին ու առաքելութեան մասին: Ըլլա՛յ հայ մամուլին մէջ հրատարակուած յօդուածներով, ըլլա՛յ Դպրեվանքի դպրոցական տարեշրջաններու րացման եւ փական հանդիսութիւններուն խօսածս «բան»երով, տեղեկագրական զեկոյցներուն վրայ աւելցուցածս խորհրդածութիւններով, ըլլա՛յ Դպրեվանքի ժառանգաւոր եւ սարկաւազ ուսանողներուն ուղղածս մտերմիկ զրոյցներով, ըլլա՛յ տօնական օրերուն եւ ձնոնադրութեանց ու վանական աւանդական հանդիսութեանց ընթացքին արտասանածս խօսքերով, ըլլա՛յ, մանաւանդ այս վերջերս, Դպրեվանքի Յիսմամեակին առիթով, տուածս բանախօսութիւններով եւ հրապարակային արտայայտութիւններով ջանացի լայն արտայայտութիւն տալ Դպրեվանքի մասին իմ հայեցողութեանս եւ անոր հանդէպ նախանձախնդրութեանս:

Այդ բոլորին մէջէն «աւուր պատշաճի» խօսքերու սահմաններէն շատ անդին տարածուեցաւ մտածումներուս եւ մտահոգութիւններուս հորիզոնը: Անոնց մէջէն կեդրոնական թելի նման անցնող գլխաւորագոյն եւ տիրական գիծը մարդու պատրաստութեան հարցն է, որով տագնապած եմ եւ ճգնած կեանքիս եւ գործիս լայնագոյն երեսներով եւ շեշտագոյն տարրերով: Ինձի համար, Աստուծոյ, եկեղեցիին, ազգին դպրոցին ու մշակոյթին սպասաւորութեան կոչուած անձներու-հոգեւորական թէ աշխարհական-կազմաւորման հարցը առաջնահերթ հարցն է հայութեան, մանաւանդ Սփիւռքի պայմաններուն մէջ: Աշխարհի բոլոր յառաջադէմ եկեղեցիներու եւ պետութիւններու, երկիրներու եւ համայնքներու մօտ կեդրոնական տեղ կը գրաւէ ղեկավար դասակարգի պատրաստութիւնը (leadership training): Աստուածաբանական ճեմարանները, համալսարաններու մաս

կազմող Աստուածաբանական Ուսմանց Բաժանմունքները, աշխարհիկ համալսարանները, արուեստներու, գիտութեանց եւ ճարտարագիտական գործնական հիմնարկները իրենց այնքան այլազան եւ հետաքննելի աշխարհը եւ քաղաքացիական գործնական քննադատութիւններով (disciplines) եւ այլ մասնաշաղկապ հաստատութիւններն ու կազմակերպութիւնները որոնք հսկայական գումարներ, հիմնադրամներ եւ սխտեմաքիթ ջանքեր ի սպաս կը դնեն երկրասարդներու առողջ եւ տոկուն կազմակերպման ի խնդիր:

Տարբեր չի կրնար ըլլալ հայութեան ճամբան:

Դպրեվանքէ Սփիւռքի հայութեան կեանքին մէջ գլխաւորագոյններէն մէկն է այն հաստատութիւններուն եւ համայնական գործունէութիւններուն, որոնց հիմնական ուղեգիծը, վախճանական մպատակն է պատրաստել մոր դեկավարութիւն մը, որ ի վիճակի ըլլայ առաջնորդելու եւ լեցնելու հայ կեանքին այնպիսի ուղղութիւններով, գործունէութիւններով եւ արժէքներով, որոնք հայ ժողովուրդը յառաջ տանին արդի մարդկային ընկերութեան եւ քաղաքակրթութեան տուեալներու համընթաց եւ միանգամայն զօրացնեն հայակերտութեան շարունակական կենսընթացը Հայ ազգի իմֆօրմէն եւ կենսունակ պահպանումին եւ զարգացումին մոտիակայն եւ հրաշալիական պարտաւորութեան ճամբուն վրայ:

Հետեալը, այս հատորին բովանդակութիւնն ու մպատակը Դպրեվանքի սահմաններուն մէջ չեն պարփակուիր: Այնտեղ հարցերը դրուած են Դպրեվանքի առիթով. բայց արտայայտուած գաղափարները, մտահոգութիւնները, խորհրդածութիւնները, քննադատութիւնները, արժեւորումները, մտանաշումները կ'անդրանցնին Դպրեվանքի պարունակը: Անոնք ուղղուած են բոլոր այն հաւատարմ, մախմախները եւ յանձնառութեան ապրումով իրենց

կեանքը արժեւորող անձներուն, որոնք գիտեն իրենց միտքերը սեւեռել խորագնդին եւ տեսլապաշտ հայեացքով հայութեան ներկային եւ ապագային վրայ: Եւ մանաւանդ հայ երիտասարդ սերունդին:

Դպրեվանքի Յիսմամեակին առիթով ի մի հաւաքուած գրութիւններու այս համադրոյթը Դպրեվանքով շնչող մթնոլորտ մը ունի անշուշտ: Բայց Դպրեվանքի անմիջական ու մասնակի տարողութենէն անդին անցնելով՝ ան ամէն մէկ գիտակից եւ շահագրգիռ հայու համար մարտահրաւէր մըն է (challenge) լրջօրէն եւ հետեւողականօրէն խորհելու հանգուցային եւ որոշադրիչ նկարագիր եւ իմաստ ունեցող այն հարցին մասին, որ մեր գոյատեւման, վերապրումի, մաքառումի, ստեղծագործականութեան եւ յաղթանակի կամֆին հետ է առընչուած գոյութեան կամօրէն:

Բնականօրէն, սահուն, հետեւողական, միաշունչ ընթերցումի համար յղացուած եւ հեղինակուած հատոր մը չէ աս: Զայն քաղցրեցող գրութիւնները մասնաւոր ծրագրով ու դասաւորումով, պատճառաբանալ շարայարութեամբ կեանքի կոչուած կտորներ չեն: Տարբեր-տարբեր ժամանակներու եւ պարագաներու տակ խօսուած եւ գրուած տողեր են անոնք, որոնց մէջ վստահաբար կան որոշ գաղափարներու կրկնութիւններ կամ մամողութիւններ եւ յարակցութիւններ: Մեր սպասումն է, որ երբեմն երբեմն ընթերցողները բանալ գայն եւ կարգան մէկ երկու կտորներ, խորհրդածեն անոնց բովանդակութեան մասին եւ մանաւանդ խորհին թէ ի՞նչ կրնան ընել որ աւելի լոյս, առանձն սեւեռում, յաւելեալ շնչաւ ստանալ մարդու պատրաստութեան գործը հայ կեանքին մէջ ներկայ եւ գալիք ժամանակներուն...:

Կը հրաւիրենք զիրենք Դպրեվանքի մուտքի արձանագրութեան քառերուն – «Խորհէ՛ եւ Մտի՛ր» – կարգը շրջելով եւ ըսելով՝

«Մտի՛ր եւ Խորհէ՛...»

## ՏԱՐՕՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԿՐՏԻՉ Վ. ԽՐԻՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ՝

ՊԻՈՍ Թ. ՊԱՊԻ ՀՐԱԽԵՐԻՆ ԱՌԹԻԻ

Պերապատի Սրբազան Տէր, Պործակից Եղբայր Ի Քրիստոս,

Ձեր եղբայրութենէն նամակ մը ստացայ Արժանապատիւ Հայր Մաղաքիոսին ձեռքով: Նամակին մէջ ներփակ կար Հոռոմի Սրբազան Քաճանայապետին Հրաւիրագիրը: Երկուքն ալ մեծ ուրախութեամբ կարդացի, լաւ հասկցայ, և համաձայն մեր քրիստոնէական պարտականութեան և աշխարհի քաղաքավարական օրէնքներուն ահա պատասխանը կը գրեմ Ձեզի:

Գերապատիւ Տէր, Դուք կը յայտնէք թէ այս նամակը ի պաշտօնէ գրելով կը ղրկէք մեզի, որպէս կամակատարը Ձեր գերագոյն Հեղինակութեան՝ Հոռոմի Սրբազան Քաճանայապետին, և համաձայն Պոլիս գտնուող Ձեր Գերերջանիկ Պատրիարքին: Իսկ մենք, ձեզի պէս, մեր ձեռքին մէջ չունինք այդ իրաւունքը՝ ո՛չ էջմիածնայ Ընդհանուր Հայրապետէն և ո՛չ ալ Կ. Պոլսոյ Սրբազան Պատրիարքէն՝ Հոռոմի Սրբազան Քաճանայապետին հրաւերը ընդունելու կամ չընդունելու: Հետեւաբար, այս պատասխանը պիտի նկատէք միայն իմ կողմէ, իբրեւ մեր ազատ սկզբունքը, և ոչ իբր պաշտօնական գիր մը, զոր թէպէտ քիչ մը համառօտութեան սահմանէն անցուցի բաղդատած ձեր հակիրճ գրութեան, սակայն մեր ընդարձակ պատասխանը մասամբ աւելի հրաւիրագրին իմաստին և նպատակին կը պատկանի, որով այսքանը առ այժմ բաւ համարեցէք. իսկ կէտ առ կէտ պատասխանը կը թողում ուրիշ անգամի:

Մենք վստահ ըլլալով բնաւ չէինք կարծեր թէ Հոռոմի Աթոռին Գահակալը Արևելքի եպիսկոպոսներէն ամենուն և առանց խտրականութեան հրաւեր ուղղելով բոլոր վատիկանի ընդարձակագոյն դահլիճը կը հրաւիրէ: Թէպէտ անշուշտ Հոռոմի Եպիսկոպոսապետը ինքն իր կողմէն, Հայրական պարտք համարելով, ամէնը առհասարակ կը հրաւիրէ, սակայն ո՞վ չի կրնար ուղիղ կերպով մտածել թէ այս ձևի հրաւեր մը իւրաքանչիւր ազգային եկեղեցւոյ նախնիքներու կանոններուն և սահմանադրութեան օրինագիծէն դուրս է և չեղում: Ու այս չեղումը պարզ և ակամայ սխալ մը չէ. հարկաւ թաքուն նպատակ մը ունի իր մէջ զոր այժմ պատշաճ չեմ համարեր Հոս նշել:

Քրիստոսի առաքեալներուն վիճակուած ամէն մէկ երկիր իր յատուկ առաքելաւ ունի և իւրաքանչիւր առաքելալ իր յաջորդը: Սուրբ Պետրոսի յաջորդն է Պիոս Թ., Սուրբ Թադէոսի յաջորդն է Տ. Գէորգ Դ.: Եթէ Պիոս Թ.ին նպատակն է միայն Հայաստանեայց եկեղեցւոյ և աշխարհին հետ նոր դաշնագիր մը կնքել, այն ատեն կը բաւէր իր հրաւիրագիրը միայն Հայոց Հայրապետին ուղղել: Իսկ եթէ ինք իր և իր կարտինալներուն խորհուրդովը միայն յայտարարութիւն կը ղրկէ Արևելքի բոլոր եպիսկոպոսներուն գալ տիեզերական ժողովի, ո՞վ կը լսէ և կը հաւատայ թէ սոսկ ձայն մը Հոռոմի Հայրապետէն կարող է ի մի բերել Արևելք, Հիւսիս և Հարաւ, այդ իրար հակառակ համոզումներն ու տարբերութիւնները: Այս երեք անկիւնի կողմերը այնքան հեռու են Հոռոմէն՝ որ թերեւ Գաբրիէլի հանդերձալ փողը նոյնիսկ չկարենայ իր ահաւոր ձայնը հասցնել:

Առաքեալներու քարոզութենէն ցայսօր թերեւ միայն երեք անգամ տիեզերական ժողով գումարուած է: Միթէ միայն Հայրապետի մը ձեռնարկութեամբ եղած են այս ժողովները, ո՛չ բնաւ: Եկեղեցւոյ պատմութիւնը մեզի կ'ըսէ թէ ինչպէս, և ինչ զօրաւոր Հեղինակութեամբ 318 Հայրապետները Նիկիա հաւաքուած են::



Յառաջ բերած այս խօսքերովս կ'ուզեմ ըսել թէ Պիոս Թ.ի տիեզերական ժողով մը գումարելու հրաւիրագիրը ո'չ մէկ Հեղինակութիւն ունի, քանի ան Սիոնի Վերնատան միութենէն բխած չէ՝, այսինքն՝ գէթ մի քանի առաքելական յաջորդներու միախորհուրդը և միաձայն որոշումէն:

Ուրեմն ինչպէ՞ս կարելի է և ի՞նչ է օրինաւոր ձևը տիեզերական ժողով մը կազմելու: Այդ խնդիրը, եթէ Հռոմ բարեհաճի մեզի հարցնել, նոյնիսկ եկեղեցւոյ ամենատղջմիտ եպիսկոպոսներն անգամ այս պատասխանը կու տան – Բրիտանոս, Երուսաղէմ, Սիոն Լեռ և Վերնատուն – ահա ասոնք են եկեղեցւոյ միութեան ճշմարիտ խորհրդատուն և միակ կեդրոնը ընդհանուր աշխարհի համատարած քրիստոնէական շրջանակին:

Ուրեմն, եթէ իսկապէս, Սուրբ Պետրոսի յաջորդը կը սիրէ եկեղեցւոյ միութիւնը, թող ան ելլէ Վատիկանի պալատէն, Յունաց Ընդհանուր Հայրապետը՝ Պոյսոյ Ֆէնէրի Պատրիարքարանէն, Սուրբ Թադէոսի յաջորդը՝ էջմիածնի Վեհարանէն, մէկդի թողլով քաղաքական նկատառումները, առաքելական մախառով և Բրիտանոսի խոնարհութեամբ երթան Երուսաղէմ, հաւաքուին աշխարհամուտ Տաճարին մէջ, ա՛յն գերեզմանաքարին մօտ, որ Միա՛կ Տիեզերական Եկեղեցւոյ Վէմն ու Անկիւնաքարն է:

Որչա՛փ ցանկալի պիտի ըլլար որ այս քարին առաջ ուխտէին ու միանային առաքելական յաջորդները և Հոն խմբագրէին տիեզերական ժողովի հրաւիրագիրը: Այս մեծ ու հոգևոր ձեռնարկին կէտը, անշուշտ եթէ Մեծն Կոստանդինոսի կամ Թէոդոսի ոգիով է – քանի աշխարհի վեհապետներու կամքն ալ ձուլումի միութեան գաղափարով են – այսինքն, Ռաշի գաւազանին Հետ սուրբ իշխանութեան գաւազանն ևս զուգաձայն հրամայէ, այն ատեն ո՞վ չի հաւատար թէ Տիեզերական Ժողովի գործը կատարեալ կ'ըլլայ:

Նոյնիսկ եթէ այնպէս համարենք որ Պիոս Թ.ի հրաւիրագիրը մեզի եկած է Երուսաղէմի գերագոյն Հեղինակութենէն, մենք նկատելով մեր խոնարհ վիճակը միթէ կարո՞ղ ենք երթալ այդ մեծ ժողովին: Ձեզի և բոլոր աշխարհին քաջ թաղտիւն է թէ Հայաստանեայց Եկեղեցին – որուն գլուխը կը հանդիսանայ Սուրբ Թադէոսի և Գրիգոր Լուսաւորչի յաջորդը՝ էջմիածնալ կաթողիկոսը, որուն ենթարկուած են Հայաստանի բոլոր վիճակաւոր եպիսկոպոսները – նոյն ինքնազատ կառավարութիւնը ունի, ինչպէս ուրիշ եկեղեցիները: Անոնցմէ ո՞վ իրաւունք ունի, առանց օրինաւոր Սինոդի, առանց եկեղեցւոյ համաձայնութեան և հաւանութեան, ինքնազուիս երթալ Տիեզերական Ժողովի: Արդեօք կարելի՞ է իրրեւ պատգամաւոր ներկայանալ Հոն առանց պաշտօնական իրաւասութիւն մը ունենալու Հայաստանեայց Եկեղեցւոյ Համագումար Ժողովի ատենանէն: Եթէ այսպէս է, ուրեմն պէտք է սպասել և տեսնել թէ Արարարտեան Եկեղեցւոյ Մայրաքոյնն ատենալը որքան կարևորութիւն պիտի տայ Հռոմի հրաւերին, անոր կարծիքը ի՞նչ է և ի՞նչ պիտի որոշէ: Մենք ահա այս որոշման և վճիռին ազատակամ հպատակող պաշտօնեաներ ենք:

Առաւել, մենք գմբզ նկատելով Սուրբ Աւետարանի նպատակին ազատ աշակերտ մը, նկատելով իրը նոյն սուրբ գիտութեամբ քարոզող եկեղեցւոյ վարդապետ, ու նաև գմբզ նկատելով Հայաստանեայց սուրբ, ուղղափառ, առաքելական և աւանդապահ եկեղեցւոյ անձնուէր անդամ, երկու տեսակի զխաւոր պարականութիւն կը զգանք մեր Հոգիին մէջ: Նախ՝ ընդհանուր եկեղեցւոյ վերաբերող ամէն խնդիր Աւետարանի սուրբ սկզբունքներուն և մեր երանելի սուրբ Հայրերու աւանդած վարդապետութեան Հետ համեմատել, այո՛ն՝ այո, և ոչ՛ը՛ ոչ, ընդունիլ կամ չընդունիլ: Այս մէկը հաւասարապէս եկեղեցւոյ բոլոր վարդապետներուն իրաւունքն է ու բաժինը: Բայց անշուշտ իւրաքանչիւրը իր

ընդունած չնորհներուն ձիւրքովն ու գիտութեան չափովը կարող է վարդապետել, դասել և որոշել: Երկրորդ, իբրև Հարազատ զաւակը այն սուրբ Հայրերուն՝ Գրիգորի, Ներսէսի և Սահակի, որոնք զիս ի Քրիստոս ծնան ու դաստիարակեցին, իմ այս հոգեւոր Հայրերուն ամենամեծ իրաւունքը՝ զոր Յիսուս տուաւ Թաղէտի, Թաղէտի՝ Գրիգորի, Գրիգոր իր բոլոր յաջորդներուն, այդ իրաւունքը՝ իբրև քաղաք մը բարձրացած է Մասիսի գագաթին վրայ:

Այո՛, Հայաստանեայց եկեղեցւոյ քաղաքը բարձր է իր ամէն իրաւունքներովը, անոր Հիմը Հաստատած է Յիսուս՝ Սանդարամետին գլխուն վրայ: Անոր պարիսպները աղամանդեայ են: Անոր դուռը բաց է ու ազատ. ով որ մտնէ՝ կ'ընդունի, և ով որ ելլել ուզէ չ'արգիլեն: Անոր շինուածքին բոլոր քարերը Արտաղի դաշտի սուրբ նահատակներն են: Այս քաղաքը անպահապան չէ: Անոր պարիսպներուն վրայ անքուն կը հսկեն երկու Առաքեալ և մէկ Հայրապետ. Թաղէտի ձեռքին մէջ՝ Աւետարան, Բարթողիմէոսի ձեռքը՝ Տիրամօր կենդանագիր պատկերը, իսկ Գրիգորի ձեռքը՝ Նիկիոյ Սուրբ Ժողովին Հանգանակը: Ուրեմն թող ո'չ ոք փորձէ այս քաղաքը գրաւել կամ տիրապետել: Ինչ կը կարծեն Արեւմտեան Եկեղեցիները: Այս քաղաքին բանալին որո՞ւ յանձնուած է. Աւետարանի ճշմարտութիւնն ու մեր նախնիքներու անսխալական աւանդութիւնները ցոյց կու տան թէ ան յանձնուած է Հայաստանի Առաքեալ Թաղէտի: Հիմա, տասնամէկերորդ դարէն ցայսօր աշխարհալուր վէճ մը յարուցուած է Աւետարանի գործակից երկու եղբայրներու՝ Սուրբ Պետրոսի և Թաղէտի միջև. մէկը Աւետարանի խօսքը առնելով կը փաստաբանէ թէ Յիսուս միայն իրեն տուած է այդ մեծ բանալին, որպէսզի բոլոր ազգերուն դէմ միայն ինք կարողանայ բանալ երկնքի դուռը: Իսկ միւսը՝ Հազար և մէկ ճշմարիտ վկաներ մէջբերելով կը հաստատէ թէ նոյն մեր Քաղաքապետը, Յիսուս, իրեն ալ տուած է Պետրոսի բանալիին յար և նման բանալի մը, անոր բանալիին մեծութեամբ, զօրութեամբ և իրաւասութեամբ: Ան այդ բանալին Երուսաղէմէն առնելով եկած է Հայաստան, ու բացած երկնքի արքայութեան դուռը խաւարի մէջ նստող ու Անահիտ պալատող մարդոց դէմ:

Ուրհեցէ՛ք. Գերապայծառ Տէր, լուրջ և զգաստ խօսելով: Եթէ Սուրբ Պետրոսի յաջորդ Պիոս Թ. Հոռնի Հայրապետը իր ներկայ Հրաիրազրով, Տիեզերական Ժողով կազմելով դարձեալ բանալիներու խնդիր պիտի յարուցանէ, ու նոյն բանալին պիտի պահանջէ Սուրբ Թաղէտի յաջորդէն, զայն իր առանձնաշնորհումը նկատելով, և կամ ալ ըսէ, «տո՛ւր» և կամ «Իմ Հրամանովս բաց ու փակէ՛», ճշմարիտ կ'ըսեմ, ի զուր և պարապ է գիշերային այս վաստակն ու յոգնութիւնը, որովհետեւ ի վերջոյ իր նախորդին՝ Զկնորս Պետրոսին նման գանձատեղով պիտի ըսէ, «Տէ՛ր, գամենայն գիշեր աշխատեցաք և ոչինչ կալաք»: Եթէ ինք կը կարծէ թէ զօրաւոր է Պետրոս՝ Մաղքոսի ականջը կտրող սուրով, ես կ'ըսեմ առաւել քաջակորով է Թաղէտս՝ ճշմարտութեան անկալարտելի գէնքով: Բնաւ կարելի պիտի չըլլայ այդ բանալին կորզել անոր ձեռքէն և տանել մինչև աշխարհի վերջը:

Հետեւաբար ի՞նչ է ճարը որ այս երկու տարանջատ եղբայրները արդարադատօրէն իրարու հետ Հաշտուին: Ասոր միակ ճարը Պետրոսի ձեռքն է, որ պէտք է մէկդի դնէ իր յամառ սկզբունքը և միշտ բանալիներու խնդիր չհանէ. թող Աւետարանի սիրով Հաշտութեան ձեռք երկարէ իր խռովեալ եղբոր Թաղէտի, ուխտէ յանուն Սատուծոյ այլեւ բնաւ չարտաբերել այդ անունը՝ որ Աւետարանի յիշած Անուս և Յիմար անուանելէն աւելի ծանր է. ա'յն անունը՝ որ Թաղէտի և իր Հիմնած եկեղեցւոյ դէմ անհուն թշնամանք է. ա'յն անունը՝ որ Ուշեալ Աստուծոյ կողը մխուած սայրասուր գեղարդէն աւելի ուժեղ կը խոցէ Հայաստանի զաւակներու սիրտերը, որոնց անունները Յիսուսի սուրբ անունով

կնքուած են և օծուած՝ երկնքի Հօր որդիներ կոչուելով, ու աւագանի Սրբարանէն սորվելով, մշտամրմունջ այսպէս կ'աղօթեն. «Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո ի վերայ մեր»:

Օն ուրեմն, եթէ Հռոմի Պետրոսը կը ձայնէ Հայաստանի Թաղէոսին, և պաղատելով եկեղեցւոյ խաղաղութիւն և միութիւն կ'ուզէ, թող ուշքի գայ ուրեմն և նախ թող իր նորահնար տոմարին մէջէն ջնջէ իր արձանագրած անհանդուրժելի անունը, երկրորդ՝ թող իր եղբօրմէն՝ Թաղէոսէն, բնաւ չխնդրէ անոր իրաւունքներուն քանային:

Ահա՛ այս է միակ միջոցը խաղաղութեան և միութեան, որ անխզելի սիրով Հռոմը կը կապէ Հայաստանին և Պետրոսը Թաղէոսի Հետ, մէկ խօսքով, Արեւմուտքը՝ Արեւելքին Հետ: Ահա Տիեզերական ժողովին կատարումն ու վախճանը, որ առանց Հռոմ երթալու կը վերջանայ:

Այս բարեղէպ օրուան սրտի բոլոր գօրութեամբը ցանկացող, իբրև «Նոր Մեսիայի գալստեան»:

Մ. Վ. ԽՐԻՄԵԱՆ  
Եպիսկոպոս Տարօնոյ

Առաջնորդարան Հայոց Կարնոյ  
1869 Յունուար 18

## ԱՊԵՐԱԽՏՈՒԹԻՒՆ

Ապերախտութիւն...

Դու՛ երախտիքի անխախտ թշնամի,

Դու՛ սատանայի սիրած յատկութիւն...

Գթութիւն հայցող խղճուկ հայեացքով

Շատերի գութն ես շարժում դէպի քեզ,

Որ նրանք գթան...

Բայց երբ գթում են,

Մտքով խորհում ես, փնտռել մէկ առիթ՝

Նրանցից իսկոյն վրէժդ առնել...

Քո «որդեգրած» յատկանիշներն են՝

Կեղծատրութիւնն ու խաբէութիւնը,

Կեղծ բարութիւնն ու անգթութիւնը,

Դրսից սիրտ շահող մեղմ բարութիւնը,

Ներսից՝ թրատող ատելութիւնը...

Անդարձ սրտերի դու «քաղաքացի»,

Ուրիշ տենչ չունես խայթելուց բացի...

ՄԻՇԱ ՍՎԱՐԵԱՆ

## ԻԳՆԱՏԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼԴԼԻՍ ԺԴ

1. - Շաբաթ օր մը, Յիսուս ճաշի մտաւ Փարիսեցիներուն պետերէն մէկուն տունը. ասոնք կ'սպասէին զինք: Ահա ջրգող մարդ մը կեցած էր Յիսուսի դիմաց: Թէն տեղ տեղ կը հիւրասիրէին զինք, սակայն ոչ կատարեալ սիրով: Ինչպէս Աիմոն որ կ'աղաչեր որպէսզի իր հետ ճաշէ և անոր տան մէջ մեղաւոր կնոջ արտօնեց իր ոտքերուն մօտենալ, գայթակղեցաւ Աիմոն:

Դարձեալ միւս փարիսեցիին որ հրաւիրեց զինք և չմկրտուեցաւ, կը տկարանար և որուն յանդիմանեց. այսպէս պատահեցաւ նաև այստեղ: Բարեկամաբար կը հրաւիրեն, բայց կ'սպասեն հակառակութեան պատճառ գտնելու: Որովհետև մարդը ջրգողեալ էր և գիտէին որ աղքատներու և ախտաժէտներու հանդէպ բարեկամեցողութիւն ունի, անտես չըբաւ այդ հիւանդին. ուրեմն կ'սպասէին: Օրինակ երբոր գօսացեալ ձեռքով մարդը բերին բժշկուելու համար շաբաթ օր մը, որպէսզի չարախօսեն: Այլ նա որ կանխաւ գիտէր անոնց նենգ խորհուրդները, կը կարկէ անոնց լեզուները: Ինչպէս այնտեղ, այս պարագային ալ անոնց անգթութեան համար կ'ըսէ. - Ի՞նչ պէտք է ընել շաբաթ օրը, բարի՞ք գործել թէ չարիք. հոգի մը ապրեցնել թէ կորուստնել: Երբոր անպատասխան թողուց զանոնք, ապա ախտացեալին առողջութիւն շնորհեց: Նոյնն ալ այստեղ կ'ընէ: Զկրցան պատասխանել որովհետև երբ վերին իմաստութիւնը խօսի, մարդկային իմաստութիւնը կը խափանուի: Ապա մարդը կ'ազատէ իր ախտէն: Այս ընելու համար ոչ ժամանակի կարօտացաւ ոչ ալ դեղերու, այլ խօսքով միայն առողջութիւն տուաւ և արձակեց որ մեկնի: Նախապէս ախտով ծանրացեալ կը գծուարանար մեկնելու: Փարիսեցիները չկրցան խօսիլ որովհետև նախապէս հարցնելով լռեցուց զանոնք: Թէն լռեցին, բայց Յիսուս, որպէսզի անոնք մտածմամբ ալ ըսելիք մը չունենան, անոնց գործելակերպէն օրինակ կը բերէ ըսելով. - Ո՞վ փութ ինկած իր եղբ կամ էջը, մեծ ճիգերով շաբաթ օրը փոսէն չհանէր: Իսկ Յիսուս առանց աշխատելու, միայն խօսքով բժշկեց. ասոր համար է որ սաղմոսին մէջ գրուած է. - "Ըսաւ և եղաւ. հրամայեց և հաստատուեցաւ":

7. - Տեսնելով թէ ի՞նչպէս կոչուեցի ժամանակ առաջին տեղերը կը գրաւեն, ըսաւ անոնց առակով. - Երբոր հարսանիքի կամ կոչուեցի հրաւիրուիս, առաջին տեղը մի բազմիւր, թերևս քեզմէ աւելի կարևոր անձանորութիւն մը հրաւիրուած է, քեզ և զայն հրաւիրողը գալով կրնայ ըսել - տեղդ ասոր տո՛ւր: Այն ատեն դուն ամօթաճար պիտի երթաս ու գրաւես վերջին տեղը: Օգտակար խրատներ կուտայ, ինչպէս օրինակ երբ ըսաւ - իրաւախօհ եղիւր հակառակորդդ հետ որպէսզի զերծանիս անկէ, մի գուցէ դատարան չտանի քեզ, դատաւորն ալ դաճիճին:

10. - Երբ Հրաւիրուիս, գնա՛, նստէ վերջին տեղը, որպէսզի քեզ Հրաւիրողը երբ գայ, ըսէ քեզի, բարեկամ անելի վեր անցիր: Այն ատեն բոլոր Հրաւիրեալներուն առջև պատուընտած պիտի ըլլաս: Խոնարհութիւն կը սորվեցնէ ունայնամիտներուն ու փառասէրներուն: Ամբարտաւանութենէ, ռիակալութենէ, փառասիրութենէ և նախանձէ մղուածները չար են, կը վարակեն Հոգիները: Թէև ուրիշ յանցանքներ Հոգիներու ապականիչ են, սակայն քիչ թէ շատ զգայութիւնները կը հեշտացնեն: Իսկ յիշեալները Հոգիներն ալ մարմիններն ալ կը հաշմեն և ամէնքին ատելի կը դարձնեն: Նոյն պատճառաւ ալ Տէրը երանի կուտայ Հոգւով աղքատներուն ու հեղբերուն, սգաւորներուն, զի ասոնք այնպիսի ախտերէն զերծ են և խաղաղ, շատերուն սիրելի և ամէնքէն բարեբախուած: Իսկ փառասէրները և ամբարտաւանները ամէնքէն ատուած և Աստուծոյ առջև ալ անարգ ու յետին, կրակի ու խաւարի ժառանգաւոր: Այս խօսքերը քննել պէտք է, որովհետև սկիզբը ըսաւ թէ առակ է, իսկ այսպէս պարզ և յստակ խօսքեր են: Ուրեմն պէտք է հասկնալ թէ Յիսուս նոյն ինքն է կոչնատէրը իբրև փեսայ, մաքուր և անախտ Հարսանիքի ուրախութեան: Հաւատքի միջոցաւ մեզ Հրաւիրեց ճանապարհներէն և Հրապարակներէն, առաքեալներու բարձրաձայն քարոզութեամբ, խրատելով որ կարևորագոյն տեղը չգրաւենք պարսաւեալներուն նման, այլ մնալ և սպասել որ Հրաւիրողը ճանչնայ մեզ, այն որ անյայտը կը տեսնէ, որպէսզի կոչողին պատուասիրութիւնը փառքով ըլլայ: Այսպէս խոնարհները պատուով կը բարձրանան անկապուտ բարձրութեան: Իսկ անոնք որ կը ջանան իրենց անձերը յարգել տալ, այն ահեղ ատեանին առջև յետին պիտի ըլլան, կորանալով պիտի ամչնան զի սնոտին փնտռեցին և Աստուածայիները անտեսեցին:

12.- Յիսուս ըսաւ զինք Հրաւիրողին. - “Երբ ճաշ կամ ընթրիք տաս, մի Հրաւիրեր ոչ բարեկամներդ ոչ ալ Հարուստ Հարեաններդ, որպէսզի փոխարէն անոնք ալ քեզ Հրաւիրեն և Հատուցում ըլլայ քեզի: Այնպէս ինչպէս մեղաւորները մեղաւորներուն փոխ կուտան: Երբ խնջոք սարքես, Հրաւիրէ աղքատները, Հաշմանգամները, որոնք չեն կրնար Հատուցանել, այն ատեն երանելի ես, զի Աստուած ունիս պարտապան որ պիտի Հատուցանէ քեզ բազմապատիկ:

15.- Այս խօսքերը լսելով, բազմականներէն մէկը ըսաւ Յիսուսի. - “Երանի անոր որ ճաշ պիտի ուտէ Աստուծոյ արքայութեան մէջ”: Այս մարդը արդարներուն ըլլալիք Հատուցումը մարմնական կը կարծէր: Ինչպէս Սաղուկեցիները երբ Հարցուցին ի յարութեան, անոնցմէ ո՞ր մէկուն կինը պիտի ըլլայ: Նոյնպիսի ցանկութեամբ բռնուած այս մարդը, մարմինը հեշտացնող կերակուր կարծելով, երանի ըսաւ անոր որ ճաշ պիտի ուտէ Աստուծոյ արքայութեան մէջ: Յիսուս չի սաստեց, որովհետև տգիտութեամբ և ոչ թէ չարութեամբ խօսեցաւ: Առակի միջոցաւ, անոնց երանական կեանքէն դուրս մնալը կը բացատրէ:

Որովհետև զանոնք մարգարէներու և առաքեալներու միջոցաւ հրաւիրեց բազում խնամակալութեամբ. իսկ անոնք ծուլացեալ, աշխարհի ցանկութեամբ կապուած, հրաւիրողի կոչունքին չգային, այլ իւրաքանչիւրը իր մեղքերուն համաձայն պատճառաբանութիւն մը գտաւ: Մէկը ագարակ, միւսը Հինգ եզներու լուծ մը գնեցի ըսաւ, այսինքն բոլոր Հինգ զգայարանքներով շաղախուած կը մեղանչէր: Ուրիշ մը տակաւին կանանց սիրով տարուած, ամէնքն ալ չուզեցին անսալ հրաւէրին: Տակաւին ուրիշներ շատ չարացան անհաստատութեամբ. անարգանք, վէրքեր, անհնարին տանջանքներ նոյնիսկ մահ պատճառեցին անոնց որոնք Աստուծոյ արքայութեան ու փառքին հրաւիրեցին զիրենք: Յետոյ ի՞նչ: Անբարկանալի բնութիւնը կը բարկանայ, կը մերժէ հրեաները, կը հրամայէ հրաւիրել Հեթանոսները. արդարութեան ճանապարհներուն կաղացեալները, Աստուծոյ գիտութեան լոյսէն կուրացեալները, հայրենի փառաց Ս. Հոգւոյն շնորհներէն աղքատացեալները, հրապարակներէն, փողոցներէն, ամբարիշտներու քաղաքներէն ժողովելով զանոնք բոլորը: Հեթանոսները անսպին հրաւէրին: Ինչու որ Հեթանոսները իրենց անձերը Աստուծոյ նուիրեցին, խոտորեալ Յակոբի տան փոխարէն, Հեթանոսները, աշխարհի չորս կողմերէն գալով լեցուցին Աստուծոյ արքայութիւնը: Իր հետ ընթացող ժողովուրդի շայնով Յիսուս ըսաւ. -

26.- Եթէ մէկը ուզէ ինծի գալ, առանց ատելու իր ծնողքը, կիներ ու զաւակները, եղբայրներն ու քոյրերը նաև իր անձը, չի կրնար իմ աշակերտս ըլլալ: Ով որ չառնէր իր խաչը և չի հետևիր ինծի, չի կրնար իմ աշակերտս ըլլալ: Ձըլլայ որ այսպիսի աշակերտութեան հետևիլ ուզողը ի դուր տեղը մօտենայ: Ուստի պարզօրէն ըսուածը, նաև առակաւ կը բացատրէ. -

28.- Ձեզմէ ո՞վ, երբ ուզէ աշտարակ մը շինել, նաև չի հաշուեր ծախսերը, տեսնելու համար թէ միջոց ունի՞ր՝ զայն գլուխ հանելու: Թերևս սկսի շինել և չկարենայ աւարտել, տեսնողները պիտի ծաղրեն զինք և պիտի ըսեն. - այս մարդը սկսաւ շինել և չկրցաւ աւարտել: Այս շինութեան առակին իմաստը, վերջացնել կամ աւարտին հասցնել է, այսինքն աշակերտել, այլապէս բնաւ պէտք չէ սկսիլ աշակերտութեան: Եթէ մէկը իր անձը ունայնացնելով, խաչը առնելով պիտի չկարենայ կրել զայն, աւելի լաւ է սկիզբէն առաջին քայլը չառնէ արդարութեան ճանապարհին: Առաքեալներուն և մարգոց պատուէրները տարբեր են. մարդիկ աշխարհավար կեանքով կը կենցաղավարին: Ով որ առաքելութեան աշտարակ շինել կուզէ, զգոյշ պարտի ըլլալ, հոգին անվնաս պահելու, հալածանքներու և փորձութիւններու ժամանակ, որպէսզի թերակատար կամօք և հոգևոր կրթութեամբ անկատար, տեսնողներու ծաղրին առարկայ չըլլայ: Փորձութիւններու արկածներէն կ'զրուշացնէ, ինչպէս օրինակ, կը խրատէ որ աքաբելութեան տունը հաստատուն հիման վրայ դրուի որպէսզի անվնաս մնայ, ոչ թէ անմտութեամբ խարխուլ և առանց հիմքի, որպէսզի սատանայական փորձութեան հոգմբուն գիմարդէ:

Այնտեղ, կործանում է կը զարհուրեցնէ, այստեղ ալ ծաղրի ու նախատինքի առարկայ ըլլալէ կ'զգուշացնէ: Նոյն մտադրութեամբ, թէև տարբեր բառերով առակ մը ևս կը պատմէ:

31.- Ո՞ր թագաւորը երբ պատերազմի երթայ ուրիշ թագաւորի մը դէմ, տաս Հազար զինուորներով, նախ նստելով Հաշիւ չընելու թէ կրնա՞յ ճակատիլ անոր որ իր վրայ կուգայ քսան Հազարով: Այս առակն ալ իր բացատրութիւնը ունի: Աշակերտութեան աստիճանները կան, ամէնքը նոյն բարձր աստիճանին չեն կրնար Հասնիլ. ոմանք կը նահատակուին կուսութեամբ, իսկ ուրիշներ անբաւական են: Անոնք որոնք բարձրագոյն աշակերտութեան կը ձգտին, պարտ է որ խորհին թէ կարո՞ղ են իրենց մէջ խափուրը մեղցնել. վասնզի զգայարանները իբրև զինուորներ պարտին առճակատիլ սատանայական պատերազմներուն և փորձութիւններուն:

32.- Հակառակ պարագային, մինչ միւս բանակը տակաւին Հեռու է, պատգամաւորներ կը ղրկէ և Հաշտութիւն կը խնդրէ: Ոչ թէ մեր և սատանային միջև խաղաղութիւն կը կնքուի, այլ առակը ուրիշ իմաստ ունի: Երբոր բարձրագոյն աշակերտութեան չենք կրցած Հասնիլ, ընտրենք երկրորդ կարելին, այսինքն, Հաւատացեալներուն կարգին մնանք. ամուսնական կեանքին Հաւատարիմ մնալ, անՀնարին պատերազմներէն Հեռու կենալ: Եթէ չենք կրնար առճակատիլ և պսակներու արժանանալ, սակայն կրնանք կործանումէն փախչիլ և պարկեշտ կենցաղավարութիւն ունենալ որ օտարանալ չի սեպուիր Քրիստոսի աշակերտելէ: Ապա թէ ոչ ինչո՞ւ Պօղոս առաքեալ անոնց որոնք սուրբ կ'անուանէ կը Հրամայէ. – “սիրեցէք Ձեր կիները” Եփես. 5.25: Մեծ խորհուրդ է այս որովհետև կը պատկերացնէ Յիսուսն ու իր եկեղեցին. 5.35: Անոնք որոնք կարողութիւն չունին Աստուծոյ և մարդոց միջև միջնորդ ըլլալու, բնաւ թող չցանկանային այդ պատուին և մեծութեան, անշուշտ վախնալով վտանգէն, այլ թող մնան կարող մէկու մը վերակացութեան ներքեւ: Ինչպէս որ զօրավար ըլլալու անատակ մէկը, ուրիշներու խնամակալութեան ներքեւ կը մնայ: Ով որ Հմուտ չէ նաւավար ըլլալու, պէտք է թողու որ Հմուտ մէկը զործը ստանձնէ որպէսզի ամենՀի ալիքներու ծփանքներէն, նաւը կարենայ խաղաղութեան ափը առաջնորդել: Այսպէս նաև “ ոեւէ մէկը որ չի Հրաժարիր իր ինչքերէն, չի կրնար ինծի աշակերտիլ.” կը ճշմարտութի այս տեսութիւնը Հետեւալ օրինակաւ:

34.- Լաւ է աղը, բայց եթէ կորսնցնէ իր Համը, ինչո՞վ գայն նորէն կը Համեմեն: Իր աշակերտներուն ըսաւ – “դուք էք աշխարհին աղը, որովհետև ատիկա ամէն տեսակ կերակուր կը Համեմէ”: Իսկ եթէ ինք անՀամի, ոչ մէկ բանի պիտանացու կրնայ ըլլալ: Այսպէս ուրեմն այն որ առաջնորդութիւն ստացաւ և ծուլութեամբ անպիտան գտնուեցաւ, Աստուծոյ եկեղեցւոյն Համար պիտանացու չէ բնաւ, վասնզի մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ:

Եզեկիել մարգարէն այսպիսիները կը նմանցնէ որթատունկի փայտին, և ասոր ոչ պիտանացու ըլլալը ցոյց կուտայ ըսելով – Ի՞նչ է որթատունկին փայտը որմէ ունէ անօթ չի չիւնուիր, ոչ ալ տան պատին համար ցից կամ անկէ բան մը կախելու համար գերան. ուրեմն ասոր անպիտանութիւնը կրակով կ'այրուի. Եզ. 15: Իսկ մեր Տէրը անպիտաններուն հատուցումը, ատոնց դուրս իյնալը, անարգութիւն ու ոտքի կոխան ըլլալը կը հաստատէ: Աշակերտութեան անարատութեամբ չի հետեւողներուն վարձքը, զհենիսի դատապարտութիւն է:

\*\*\*\*\*

### Գլխիւ ժե

1.- Մաքսաւորներն ու մեղաւորները մօտեցան Յիսուսի դինք լսելու համար: Փարսեցիներն ու դպիրները կը տրտնջէին և կ'ընէին. – այս մարդը մեղաւորները կ'ընդունի և անոնց հետ կը ճաշէ:

Մարդասիրութեան բազմապատիկ խնամք ցոյց տուաւ, ուսերուն վրայ վերցուց մարդկային մեղքերը. ուրիշ առակով դարձեալ կ'ուսուցանէ: Ինքզինք հովիւ կ'անուանէ, զմեզ, կորուսեալ ոչխարները գտնելու համար: Սակայն ինքն ալ գառն Աստուծոյ էր, վասնզի աշխարհի մեղքերը բառնալու համար պիտի պատարագուի, այսինքն զհոգի: Դրամի առակը կը պատմէ:

8.- Ո՞վ է այն կինը որ եթէ ունենայ տասը կտոր արծաթ դրամ և կորսնցնէ անոնցմէ մէկ հատը, ճրագ չի՞ վառեր, տունը չաւելո՞ր և ուշադրութեամբ չի՞ փնտռեր մինչև որ գտնէ զայն:

Աստուածային սիրոյն ամենախնամ տեսչութիւնը, բազմադիմի առակներով կը յայտնէ մարդոց: Մեզ ոչխար կ'անուանէ. ամէնքին տէրը ըլլալով, ինքզինք արարածական բնութեան կը հաւասարեցնէ, հովիւ ըսելով: Իր անձը կ'ունայնացնէ, ծառայի կերպարանք առնելով որպէսզի մեզմով մեզ գտնէ: Մեզ կը նմանցնէ կորսուած տասը դրամներէն մէկուն, կորսուած պատկերին այցելելու եկաւ, անոր որ սկիզբէն, ամենաբարի արարչէն պայծառ և անապական ստեղծուած էր, արծաթեղէն և պատուեալ, յարմար՝ իր պատկերին նմանութեան, զի պատկերին առակով կը զեկուցանէ այս մասին: Սորված ենք թէ ինք դիւսակարգութիւններ ունին հրեշտակները. մեր բնութեամբ, այդ տասնէ մենք պակսած ենք: Իսկ եթէ ոչխարներուն համար հարիւր ըսաւ, միւսոյն է, զի տասը թիւով չափուած են:

ԱՆԻՆՆ ԱՊ. ԶԻՆԶԻՆԵԱՆ



## ԴԷՄՔՆ ՅԻՍՈՒՍԻ

**Գ**եղանկարչութեամբ և ֆանդակով, մարդկային միտքն ու գեղեցիկի հմայքը ստիպած են հանճարեղ արուեստագետը՝ հնարելու ֆարէ ու կաւէ, մետաղէ և գոյներէ արտայայտիչ դէմքեր, երեւոյթներ և անձնաւորութիւններ: Սոյն բացառիկ և կախարդիչ խորաֆանդակները կամ հարթաֆանդակները մէկ նպատակ ունին: Արտայայտել և հաղորդել անտեսանելին և անըմբռնելին պարզ մահկանացու մարդկանց:

Մարդկային միտքը, որ ստեղծագործ խորհորդներու ներաշխարհ մըն է, կամայ ակամայ կը ծննդագործէ գեղարուեստական և ծարտարապետական կոթողներ որոնք արտայայտութիւններն են խոր զգացումի, և հիացումի: Յոյներ ու Եգիպտացիներ, Պարսիկներ ու Հնդիկներ յայտնաբերած են իրենց պաշտումը հիացումն ու սփանջացումը մարմարի, ոսկիի, պղինձի և մագաղաթեայ մատենագրութեան արուեստով:

Այս բոլոր հզօր և կայսերապաշտ ազգերուն մէջ, գտնուեցաւ փոքրիկ ցեղ մը, որ ունենալով հանդերձ, Անժամանցելիին բարձրագոյն և նաեւ խորազննին հասկացողութիւնն ու ըմբռնումը, չդիմեց մարմարին, ոսկիին կամ պղինձին, բացայայտելու իր պաշտած գերագոյն Աստուածը: Ան չի նմանցուց իր հաւատքը նիւթականի որ օր մը պիտի փոշիանայ ու վերադառնայ հողի: Ան հոգեկա՛ն տարածութեան մէջ ֆանդակեց իր հաւատին ու պաշտամունքը:

Հրեայ ազգին ֆահանսնե՛րն ու դպիրնե՛րն էին նիւթապաշտ ազգային առաջնորդները, որոնք հալածեցին հոգիին աչքերով տեսանող մարգարէներն ու աստուածառաք ռահվիրաները: Մարգարէները և տեսանողները այն հոգիներն էին որոնք մերժելով մարմնականը և անոր ժամանակաւոր մղումները, դարձան հոգեղէն ու ապրեցան աստուածային տարածութեան ներքեւ:

Մարգարէները՝ իրենց հոգւոյն մէջ այնքա՛ն մեծ և վեհ կը տեսնէին զԱստուած, որ չէին կրնար նմանցնել Ձայն մարմարի կամ մետաղի: Միակ միջոցը կամ միջնորդութիւնը որ ունէին և կը հաւատային արտայայտելու Գերագոյն Էակը, իրենց հաւատքին ու ապրումինարտայայտութիւնը՝ խօսքն էր ու գիրը: Անոնք կը հաւատային որ խօսքով ու գիրով պիտի կարենան դաստիարակել ու մարգել սերունդ մը որ մշտնջենապէս պիտի փոխանցէ իրենց հաւատքը և հեռանկարը յաջորդող սերունդներուն:

Հռչակաւոր Յոյն դիմակաւոր դերասաններ կը ներկայանային հանրութեան և դիմակներու ներքեւ կ'արտայայտէին ծշմարտութիւնը և իրականութիւնը, ծիծաղն ու լացը: Զարլի Զաբլին՝ իր շարժանկարի

երեւումներուն մէջ իր դիմագիծերով կ'արտայայտէր մարդկային հովուեր-գութիւնը և ողբերգութիւնը:

Յունական թատերգութիւնը օգնեց մարդկութեան, սակայն մնաց միշտ դիմակի մը ետին: Ծշմարտութիւնը և իրականութիւնը անմերձենալի դարձաւ Յունական մեծատաղանդ իմաստասէրներուն, արուեստագէտներուն և բանաստեղծներուն մինչեւ գալուստը Միածնի Մարդեղութեան:

Հրեական ըմբռնումը եւս ունեցաւ իր թերութիւնը: Հրեայ կրօնամուկներ, բնուեցան գրական տառին ծայրայեղութեամբ: Փոխանակ պաշտելու գիրին նշանակիչ Տէրը, սկսան պաշտել տառը: Փոխանակ զԱստուած տեսնելու մագաղաթեայ գրականութեան մէջ, տեսան իրենց ցեղն ու ազգային գերակայութիւնը: Փոխանակ տեսնելու իրենց ճանապարհը, լապտերին լոյսով, դիտեցին ու սփռեցան կանթեղին շինուածճովն ու կանթեղը շինող ազգային մեծատրներով: Իրենց ամենավստահելի և ապահով կարծած տառն ու գիրը պատճառ դարձաւ իրենց կուրութեան և ձախորդութեան, ի վերջոյ խաչեցին Չայն՝ Որուն յայտնութեան և վկայութեան համար գրուած ու կանգնած էր իրենց կոթողական մատենագրութիւնը:

Մարդկութեան այսպիսի խաւար աղջամուղջին մէջ փայլեցաւ աստուածային Լոյս Յիսուս Զրիստոս: Բայց ափսոս, որ մարդիկ

*"խաւարը Լոյսէն արելի սիրեցին, որովհետեւ իրենց գործերը չար էին":*

Յիսուսի համար, համայն աշխարհ թատերաբեմ մըն էր: Ան չի գործածեց դիմակ կամ գիր:

Ինչո՞ւ:

Որովհետեւ դիմակն ու գիրը կատարած էին իրենց դերերը ու ձախողած: Դիմակը այլասերած էր որպէս հաճոյամուկութիւն, իսկ թատերախաղը դարձած էր սուսերամարտութիւն: Մագաղաթը իր գիրով՝ դարձած էր ծածկագրութիւն և ծածկաբանութիւն: Ուստի,

**«Բանը մարմին եղաւ»:**

Յիսուս մարդացաւ ու մարմնացաւ որ մեզ՝ մարդկութիւնը, աստուածանման դարձնէ: Յիսուս իր աշակերտներուն դասագիրք և քերական չտուաւ: Ձիրենք անստուգութեան և խաւարի մէջ չի թողուց: Յիսուս՝ իր աշակերտներուն յայտնեց ու վկայեց կենդանի կեանք մը, ապրում մը և օրինակ մը: Յիսուս չի տուաւ հաւատամք մը կամ կանոնագրութիւն մը անոնց, ինչպէս Մովսէս տուած էր Տասնաբանեայ Օրէնքը իր ժողովուրդին: Յիսուս՝ իր աշակերտներուն տուաւ սիրոյ շօշափելի յայտնութիւնը որ կանոնի ներքեւ չի պարունակուիր, անսպառ ներողամտութիւն, որ սահմանումէ գեր ի վեր է, և անճառելի ողորմութիւն որ ըմբռնողութեան համար յաւետանիմանալի է:

Յիսուսի երկնաբաշխ պարգեւները ոչ թէ կը զուարճացնեն մարդը նման Յոյն բանաստեղծ դերասաններու և կը շփոթեն լսողները ինչպէս Հրեայ

Դուեռանդները, այլ՝ Յիսուսի պարգևները և ողորմութիւնները կը փոխակերպե՛ն մարդկութեան ապրելակերպը: Զօրութիւն և բժշկութիւն կը հոսի Յիսուսի խօսքերէն որ կը բժշկէ հիւանդները և ախտաւորները, ու կը փոխակերպէ մեղաւորները սրբութեան ու մաքրակենցաղ ապրումի:

Մի՛ փնտռէք Յիսուսի դէմքը բառի մը կամ տառի մը մէջ: Խօսքի ու գիրի ետին պահուած *իմաստի՛ն* մէջ է Ան: Եկեղեցիի մը զանգակին անբարբառ ղօղանջը աւելի կը խօսի երբեմն, քան թէ կղերին հրաւերը իր ժողովուրդին: Զանգակի մը ղօղանջը աւելի հիւրընկալ է, առանց խօսքի, քան թէ Բարոզիչին հռետորութիւնը: Սրինգի երաժշտական մեղեդին մարդ-արարածը աւելի կը ներշնչէ, կը մղէ ապաշխարանքի և կը մօտեցնէ զայն աստուածային Ներկայութեան, քան թէ շատ մը նախադասութիւններ որոնց իմաստը անհասկնալի կը մնայ:

Նոյնպէս է նաեւ Յիսուսի Դէմքը և Անոր աստուածայայտնիչ նայուածքը: Փնտռե՛նք Յիսուսը և ուսումնասիրենք Անոր կենսամտորոգ՝ խօսքերը Աւետարաններու անմար լոյսին մէջ, սակայն, աւելի ջանանք գտնել և տեսնել Յիսուսի Դէմքն ու ողորմագին նայուածքը Անոր դիւրահաղորդ Անձնաւորութեան մէջ աղօթքով: Որուն հպումին մէջ կայ ներում և բժշկութիւն: Անխօս արցունք մը, սրտաշարժ հառաչանք մը և հմայագեղ ժպիտ մը շատ աւելի անկարելի գործեր իրագործած են, քան հազարաւոր հրամաններ և պատուէրներ: Չեմ ուզեր թողուլ այն տպաւորութիւնը, թէ խօսքը արժէ չ՝ունի, այլ՝ խօսքը կարծեաւորովի վերոյիշեալ աստուածամեղեդիի ապրո՛ւմ թրթռացումներու ընկերակցութեամբ:

Յիսուս՝ ոչ թէ կը դպչի մարդոց Իր բուժիչ Աջովը միայն, այլ՝ նաեւ Իր ճառագայթող նայուածքովը, և յուզիչ լացովը Ղազարոսի գերեզմանին:

Կ՛ուզե՞ս ստանալ զգալի հպումն Յիսուսի, վար առ Բու դիմակդ, Բու վէս ինքնութիւնդ: Այն Ինչ որ կը ներկայացնես աշխարհի, որպէս թէ *դուն ինքդ ես*, լաւ գիտես որ այդ Բու երեւոյթդ, միակ դիմակդ է, որուն ետին *դուն ինքդ* ուրիշ անձ մըն՝ ես: Ապաշխարե՛ Յիսուսի ոտքերուն առջեւ նման Զա՛քէոսի կամ Մարիամ Մագթաղէնացիի: Նայէ վե՛ր Յիսուսի աչքերուն: Տե՛ս Անոր նայուածքին սիրավառ շնորհը, կարեկցութիւնը և սէրը որպէս թողութիւն ու մեղքերու ներում որ դէպի քեզ կը հոսի: Տե՛ս Յիսուսի բիբերուն սիրոյ կայծը, թոյլ տուր որ Բու հայեացքդ ալ դպչի Անոր նայուածքին որ կարենաս բաժնեկցիլ Անոր խաղաղութեանը:

Կ՛ուզե՞ս ցոլացնել Յիսուսի դէմքը Բու կեանքիդ և ապրումիդ ընթացքին: Յիսուս Բու կեանքի ապրումի՞դ մէջ դասաւորէ: Յիսուսի դէմքը եթէ կը ճանչնաս, եթէ տեսած ես, եթէ Իր նայուածքը Բու բիբերուդ դպած է, Զինք դիւրաւ պիտի ճանչնաս, քեզի կարօտ անձերուն մէջ: Զեզմէ տկարին, քեզմէ աղքատին և քեզմէ աւելի նուաստ կարծուած, կեանքի արկածեալի՛ն մէջ: Հոն է Յիսուս, Ան կը դիտէ՛ քեզ, կը սպասէ որ օգնե՛ս Իրեն, նման Բարի

Սամարացիին և ամոհես կողոպտուածն ու լիւաժը: Կեանքի ճանապարհին վրայ ռեւէ ինկած վիրաւոր մը վերադարձնես տուն:

Յիսուս, ամէն օր, կը տեսնէ Իր Բովէն անօթի ու ծարաւ անցորդները: Ան կը տեսնէ նաեւ Բեզ ու զիս, ու կը նայի սիրոյ Բաղցր հրաւերով մը, ու երկարելով կեանքի անհատնում բաժակը, կ'ըսէ Բեզի.

**«Եթէ գիտնայի՜ր Աստուծոյ պարգեւը»**--Յով. Դ.11:

Կ'ուզե՞ս վստահիլ և ընկերանալ այս Գալիլեացիին որպէս աշակերտ: Կ'ուզե՞ս ստանալ կեանքի առաջնորդող աստղ մը: Կ'ուզե՞ս որ կեանքդ ըլլայ ճախրանք մը, տեսիլ մը և երաժշտութիւն:

Նայէ՛ Յիսուսի Դէմքին և ստացի՛ր հպո՛ւմն Անոր նայուածքին: Թող Բու կեանքդ ներշնչուի անհուն բերկրութեամբ Յիսուսի երկնաճաճանչ Նայուածքէն:

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

## ՅԱՒԻՆ ԻՄԱՍՏԸ

**Յաճախ հիւանդութիւնները եւ վիշտերը կ'օգնեն, որ տառապողը աւելի մօտեցնայ Աստուծոյ եւ ապաւինի Անոր հայրախնամ գթութեան:**

**Մեծ իմացականութիւնները, որոնք սնած են հաւատքով՝ կը խոստովանին երախտագիտութեամբ այս ճշմարտութիւնը:**

**Միլթըն՝ իր կտրութեան պատճառաւ յստակօրէն տեսաւ հաւատքի խորութիւններուն մէջ Աստուածային այս շնորհը ու երգեց Դրախտ Կորուսեալին մէջ իր հոգեկան մեծ յուզումները:**

**Մեծն փասքալ՝ մտաւ քրիստոնէութեան մէջ իր հիւանդութեան պատճառով եւ իր հնարած գիտերով դարձաւ մարդկութեան մեծ բարերարներէն մէկը:**

**Պեթովէն լսողութիւնը բոլորովին կորսնցնելէ ետք, իր երաժշտութիւնը ընդգրկեց աստուածային տարածութիւնները:**

**Յորը՝ ծանրակշիռ կորուստներէ եւ չարչարալից կեանքէ մը ետք, արժանացաւ առաքինութեան երկնապարգեւ դափնեպսակին:**

ՎԱՐԴԱՆ Ա. ՔԶՆՅ. ՏԻԻԼԿԵՐԵԱՆ

«Մանրավէպեր»

էջ 117

### ՍԱՐՏԱՐԱՊԱՏԵԱՆ ՈԳԻՈՎ

Դարձեալ յարգանքով կը խոնարհինք անթառամ յիշատակին առջեւ մեր ժամանակակից պատմութեան քաջ Վարդաններուն՝ Սարտարապատի գոյամարտի հերոսներուն, ներշնչուելու համար անոնց նուիրումին վսեմութենէն եւ կրկին անգամ վերբերելու իմաստն ու արժէքը պատմական բախտորոշ դէպքի մը, ու տեղի ունեցաւ ութսուն եւ մէկ տարիներ առաջ:

Երբ մեր աչքին առջեւ բերենք Ապրիլեան Եղեռնին եւ անոր յաջորդող երեք տարիներու ընթացքին թուրքին՝ մեր ժողովուրդի մնացորդացը բնաջնջելու եւ Արեւելեան Հայաստանը գրաւելու ճիգերը, Եւրոպայի այդպէս կոչուած մեր Վեժ Դաշնակիցներու ապաբառոյ շահադիտութիւնը եւ ընդհանրապէս հայավնաս քաղաքականութիւնը, նորակազմ Սովետական Իշխանութեան բարեկամեցողութեան ընկերացող անգոր միջամտութիւնը՝ ի նպաստ Հայ Դատին, Կովկասի մեր հարեւաններուն անհատատարմութիւնը եւ նենգամտութիւնը, եւ այդ բոլորին դիմաց մեր ղեկավարութեան դիրախաւան բարեմտութիւնը եւ քաղաքական ծանրակշիռ իրադարձութեանց առընչութեամբ ճիշդ՝ որոշումը տալու անփորձառութիւնը, կ'ունենանք այդ շրջանի մեր ազգային քաղաքական կեանքին տրոտում պատկերը:

Այդ բոլորին ընդմէջէն, որպէս ռզելիմացնող սրտապնդիչ իրականութիւն՝ կ'անջատուի եւ մեր հիացումին, յարգանքին եւ հպարտանքին դէմ կը ցցուի փառքը Սարտարապատի Դիցազնամարտին, որ վերահասատետեց մեր ազգային ինքնայարգանքը, բոցավտեց մեր հայրենասիրութիւնը, եւ անգամ մը եւս փաստեց, որ մենք սպանդանոց տարուող ոչխարներու հօտ մը չենք եւ մեզմէ ամէն մէկը, առանձին եւ միասին՝ գիտէ կռուիլ, ապրիլ եւ ի հարկին մեռնիլ մեր հայրենիքին եւ ազգային նուիրականութիւններու պաշտպանութեան ի խնդիր:

1917ին, Հոկտեմբերեան Համայնավար Յեղափոխութեան հետեւանքով, Ռուս գործը լքեց իր դիրքերը եւ անապարանքով հեռացաւ Կովկասէն եւ Արեւելեան Հայաստանէն՝ իր ետին քաղաքական եւ ռազմական պարապ մը ձգելով: Ուժաքամ հայութիւնը անգոր էր այդ լայն տարածութեան տիրանալու: Օգտուելով այս կացութենէն, թիւրքերը, 1918 Յունուարի կիսուն, խզեցին զինադադարը եւ սկսան դէպի արեւելք յառաջանալ: Իրենց ծրագիրն էր, կարելի փութով գրաւել Կովկասը եւ իրենց դաշնակից գերմաններէն առաջ հասնիլ Պաքուի նախահորերը: Զօր. Անդրանիկի ուժերը անբաւարար էին կասեցնելու թրքական յառաջխաղացքը, եւ իրարու ետեւ Երզնկան, Էրզրումը, Սարըղամիշը, Պաթումը, Կարսը, Ալեքսանդրապօլը, անցան ձեռքը թիւրք բանակին որ Մայիսի կիսուն Արարատեան դաշտը հասաւ:

Թրքական զինուորական ուժին վերին հրամանատար՝ Էնվեր փաշան կ'որոշէ ճոր եւ ընդհանուր յարձակողականի մը անցնիլ: Ըստ այս ծրագրին, իր բանակին ձախ թելը պիտի գրաւէր Թիֆլիսը, կեդրոնի ուժերը պիտի առնէին Արարատեան դաշտը եւ Սեւանի աւազանը, այդ կերպով, վերջնականապէս խեղդելու համար Հայ ժողովուրդը: Իսկ աջ թելը՝ պիտի ճեղքէր հայկական գաւառները ու պիտի գրաւէր Պաքուն:

Ալեքսանդրապոլեն դէպի Երեւան շարժող Ծեփի փաշայի ինը հազարնոց բանակը 21 Մայիս 1918ին Արարատեան դաշտ կը մտնէ եւ առանց ընդհարումի կը գրաւէ Սարտարապատ գիւղը եւ կայարանը ու կը պատրաստուի Երեւանի վրայ քալելու եւ կը սկսի հայութեան մահու կեցաց պաքարը:

Յիշողութեանս մէջ, անցնելիօրէն դրոշմուած է Երուսաղէմի Ս. Թարգմանչաց Վարժարանի մէջ Սարտարապատի Հեռոսամարտին մասին պատմութեան դասս: Ուսուցիչս, վանեցի թունդ հայրենասէր եկեղեցական մը, որ ականատես եղած էր կոռուին, բոցաշունչ բառերով մեզի պատմեց առասպելանման պատմութիւնը նակատամարտին: Կոռի նախօրէին, երբ թրքական հսկայ բանակը դիրք կը բռնէ փոքրիկ հայկական բանակին դէմ, Հայ սպարապետը, կռահելով սպառնացող լուրջ վտանգը, սպայի մը միջոցաւ լուր կը դրկէ Հայոց Հայրապետին եւ կը խնդրէ որ հեռանայ Էջմիածինէն: Վշտահար Հայրապետը, ցասումով կը գոչէ. “Ս. Էջմիածինէն մէկ թիզ իսկ չեմ հեռանար: Եթէ սպաննուիմ, կը նախընտրեմ այս սրբատեղիին մէջ նահատակուիլ”: Եւ հրահանգ կուտայ որ՝ հնչեցնեն Էջմիածնի զանգակները: Երեք օր, գիշեր եւ ցերեկ շարունակ, կը հնչեն Հայաստանի բոլոր եկեղեցիներուն զանգակները: Կաթողիկոսին անգիջող կեցումքէն եւ խօսքերէն ազդուած, Ազգային Խորհուրդի նախագահը՝ Երեւանի մէջ խուռն բազմութեան կը բացատրէ ծանրակշիռ կացութիւնը եւ կոչ կ’ուղղէ բոլորին՝ զենք առնել ու նակատ երթալ եւ միանալ բանակին: Հայ մայր մը իր երեք կտրիճները կը յանձնէ նախագահին եւ կ’ըսէ “երեք զաւակ ունիմ, երեքն ալ կը յանձնեմ քեզի մեր հայրենիքին պաշտպանութեան համար: Եթէ տասը զաւակ ունեցած ըլլայի, տասն ալ հայրենիքիս պիտի նուիրէի”:

Այդ նակատագրական պահուն Հայ ժողովուրդի գոյատեւման եւ ինքնապաշտպանութեան բնագոյն կը հասնի իր գագաթնակէտին: Հայրենասիրական հզօր զգացումէ մը մղուած հայեր, այդ եւ կին, ծերունի, չափահաս, երիտասարդ եւ պատանի, եկեղեցական եւ աշխարհական, մտաւորական, շինական եւ բանուոր, կամուր, գաղթական, կուսակցական եւ անկուսակցական, բոլորը, բոլորը, Հայաստանի զանազան կողմերէն դէպի ռազմաճակատ կը վազեն. կը միանան չորս հազարնոց հայկական բանակին եւ կը խտացնեն շարքերը, եւ օգնութեամբ մեր նախնեաց ոգիներուն ու յարաւէզներուն, կրանիթեայ ապառաժի մը նման կը կանգնին թշնամիին դէմ ու թույլ չեն տար որ ան մէկ թիզ իսկ յառաջանայ: Եւ ապա բոլորը, մէկ սիրտ եւ մէկ մարմին կը յարձակին թշնամիին վրայ որ լեղապատառ կը փախչի ռազմադաշտէն:

Պատմական իրողութիւն է որ Սարտարապատի ճակատամարտը սկսաւ 22 Մայիսին, հրամանատարութեամբ զօր. Դանիէլ Բէկ Փիրումեանին եւ շարունակուեցաւ մինչեւ 26 Մայիս ու աւարտեցաւ Հայ զօրքին եւ ամբողջ հայութեան յաղթանակով: Ծեփի փաշային բանակը չարաչար պարտուեցաւ եւ ետ դէպի Ալեքսանդրապոլ նահանջեց, ռազմադաշտին վրայ 3500 մեռեալ ձգելով: 22 Մայիսին կատաղի կռիւներ մղուեցան նաեւ Պաշ Ապարանի մէջ եւ վերջացան թրքական բանակին այդ թեւին ջախջախումով: 24 – 28 Մայիսին Ղարաքիլիսայի նակատին վրայ Հայ բանակը երեք օր խափանեց թիւրք բանակին յառաջխաղացքը եւ մեծ կորուստներ պատճառեց անոր՝ նախքան մինչեւ Շուլաւեր (Շահումեան) հասնիլը:

Ահազանգի զանգերը ամենուրեք վերածուեցան յաղթանակի ղօղանջներու։ Սարտարապատի հերոսամարտը դարձաւ հայրենիքի պաշտպանութեան եւ փրկութեան ու ազգային միասնութեան, զոհաբերութեան եւ հայրենասիրութեան խորհրդանշիչը։ Մեր արիւնոտ, այլ սակայն հերոսական պատմութեան ամէնէն վսեմ եւ բախտորոշ աքթերէն մին, ուր ինքը, ամբողջ Հայ ժողովուրդը հերոսացաւ։ Եւ վեց դարերու անտերմելութեան շրջանին, Հայ ժողովուրդի մշտաբան պահապանը՝ Հայաստանեայց Եկեղեցին, իր քաջակորով Գեորգ Ե. Երանաշնորհ Հայրապետով, այս ճգնաժամին ալ օգնութեան հասաւ, ամրապնդեց մեր կամքը, լուսաւորեց մեր ուղին եւ մեզ դէպի յաղթանակ առաջնորդեց։

Ապրող ամէն արարածի կեանքին մէջ ամէնէն հիմնական բնագոյն, գոյատեւելու բնագոյն է։ Խորունկ համոզումս է որ Հայ ժողովուրդը իր այդ բնագոյին աղընթե՛ր օժտուած է նաեւ ազգօրէն, հայօրէն ապրելու շատ բացառիկ կամքով մը, որ ամէնէն յուսահատական պայմաններուն մէջ իսկ իրեն ապահոված է իր ապրելու իրաւունքը։ Այլապէս, ինչպէ՛ս բացատրել հազարամեակներով մեր գոյատեւումը, երբ մեզմէ շատ աւելի բազմաթիւ, հզօր եւ հարուստ ազգեր ընդմիշտ անհետացեր են, մինչդէռ մենք, տակաւին կանք ու կը մնանք։

Սարտարապատի Հերոսամարտը, շրջեց մեր պատմութեան ընթացքը այն պահուն՝ երբ մեր պապեանական հողին վերջին մնացորդին կորուստով պիտի դատապարտուէինք անհայրենիք մարդոց հաւաքականութեան վերածուելու։ Եթէ տարած չլլայինք Սարտարապատի յաղթանակը, եւ մեր հողը խոյս տուած ըլլար մեր ոտքերուն տակէն, ինչպէ՛ս պիտի կարենայինք շէ Մայիսին հռչակել՝ վեց դարերու ընդհատումէն ետք Հայ Պետականութեան վերահաստատումը եւ Հայաստանի առաջին Հանրապետութեան հիմնադրումը։ Անոնք որ կը պնդեն թէ Մայիս շէր թիրաքին նուէրն է մեզի, կ'անարգեն թափուած սուրբ արիւնը մեր նահատակներուն։ Սարտարապատ եւ Մայիս շէր, իրարմով ամբողջութիւն մը կը կազմեն եւ կ'իմաստաւորուին։

Շնորհիւ Սարտարապատի յաղթանակին, վեց դարերու ստրկութենէն ետք, երկու տարիներու ասուպային նշույլումին յաջորդող եօթանասուն տարիներու պատանդութենէն յետոյ, ութը տարիներէ իվեր ունինք մեր ազատ եւ անկախ Հայաստանի երրորդ Հանրապետութիւնը, որ պաշտօնապէս մաս կը կազմէ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան՝ համադաս անդամի իրաւունքներով։ Մենք, տէրն ենք մեր հողին եւ մեր նախատգնարին եւ աշխարհով մէկ ցրուած հայերս, կը գիտակցինք եւ կը զգանք որ հայրենիք ունինք, անտուն պանդուխտներ չենք այլեւս։ Եւ այդ հայրենիքը բոլորիս, ամբողջ հայութեան հայրենիքն է մեր հայրենի իշխանութիւնը ընդունի կամ ոչ։

Սարտարապատի ահազանգը, դժբաղդաբար, այսօր ալ կը հնչէ մեր հայրենիքին ներկայ քաղաքական, տնտեսական, ընկերա-բարոյական գետնի վրայ՝ տարապայման բերումներու հետեւանքով։ Հանրապետութեան հիմնադրումի օրերու մեր խանդավառութիւններէն եւ ակնկալութիւններուն կերտած վարդազոյն պատկերը, այսօր, տօգունած է եւ օտարամիտ բացասական ազդեցութիւններ կը թուին աղարտած ըլլալ մեր ցեղային նկարագիրը։ Ներկայ ժամանակներու սանձարձակութեան մէջ՝ տարանջատուած խորհրդային իրաւակարգէն՝ ժառանգուած թերութիւններն ու մեղքերը աւելի կատաղիօրէն կը կտցախարեն մեր ազգային բարոյականը եւ աշխատանքի բարոյագիտութիւնը (work ethics)։ Արդի դարուն առաջին եւ վերջին

քաղաքում երկու անգամ առիթը ունեցանք տիրանալու մեր անկախության: Արտաքին քաղաքականության մէջ ոչ մէկ անհետատես քաջ եւ մեր ազգային կեանքին մէջ՝ ոչ մէկ պատակտում եւ սայթաքում պէտք է վտանգեն մեր հայրենիքին անկախութիւնը, որուն համար այնքան սուրբ արիւն թափուած է:

Երբ, մեր հայրենաբնակ հարազատները, ահաւոր զոհանքներու տոկալով կը պահեն եւ կը պահպանեն մեր Մայր Հայրենիքը, երբ, Արցախի մէջ հայ կտրիւններ իրենց արիւնով կը գրեն մեր պատմութեան նորագոյն դիւցազնութեան էջերը, ամէն հայու նւիրական պարտականութիւնն է զօրակցիլ անոնց եւ հաւատքով ու նւիրումով գործնապէս մասնակցիլ հայրենիքի վերակերտումի աշխատանքին: Անաշատօրէն քննադատենք վերէն վար բոլոր անոնք, որոնք իրենց անպարկեշտութեամբ, անձնասիրութեամբ եւ ծուլութեամբ կը դաւանան իրենց կոչումին մեր հայրենիքին մէջ: Բայց երբեք չզլանանք մեր բարոյական եր նիւթական աջակցութիւնը: Հայրենի ղեկավարութեան պիտի չպակսի խոնամամտութիւնը եւ բարոյական քաջութիւնը ունկնդրելու մեր հայրենիքին բարօրութիւնը ցանկացող Սփիւղաբախտութեան անկեղծ ձայնին:

Ներշնչուած Սարտարապատի հերոսներուն օրինակէն, թող մեր Մայր Հայրենիքը մեզի համար ամէն բանէ վեր՝ գերագոյն նւիրականութիւնը ըլլայ: Հեռու մեզմէ անձնական կամ հատուածական ամէն զազիր նկատում, վհատութիւն եւ վերապահութիւն մեր հայրենիքին հանդէպ, եւ, անտարբերութիւն, ընկրկում, ուրացում մեր ազգային կեանքին մէջ:

Մեր կեանքին ամէնէն ազնիւ եւ վսեմ հաւաքական աշխատանքը կատարած պիտի ըլլանք եթէ Սփիւղի մէջ ամենուրեք՝ լծուինք հայապահպանումի եւ հայրենապահպանումի կենսական, գործին: Հետեւինք Գէորգ Ե. Հայրապետի օրինակին, մենք ալ ամէն տեղ եւ ամէն առիթով յայտարարենք. "մէկ թիզ չենք զիջիր մեր հայկականութենէն":

Փառք եւ պատիւ Սարտարապատի յաղթանակը կերտած մեր հերոսներուն:

Թող մեր ազգին կեանքին մէջ, բոլոր ահազանգները միշտ վերածուին Սարտարապատեան յաղթական զօրանջներու:

ԿԱՐՊԻՍ ԵՍՍՅԵԱՆ



## ՍՓԻԻՌԻ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ\*

Համառոտ ընդհանուր ակնարկ

Ամերիկահայ վարժարանը գոյութիւն ունի 1964էն ի վեր, երբ Քալիֆորնիոյ մէջ, Հովիտի «Ֆերահեան» Ազգային վարժարանը սկսաւ ընդունել առաջին աշակերտները: Յաջորդ տարիներուն դպրոցներու թիւը բազմացաւ՝ զգալիօրէն աճող Հայ աշակերտներուն ազգային կարիքները հոգալու համար:

Եթէ ազգային մտահոգութիւնները սկզբնական տարիներուն կը հանդիսանային Հիմնական խթանը վարժարաններու Հիմնադրութեան, կարելի չէ նաեւ անտեսել իրողութիւնը Հայ դպրոցին ընձեռած ընկերային առումով ապահով միջավայրին, որ իր կարեւոր ազդեցութիւնը ունեցաւ ծնողներու իրենց զաւակները Հայկական վարժարան ուղարկելու որոշումին վրայ: Այդ երկրորդական ազդակը, որքան ալ ունենար իր դրական ազդեցութիւնը, բարեբախտաբար չէր հանդիսանար էական տարբերութիւնը Հայկական եւ Հանրային դպրոցներու միջեւ:

Հայ դպրոցին գոյութեան պատճառը առաջին իսկ օրէն՝ զայն Հիմնողներու մտքին ու ծրագրային աշխատանքներուն մէջ, միայն մէկն էր՝ Միացեալ Նահանգներու մէջ աճող սերունդներուն ջամբել ազգային կրթութիւն՝ Հայոց Լեզուի, Գրականութեան ու Պատմութեան ճամբով ապահովելու համար ազգային դիմագիծը նոր սերունդներուն:

Այդ ուղղութեամբ նիւթական միջոցները ոչ միայն չխնայուեցան, այլեւ գրեթէ ոչինչէն ստեղծուեցան, անգամ մը եւս Հաստատելու զոհողութեան ոգին նախաձեռնող ղեկավար մարմիններուն եւ ժողովուրդին ընդհանրապէս:

Երեսունըհինգ տարիներու հեռաւորութենէն դիտած, երբ փորձ կ'ըլլայ արժեւորելու սկզբնական տարիներու ակնկալութիւնները, հեռահայեաց նպատակները եւ գործնական իրագործումները, արդիւնքը խառն է:

Հայ վարժարանները բաւականաչափ յաջողած են Հայ աշակերտի համալսարան ընդունուելու կրթական ծրագիրներուն իրագործման մէջ: Յաջողութեան նոյն տարողութիւնը սակայն չենք տեսներ Հայոց Լեզուի ու Պատմութեան ընկալումին մէջ, թէեւ կարելի չէ կասկածի տակ առնել 35 տարուան չրջանաւարտներու ազգային ոգին: Ամբողջութեամբ վարժարաններու թերացումին կարելի չէ վերագրել այս արդիւնքը, որուն գոյառման համար աշակերտութեան ծնողները պէտք է ստանձնեն պատասխանատուութեան նշանակալից մէկ բաժին:

Իրական պատկերը այս ըլլալով մէկտեղ, յառաջիկայ տարիները կը ներկայացնեն առիթը քննարկելու գոյութիւն ունեցող նուաճումները եւ ըստ այնմ արագգոյացնելու կատարելու, որպէսզի կարելի ըլլայ ճշգրտումներ մտցնել Հայ վարժարաններու առաքելութեան իրականացման գործընթացին վրայ՝ Հիմնական մօտեցումը կամ որոշումը ըլլալով այն

պնդումը, թէ առանց հայոց լեզուին տիրապետելու կարելի չէ ապահովել հայ սերունդներու ազգային դիմագծությունը: Այս առաքելությունը նկատի կ'առնուի եւ անոր գործընթացին ճշդումները կը կատարուին անկախ հայ պետականութեան իրականութեան ընդհանուր հեռապատկերին մէջ: Այսպիսով՝ հայոց անկախ պետականութեան պատասխանատուութեան կ'անցնի հայոց լեզուի, գրականութեան ու պատմութեան վճռորոշ դերին քննարկումը՝ սահմանելով անոր առանցքային ազդեցությունը Հայրենիք-Սփրփոք փոխ-յարաբերությունաց ամրակայման վրայ:

## Ներածական

Կ'ուզեմ անդրադառնալ երեւոյթի մը, որ աւելի չեչտուած է Միացեալ Նահանգներու արեւելեան ամերիկայի, ուր մեր գաղութները աւելի հին են եւ համարկումը տեղական ընկերութեան հետ աւելի յառաջացած: Հոն եւս եկեղեցին տիրապետող եւ ժողովուրդին մէջ ամենէն տարածուն ազգային հաստատությունն է: Իբր այդպիսին քաջատեղեակ է ժողովրդի մէջ տեղի ունեցող խմորումներէն, կեցածքներու փոփոխություններէն: Այլ խօսքով՝ եկեղեցին աւելի մօտէն կը հետեւի մեր ժողովուրդի ազգային բազմաբաղկի կշիռներին:

Այս երեւոյթին փաստը չօգտփելի դարձած է, երբ խօսակցություններու ընթացքին յաճախ կը լսենք, թէ եկեղեցական արարողությունեան լեզուն ոչ միայն պէտք է վերածել աշխարհաբարի, այլեւ՝ ուղղակի թարգմանել, որովհետեւ հաւատացեալը, որ եկեղեցի կ'երթայ ու հայերէսին հատ ու կտուր նախադասություններէ անդին տեղեակ չէ, անոր համար աշխարհաբարն ու գրաբարը նոյն կշիռը ունին՝ երկուքն ալ անհասկնալի կը մնան: Հարցը չի վերջանար աշխարհաբարի օգտագործումով, այլ այդ երեւոյթը կը հանդիսանայ առաջին քայլը յաջորդ ու պահանջող փոփոխությունն՝ թէ եկեղեցական լեզուն, յատկապէս Պատարագի խորհրդակատարությունը, պէտք է վերածել անգլերէնի: Կղերականներէն ոմանք կը մերժեն ընդունիլ այս երեւոյթը, բայց այդ մերժումը իրականությունը չի փոխեր: Մերժումը պարզապէս կը միտի խօսակցին յայտնած կասկածներն ու վերապահումները փարատելու՝ յաճախ նոյնիսկ ճամարտությունը ծածկելու գնով: Քարոզներու չ'երթար ակնարկությունը, այլ՝ ուղղակիորէն Պատարագին: Ունկնդրած եմ արարողություններ, որոնց ընթացքին պատարագիչը ինքն իրեն արտօնած է անգլերէնի թարգմանել Պատարագամատուցէն հատուածներ եւ այդպէս գործածել: Անպէս կը թուի, թէ եկեղեցին՝ ըլլալով աւելի մօտիկ մեր ժողովրդին, կը տեսնէ փոփոխությունը եւ սկսած է հարկ եղած միջոցներու դիմել, չկորսնցնելու համար ժողովուրդը: Այլ խօսքով՝ եկեղեցին տեղատուութեան մէջ է: Մեր եկեղեցին վերահաս վտանգին տակն է իր էությունը - իբրեւ անքակտելի պատուար ազգային ինքնությունեան - կորսնցնելու եւ վերածուելու որեւէ կրօնական հաստատություն:

Հասած ենք ժամանակահատուածի մը, երբ դերերը փոխուած կը թուին ըլլալ՝ դպրոցը պիտի փրկէ մեր եկեղեցւոյ ազգային դիմագիծը, փոխանակ չարունակելու պատմական աւանդությունը հակառակին՝ թէ եկեղեցին հովանին է ու պահապանը հայ դպրոցի ազգային դիմագծություն:

### Առաքելութեան մը կարելի շրջափոխումը

Եկեղեցւոյ մէջ սկսած երեւոյթը մղած կ'երեւի ըլլալ կարգ մը անհատներու մտածելու հայ դպրոցի առաքելութեան վերանայման մասին, հայերէնի հանդէպ համատարած անտարբերութենէն տարուած: Տրամաբանութիւնը այն է, որ եթէ եկեղեցին սկսած է տեղի տալ իր այժմէականութիւնն ու անհրաժեշտութիւնը պահելու համար, ինչո՞ւ ոչ դպրոցը: Եւ, ուրեմն, առաջին թիրախը կը հանդիսանայ հայերէնը, այս պարագային արեւմտահայերէնը: Այս վերջին հաստատումը կարեւոր է, որովհետեւ արեւելահայերէնը իր տէրը ունի՝ ազատ ու անկախ Հայաստանի Պետութիւնը: Արեւմտահայերէնը տակաւին որդեգրի դերին մէջ իսկ չէ այդ Պետութեան համար:

Հետեւաբար, կը տրամաբանեն հայերէնի փոխարինման ջատագովները, եթէ ժողովուրդը չի հետաքրքրուիր իր լեզուով, որքա՞ն ճիշդ է այդ լեզուին ուսուցման համար հսկայական գումարներ ծախսել, երբ զանգուածներու մօտ կարելի է ազգային ոգին աւելի նուազ պիւտճէնքով վառ պահել, որովհետեւ օտար լեզուներով արդէն բաւականաչափ թարգմանուած կամ բնագիր հայկական գրականութիւն գոյութիւն ունի: Կարելի է անշուշտ ընդունիլ այս մօտեցումը եւ ազգային ընկրկումը արդարացնելու բազմաթիւ պատրուակներ գտնել եւ... իբր արդիւնք նաեւ կորսնցնել մեր ժողովուրդը:

Արդ, անցնելէ առաջ հաշուեկշռի քննարկումին, անհրաժեշտ է նախ կատարել գնահատումը մեր որոշումներուն՝ մեր դպրոցներու հիմնական առաքելութիւնը վերասահմանելու ու վերահաստատելու արտումով: Ոչ մէկ փորձ պէտք է ըլլայ լեզուին հետ խաղալու: Հակառակ բոլոր դժգոհութիւններուն ու դժուարութիւններուն, հայերէն լեզուն պէտք է համապարփակ կերպով ուսուցուի ի հեճուկս գանգատներուն, որովհետեւ առանց հայերէն լեզուի՝ հայ ժողովուրդ չենք ունենար, այլ կ'ունենանք լաւագոյն պարագային հայասէր... օտարներ, գործածած ըլլալու համար ողբացեալ երաժշտ Ռուբիկ Գրիգորեանի մէկ պատկերը: Ուրեմն, մերժելի է, ազգային պատասխանատուութենէ չի թելադրուիր եւ ձախողութեան պէտք է մատնել որեւէ փորձ, որ հայ դպրոցի հայերէնի ուսուցման օճախի առաքելութիւնը կը փորձէ վերատեսութեան ենթարկել՝ արդիականութեան հետեւելու պատրուակներով:

### Հայոց լեզուի ուսուցման 35ամեայ հաշուեկշիռ

#### Հաստատում մը

Մեր շրջանաւարտ դասարանի աշակերտները այս տարի իրենց տարեկան պտոյտը անցուցին Հայաստանի մէջ ու վերադարձին չտեսայ մէկը, որ արտառոց կերպով քննադատէր կամ դժգոհէր: Ընդհակառակը, երբ իրենցմէ մէկ քանին կը հարցաքննուէին «*Լոս Անճելլոս Թայմզ*»-ի թղթակցին կողմէ, կարելի չէր աւելի լաւ պատասխան սպասել եւ... Հայաստանի բնութեան մասին աւելի լաւ թուրիստական ծանուցում կատարել: Ճիշդ է, բոլորը փափաք չեն յայտնած հոն փոխադրուելու, բայց

իրենց սէրը նուազ չէ ու իրենց Հաստատամտութիւնը նուազ գորաւոր չէ անոնցմէ, որոնք կը խօսին Հոն երթալու եւ աշխատելու երկարատեւ չըջանի Համար՝ Հայրենիքին, իրենց բառերով «մեր երկրին» օգտակար ըլլալու առաջադրանքով:

Այս Հաստատումը կարելոր է, որպէսզի ոեւէ մէկու մտքին մէջ կասկած չմնայ, թէ մեր դպրոցներու աշակերտները իրենց Հայրենասիրութիւնը որեւէ խումբի կամ Հատուածի գիջելու պարտադրանքին տակ չեն: «Ֆերահեան»ի մէջ յաջողած ենք, աւելի ճիշդ, մեր պատմութեան ուսուցիչները յաջողած են Հայրենասիրական կրակը արծարծել Հայ աշակերտներուն մէջ:

### *Հայերէնի տիրապետումին ակնկալուած չափանիշը*

Յնամայ Հաշուելիովի արժեւորման ատեն թերեւ անհրաժեշտ է որոշել, թէ ինչ կ'ակնկալենք Հայ աշակերտէն, ինչ են պահանջները Հայերէնագիտութեան սահմաններուն: Տարրական խօսակցական լեզու՝, թէ ատկէ բաւական անդին՝ ճշգրիտ գործածութիւնը լեզուին, բառամթերքի Հարստութիւն, գրականութեան ու պատմութեան որոշ գիտութիւն, կարողութիւնը՝ գնահատելու կարողացուած կտորի մը լեզուական, ոճային ու գրական ստորոգելիները: Անհատներ՝ որոնք կարենան տիրապետել լեզուին ու զայն վարպետօրէն ու ինքնավստահ կերպով գործածել: Այս բոլորն ալ անհրաժեշտ են, որպէսզի կարելի ըլլայ ապահովել Հայերէնի գոյատեւումը, անոր կենսունակութիւնն ու ճկունութիւնը եւ դիմագրաւելու նոր Հայերէն Համագոր բառեր գտնելու պահանջը՝ օրէ-օր բազմացող գիտական նորութիւնները բացատրելու կամ Համապատասխան գիտական նոր բառերը զարգացնելու համար:

### *Դիտարկումներ*

1.- Հայ վարժարաններէ չըջանաւարտ եղած կամ տակաւին ուսանող Հայ աշակերտներէն ստացուած առաջին, անմիջական տպաւորութիւնը այն է, որ անոնք՝ երբ կը խօսին իրենց անձանթ կամ իրենցմէ տարեց անհատներու Հետ, ընդհանրապէս կ'անգիտանան, թէ պէտք է յոգնակիով դիմեն իրենց խօսակցին: Իրենցը անպայման անքաղաքավարութիւն չէ, թէեւ գիտակցաբար այդպիսիները կան եւ անոնց մասին չէ ակնարկութիւնը, պարզապէս ստուար զանգուածը կ'անգիտանայ այդ պարտադիր նրբութիւնը: Հետաքրքրականը Հոն է, որ որքան ենթական Հին չըջանաւարտ է Հայ վարժարանէն, այնքան նուազ է կամ ոչ-յաճախողէպ այդ երեւոյթը: Թերեւ կարելոր չնկատուի ըստածը, բայց կարելոր է այնքանով, որ կը տանի Հիմնական ախտանշումի մը: Յոգնակիի-եզակիի այդ անտեղեակութիւնը աւելի կը շեշտուի, երբ խօսակցութիւնը չարունակուի եւ անհրաժեշտ դառնան բառերու Հոլովումն ու բայերու խոնարհումը, որոնց ընթացքին երեւան կու գայ կարելոր չափով քերականական անգիտութիւն: Կրկին նոյնն է երեւոյթը՝ որքան տարիքոտ է խօսող անհատը, նոյնքան հազուադէպ է այդ լեզուական թերութիւնը անհատին մօտ: Այլ խօսքով՝ տարիներու ընթացքին տեղի է ունեցած լեզուական տեղատուութիւն մը, որ կը Հանդիսանայ Հիմնական հարցը Հայերէնի դասաւանդութեան մեր

վարժարաններէն ներս: Այս երեւոյթին երբ ակնարկուի, կը պատասխանուի, թէ երբ մանուկ մը լեզու ելլէ՝ քերականութենէ շատ բան չի հասկնար, բայց կը խօսի: Դիտողութիւնը սրամիտ ըլլալով մէկտեղ, ճիշդ չէ, այլապէս ոչ մէկ լեզուի դասաւանդութիւն պէտք պիտի ըլլար վարժարաններու մէջ: Միակ «մանուկը», որուն հանդիպած եմ եւ որ անսայթաք հայերէն է բարբառած Միսաք Մեծարենցի մէկ քերթուածին մէջ պատկերուած երեխան է, որ կը նկարագրէ թաղման թափօրը կամ արարողութիւնը: Բայց քանի՞ հատ Մեծարենց ենք ունեցած:

Պարզուող երեւոյթը կը մատնէ Հիմնական թերացում կամ մակերեսայնութիւն՝ քերականութեան ուսուցման մէջ: Կարելի չէ յաւակնիլ, թէ հայերէն կը դասաւանդենք ու մեր աշակերտներէն ճշգրիտ հայերէնի գործածութիւն պահանջել, երբ չենք հայթայթած կամ լաւ չէ հայթայթուած անհրաժեշտ գործիքը, որպէսզի անոնք կարենան լաւ գործածել լեզուն, որուն համար տուեալ վարժարանները կը յաճախեն:

2.- Յաճախ հայերէնի պահերուն, անխուսափելիօրէն կը ստեղծուին աղիթներ, երբ աշակերտը կը փորձէ բան մը բացատրել, բայց ամէն անգամ որ նեղի մատնուի՝ անմիջապէս կը դիմէ անգլերէնին: Այս կացութիւնը կը ստեղծուի նաեւ երբեմն շարադրութիւններու ընթերցման ատեն, երբ աշակերտը յանկարծ անգլերէն բառն է, որ կը գործածէ: Այլ խօսքով՝ աշակերտը արդէն իսկ, իր անգլիտակիցին մէջ, կը թուի կատարած ըլլալ անցումը դէպի անգլերէնը: Ուսուցիչը կամ ուսուցիչները երբեմն կը սրբագրեն, երբեմն իրենք կը դիմեն նոյն միջոցին հասկցուելու համար, բայց վերջին հաշուով հայերէնն է զոհը: Ցատկանշականօրէն այս երեւոյթը կը նշմարուի առաջին իսկ դասարանէն ու կը շնչուի յաջորդող մէկ քանի դասարաններուն մէջ, եւ երբ աշակերտները հասնին աւելի բարձր դասարաններ, սովորութիւնը արմատացած է արդէն եւ հայերէնի դասերը փաստօրէն կը վերածուին անգլերէնի կոճղին վրայ հայերէնի պատուաստումի փորձերուն: Եւ որովհետեւ ամէն պատուաստ չէ, որ յաջողութեամբ կրնայ ինքն իրմով ծրարակուիլ, նոյնը կը պատահի նաեւ հայերէնին: Կենսաբանական օրէնքները անխախտ կը մնան թէ՛ կենսաբանական փորձարկումներու եւ թէ՛ լեզուական փորձարկումներու համար:

Ջարմանալի իրականութիւն մը երեւան եկաւ, երբ մեր մանկապարտէզի եւ նախակրթարանի Ա.-Դ. կարգերու աշակերտները ելոյթ ունեցան Մայիս 28ի տօնակատարութեան ընթացքին: Արտասանեցին, երգեցին, հայերէնով թատերական չարք մը պատկերներ ներկայացուցին եւ ամբողջ տեսողութեան, բացառելով մատի վրայ համրուող քանի մը երեխաներ, գործածեցին հրաշալի հայերէն մը՝ զերծ ամէն կարգի անգլիաբանական չեղտադրումներէ: Դասարաններու մէջ, դասապահներուն, այդ հարազատութիւնը այդքան զօրաւոր կերպով նշմարելի չէ:

3.- Նկատելի է նաեւ տարբեր սովորութիւն մը: Աշակերտներուն կը տրամադրուի մօտ 20-25 վայրկեան՝ դասարանի մէջ շարադրութիւն գրելու համար: Երբ դիտել կը տրուի, թէ ինչպէ՞ս կարելի է աշակերտէն լաւ բան սպասել, երբ անհրաժեշտ ժամանակը չունի տան մէջ ամփոփուելու եւ պատրաստուելու շարադրութիւնը: Արդարացուցիչ պատասխանն է «տան մէջ

ծնողները ընդհանրապես կը գրեն չարադրութիւնները»: Անկախ այն իրականութենէն, թէ ծնողները գոյութիւն ունին իրենց զաւակներուն օգնելու համար, նման առիթներով ծնողները պիտի բացատրեն, թէ ինչ կը գրեն եւ աշակերտը ուզէ թէ չուզէ բան մը պիտի սորվի, նուազագոյնը հայերէն գրելու մեքենականութիւնը: Եթէ նոյնիսկ ծնող մը օգնէ, ատիկա արգելք պէտք չէ ըլլայ համապատասխան նիշը տալու աշակերտին, որպէսզի ծնողը տեսնէ, թէ ինչ կ'արժէ իր հայերէնը եւ թերեւս ինք եւս որոշէ ... ուշադիր ըլլալ ու վերաքաղի ենթարկէ ինքզինք ու աւելի լաւ սորվի մեր լեզուն: Կարելի չէ ակնկալել, որ աշակերտները գրել սորվին, եթէ իրենցմէ չի պահանջուիր անհրաժեշտ ժամանակը այդ լեզուն սորվելու:

Եթէ պիտի ընդունինք տրուող արդարացումը, թէ տան մէջ գրուած չարադրութիւնը ամպայման չի ցոլացներ աշակերտին ունակութիւնը, հանգիստըն պէտք է նաեւ հետեւցնել, թէ աշակերտի մը առած նիշը՝ հայերէնին մէջ, չի ցոլացներ անոր հայերէնագիտութիւնը: Ինչպէ՞ս կարելի է բացատրել գերազանցիկ նիշ մը՝ 90էն վեր 100ի վրայ, երբ աշակերտին տիրապետումը հայերէնին բաւականին սահմանափակ է լաւագոյն պարագային: Կ'ըսուի, թէ տուեալ աշակերտը այդ նիշը կը ստանայ, որովհետեւ իր ընկերներէն աւելի լաւ կը կատարէ իր պարտականութիւնը: Անգիտութեան վրայ յենած նուազագոյն հասարակ յայտարարին տրուած նոր սահմանումն է այդ բացատրութիւնը, որովհետեւ նիշ մը կը տրուի համաձայն աշակերտի տիրապետումին՝ լեզուին համապարփակ ստորոգելներով եւ ոչ թէ լեզուին՝ հայերէնին, տիրապետումը, գիտութեան ստորոգելները կ'իջեցուին աշակերտներու մակարդակին: Հոս տրուած նիշերը լաւագոյն պարագային կը թելադրեն նիշերու սղաճին ուղղակի համեմատումը աշակերտներու անտեղեակութեան կամ անգիտութեան հետ: Տարբեր ձեւով դրուած՝ գոյութիւն ունեցող նիշերն ու հայերէնի տիրապետումը իրարու հետ խոտոր կը համեմատին:

4.- Մինչեւ հիմա ականարկութիւնները կ'երթային վարժարաններէն ներս գոյութիւն ունեցող ազդականներուն, ուղղակիօրէն դպրոցի վարչութեան եւ ուսուցիչներուն: Կայ նաեւ էական գործոն մը, որ հաւանաբար ամէնէն կարեւոր ազդեցութիւնը ունի աշակերտին վրայ: Իր տունն է այդ ազդեցութեան գօտին:

Ծնողներ կան, որոնց համար հայերէնը տաղտուկ մըն է, որ աշակերտը պարտի ամբողջացնել չրջանաւարտ ըլլալու համար եւ յայտնի չէ, թէ իրենց դրդապատճառը ինչ է, երբ հայ վարժարան կը դրկեն իրենց զաւակները: Հայ վարժարանները յստակօրէն ըսած են, թէ հայ լեզուն ու ազգային պատմութեան գիտակցութիւնը անհրաժեշտաբար կը ջամբուին աշակերտութեան: Հակառակ այդ յստակ յայտարարութեան, ոմանց հոգը չէ, որ հայերէն կը սորվի՞ն թէ ոչ, եւ այդ անլուրջ մօտեցումը յայտնօրէն կ'արտայայտուի նաեւ տան մէջ աշակերտին ներկայութեան: Կրնանք երկարօրէն չաղակարտել հայ լեզուի անհրաժեշտութեան, անոր ուսուցման ձեւերուն եւայլնի մասին, սակայն հայ ծնողքն է ու հայ տունը, ուր հայերէնը պիտի ապրի ու մանաւանդ պիտի պարտադրուի: Կարելի չէ ակնկալել երեխայէ մը, որ մեր լեզուն գործածէ երբ իր աչքերուն առջեւ իր հայրն ու մայրը կ'ա՛մ չեն խօսիր եւ կամ կ'արհամարեն մեր լեզուն: Ուրեմն՝ այն մարդիկը, որոնք ատենը մէկ կարիքը կը զգան հայերէնի դասաւանդութեան

մասին պատգամներ տալու կամ թելադրություններ ընելու, հարկ է որ այդ պատգամները դրկեն տարբեր հասցեներով, հայ վարժարաններուն խնայելու համար իրենց բանսարկուի խուժանավարական լեզուագարությունը:

Դիպուկ պատկեր մը ծնողներու ունեցած դերին մասին թանձրացեալ ձեւով կը յատկացնէ ըսել ուզուածը: Զբօսանքի մը կը քալէի աշակերտներու մէջէն, երբ ականջիս հասաւ տաք խօսակցութեան մը արձագանգը: Աշակերտ մը, մօտ 13-14 տարեկան, լարումէն կարմրած դէմքով եւ ամբողջութեամբ կիզակէտուած խօսակցութեան վրայ, շրջապատէն բոլորովին կտրուած, գրեթէ տառացիօրէն եւ առանց ընդմիջելու, առանց անգլերէն բառ մ'իսկ գործածելու, շատ մաքուր, սահուն, յստակ ... Թրքերէնով կը վիճէր հաւանաբար իր մօր կամ իրեն մօտիկ անձի մը հետ: Պոլսահայ ընտանիքէ կու գար: Փաստօրէն, այդ թրքերէնը սորված էր տան մէջ: Արդ, հայերէնի ուսուցումը զգալիօրէն կը փոխուի դէպի լաւ, եթէ մեր ծնողները զայն գործածելու բժախնդրութիւնը ունենան: Մեր ջանքերը ի դերեւ կ'ելլեն, եթէ չունենանք ծնողներու անվերապահ ու բոլորամասէր զօրակցութիւնն ու աջակցութիւնը:

Պատասխանատուութիւն մըն է, որ դպրոց եւ տուն միասնաբար պէտք է վերցնեն, եթէ կ'ուզենք յաջողիլ եւ, նաեւ, եթէ մեր հրապարակային յայտարարութիւններուն ու պահանջներուն մէջ անկեղծ ենք:

5.- Յաճախ կը լսենք, թէ դասագիրքերը գրաւիչ կամ հրապուրիչ չեն աշակերտին համար: Այս դիտողութիւնը կարելի է վերապահութեամբ ընդունիլ, բայց արդարացուցիչ պատճառ չէ գոյութիւն ունեցող անբաւարարութեան համար: Էջադրումները, էջերու գեղարուեստական ներկայացումը կրնան ակնկալուած գեղեցկութիւնը չունենալ, բայց այդ չէ խնդրոյ առարկան: Ատոնք կարելի է սրբագրել եւ կամ տարբեր դասագրքեր գործածել: Օրինակ մը: Ութսունական թուականներուն էր, երբ ձեռքս անցաւ Հ.Բ.Ը.Մ.ի պաշտօնաթերթի՝ «Յուշարար»ին մէկ թիւը, որ կը տեղեկագրէր Բարեգործականի Հովանաւորութեան ներքեւ գտնուող վարժարաններու վիճակը: Ուշադրութիւնս գրաւողը «Դարուհի Յակոբեան» վարժարանի մասին գրուած մէկ պարբերութիւնն էր, ուր կ'ըսուէր, թէ այդ վարժարանի շարք մը դասարաններու աշակերտուհիները չէին հասկնար կամ դժուարութիւն կ'ունենային հասկնալու իրենց հայոց պատմութեան դասագրքին լեզուն: Դասագիրքը պատրաստուած էր ողբացեալ Սիմոն Սիմոնեանի ու Օննիկ Սարգիսեանի կողմէ: Մենք եւս նոյն գիրքը կը գործածէինք 1954-1955 տարեշրջանին եւ մեր ուսուցիչը այդ տարի Օննիկ Սարգիսեանն էր: Հայագէտներ չէինք այդ օրերուն կամ ասկէ ետք, բայց չեմ իյնը, թէ մեզմէ ոեւէ մէկը կը զանգատէր լեզուն չհասկնալէն: Այդ դասագիրքը ո՛չ գունաւոր էր եւ ո՛չ ալ գեղատիպ սուղ թուղթի վրայ տպուած, ինչպիսին են ներկայ դասագրքերը, բայց հայոց պատմութիւն սորվեցանք այդ գրքէն, ինչպէս նաեւ հայերէն ընթերցանութեան վարժութիւնը սաղմնաւորուեցաւ այդ օրերուն: Փաստօրէն հայերէնի զահավէժ էջըը ամերիկահայ վարժարաններու մենաշնորհը չէ:

**Հայերէնը եւ Հայոց Պատմութիւնը  
Անկախ Պետականութեան եւ Սփիւռքի  
Կենսունակ Գոյակցութեան Առանցք**

Այնքան ատեն, որ Հայաստանը անկախ ու ազատ չէր, արտերկրի Հայ վարժարանները կը Հանդիսանային ազգային ինքնութիւն ջամբող գլխաւոր կեդրոնները: Հայ վարժարանն էր Հայ նոր մշակոյթը պահողն ու կենսաւորողը: Այդ էական դերը տակաւին կը մնայ եւ յուսանք աւելի եւս կ'արմատաւորուի, քայքայ անկախ պետականութեան մը գոյատուրը արտերկրի Հայ վարժարանները կը դնէ բոլորովին չնախատեսուած ու նոր կարելիութեան առջեւ, նայած թէ Հայրենի պետութիւնը որքանով պիտի փորձէ, ջանայ ստանձնել նախաձեռնութիւնը լեզուական, ազգային ինքնութեան, մշակոյթի ու պատմութեան Համարկումին Սփիւռքի տարածքին: Հարցը կը վերաբերի ազգային կրթութեան Համարկուած ծրագրի մը յառաջացման, Հիմնուած մեսրոպեան ուղղագրութեան վրայ: Արդիւնքը՝ նման մօտեցումի մը, ժամանակի ընթացքին, Հաւանաբար ըլլայ միակտուր ու միացեալ Հայերէն մը, որ գործածական ըլլայ բոլորին Համար:

Ուղղագրութեան մասին եղած ակնարկը ուշադրութիւն գրաւելու կամ տարաբարծութիւնն ստեղծելու Համար չէ: Տեղեակ եմ այն դժկամակութենէն, որ կը տրիէ երկրին մէջ նման փոփոխութեան մը դէմ: Լսած եմ նաեւ կրթական նախկին նախարարին վերագրուած դիպուկ սրամտութիւնը, թէ «... ուղղագրութիւնը փոխելու պարագայում միանգամից կ'ունենանք անգրագէտ նախագահ եւ ժողովուրդ»:

Կայ անշուշտ տնտեսական գործօնը, թէ ահազին ծախսի կը կարօտի փոփոխումը: «Անգրագէտ» ըլլալու առարկութեան պատասխանը այն է, թէ Մանուկ Աբեղեանը, Մանանդեանը, Աճառեանը, Մալխասեանը եւ ուրիշներ մէկ օրէն միւսը «անգրագէտ»ներու չվերածուեցան քսանական թուականներուն եւ վստահ ենք, նաեւ, թէ այժմու մեր նախարարներն ու նախագահը չեն վերածուիր անգրագէտներու: Տնտեսական դժուարութիւններու պարագային Հոն իրապէս նկատի առնուելիք Հարց կայ, մանաւանդ ներկայ պայմաններուն մէջ: Այդ ալ կարելի է յաղթահարել՝ ուղղագրութեան վերահաստատումը կարելի է սկսիլ մանկապարտէզէն, երկրի բոլոր վարժարաններու մէջ եւ տարուէ տարի անցնիլ յաջորդ դասարաններուն եւ տասը-տասնըբերկու տարուան ժամանակաշրջանը բաւականաչափ երկար է, որպէսզի փոխանցումը եւ անոր Հետ կապուած ծախսերը ըլլան անգզալի: Ատկէ անկախ, կարելի է ակնկալել աւանդական մեր կուսակցութիւններէ՝ Հ.Յ.Դ.Էն, Հ.Ռ.Ա.Կ.Էն եւ Ս.Դ.Հ.Կ.Էն, որ իրենց պաշտօնաթերթերու մէջ գործածեն մեսրոպեան ուղղագրութիւնը, որովհետեւ ոչ ոք պիտի արգիլէ անոնց նման քայլ մը եւ պէտք ալ չունին մտահոգուելու ընթերցողներու թիւի նուազումէն, եթէ թերթերը դարձնեն Հետաքրքրական, ներկայանալի եւ տեղեկատուութեամբ ճոխ ու այլազան: Թէեւ ամէն մարդ մէկ օրէն միւսը պիտի չկարենայ տիրել նոր ուղղագրութեան, այդ Հրատարակութիւնները սակայն կ'ունենան բարեբար ազդեցութիւն մը զանգուածներո, ինչպէս նաեւ ...Նախագահին ու Նախարարին վրայ եւ ոչ ոք զիրենք պիտի ամբաստանէ ... անփառունակ անգլիտութեամբ:



Ուղղագրութեան փոփոխումի այս առաջարկը ինքնանպատակ չէ եւ նախադրեալն է յաջորդ առաջարկին: Հետեւեալն է մտահոգութիւնը: Հայերէնի, հայոց գրականութեան եւ պատմութեան ուսուցումը ձգտած է անհատներու եւ կամ վարժարաններու խնամակալ մարմիններու հայեցողութեան: Դասաւանդուած նիւթերը կը կրեն կողմնակցական շեշտաւորում եւ արդիւնքը կ'ըլլայ պատմական նոյն դէպքը կամ երբեմն նոյն գրողը ներկայացնել տարբեր երանգաւորումներով՝ նայած դասաւանդողներու գաղափարական հակումներուն: Այսօրեան ժամանակահատուածը առիթը կ'ընծայէ այս անյետաձգելի սրբագրումը կատարելու: Ունինք Գիտութիւններու Ազգային Ակադեմիան՝ իր համապատասխան բաժանմունքներով, գրականութեան, լեզուի եւ պատմութեան, որոնք կրնան ծրագրել գործակցութեամբ կամ ներդրումով արտերկրի համապատասխան մասնագէտներուն, եւ մշակել ու պատրաստել մանրակրկիտ կրթական ազգային ծրագիրը թէ՛ լեզուի, թէ՛ գրականութեան եւ թէ՛ պատմութեան՝ առաջին կարգէն մինչեւ աւարտական դասարաններու համար: Լեզուի պարագային արտերկրի համար նկատի ունինք արեւմտահայերէնը, իսկ գրականութեան պարագային նկատի պէտք է ունենալ մեր դասականներէն՝ Մեսրոպ Մաշտոցէն սկսեալ մինչեւ արդի ժամանակները եւ այնպէս մը ընել, որ արեւմտահայ ու արեւելահայ գրողները հաւասար թիւով եւ հաւասար կերպով ներկայացուին: Գալով պատմութեան, հիմնականին մէջ երկուութիւնները կը սկսին 1890ական թուականներէն աստիճանաբար ղեկավարուել չուրջ, եւ որովհետեւ ներկայիս պատմական արխիւները մատչելի են, կարելի է բաւականին աւարկայական պատմութիւն մը գրել եւ տալ գալիք սերունդներուն: Այսպիսի գործընթաց մը բաւականաչափ կը նպաստէ պատրաստութեանը սերունդներու, որոնք տեղեակ ըլլան անադարտ պատմութեան, ինչպէս նաեւ հաւասարակշռուած ու համապարփակ հայ գրականութեան:

Թելագրութիւնը աննպատակ ժամավաճառութիւն չէ, անկախ անկէ, որ այս ծրագիրը կը պատրաստէ ժողովուրդ մը, որուն համար լեզուն, գրականութիւնը եւ պատմութիւնը տարբերակներ չեն նոյն նիւթերուն. կը պատրաստէ սերունդներ, որոնք երկփեղկուած չեն ըլլար մեր մշակոյթի ուսուցման պատճառով: Հիմնական արդիւնքը հաւանաբար ըլլայ հետեւեալը. որեւէ ժամանակէ աւելի մեր օրերուն - եւ աւելիով յառաջիկայ տարիներուն - հաղորդակցութիւնները հսկայական արագութեամբ տեղի կ'ունենան. արտերկիր-Հայաստան երթեւեկը վերածուած է քանի մը ժամերու հարցի եւ յաճախակի, չփումները Սփիւղի անհատներու եւ հայրենաբնակներու միջեւ որեւէ ժամանակէ աւելի սերտ են, մօտիկ ու բազմաթիւ եւ անկարելի չէ, որ ի վերջոյ հայերէնը ինք բարեփոխուի եւ ունենանք մէկ ու միակ հայերէն մը: Հարցը համանագիրներով լեզու ստեղծելու մասին չէ: Արեւմտահայերէնն ու արեւելահայերէնը հայրապետական կոնդակներով առաջ չեկան, իսկ հիմա անկարելի է որ մեր լեզուները այլափոխման կամ բարեփոխման չենթարկուին: Հոս է, որ դասական ուղղագրութեան վերահաստատումը անհրաժեշտ կը դառնայ՝ վերջնականօրէն չաղկապելու համար մեր ժողովուրդին տարասփուռ ու հայրենաբնակ հատուածները:

Արդա՞ր է այսպիսի անկալութիւններ ունենալ պետութենէ մը, որ տնտեսապէս հազիւ ինքզինք կրնայ հոգալ: Արդար ըլլալը արդար է եւ ոչ

ալ է: Այս ակնկալությունը գործնականորեն իրագործելի գործընթաց մըն է՝ իր գործնական եւ դրական արդիւնքներով: Արդար եւ իրագործելի՝ եթէ պետութիւնը մտահոգուած է Սփիւռքի հայութիւնը պահելով ու Սփիւռքի ղեկավարութիւնը պատրաստ է ինքզինք ղիմագրաւելու եւ ճշդելու արտերկրի հիմնահարցերը՝ իրենց կարեւորութեան շարքով: Պետութեան համար, այս պարագային, երկքաղաքացիութեան հարց չկայ. կայ ժողովուրդի պահպանման հիմնահարցը, առանց որուն անորոշ է, թէ Պետութիւնը որո՞ւ պիտի սպասարկէ:

### Եվրափակող համադրում

Վերի դիտարկումները ամբողջացնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ հայերէնը ուսուցանողներուն: Ուսուցիչներուն:

Անցեալի մեր ուսուցիչները մտաւորական մեծություններ էին եւ, քիչեր բացառելով, իրենց նպաստը ունին սփիւռքահայ մշակոյթի կամ արեւմտահայ գրականութեան զարգացման մէջ՝ իրենց ստեղծագործական երկերով: Իւրաքանչիւրը անոնցմէ կը բերէր ոչ միայն համայնագիտական գիտելիքներ հայոց լեզուի ու մշակոյթի կամ գեղագիտութեան վերաբերեալ, այլեւ՝ իւրայատուկ ոճ ուսուցանելու եւ նիւթը հաղորդական ընելու եւ իրելու վկայ խօսելու, կենդանացնելու առարկաները: Մշակոյթի ու գրականութեան վարպետ արհեստավորներն էին ու իրենց վարպետութիւնը վարակող հաղորդականութեամբ մը կը խօսեցնէին մեռած անմահները: Այդ մթնոլորտն էր ու այդ անհատականութիւնները, որոնք Սփիւռքին տուին մտաւորական սերունդներ:

